




# ՀԱՅԻ ՏՐՈՒՅՆ

1975  
Պ



ՀԱ  
ՏԱՐԻ


# ԵԶՄԻԱԾԻ




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՌՈՅՑ  
Ս. ԵԶՄԻԱԾԻ

Փետրվար

1975



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



## ԽՐԵԱԳՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».  
Rédition de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS


Հանձնված է արտադրության 5/II 1975 թ.: Ստորագրված է տպագրության 12/III 1975 թ.:  
Տպագրական 4,62 մամոլ+3 մերդիք, բռնյա 80×84<sup>1</sup>/<sub>2</sub>, պատվեր 88

Մայր Արքու ս. Էջմիածնի տպարան, 1975 թ.

ՀՐԱՄԱՆԱԿ

S. S. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԱՎԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՑՈՑ



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՑՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



# ԳԵՐԱԳՈՒՅՆ Հոգևոր խորհուրդ

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարված Գերագույն հոգևոր խորհրդի ս. թ. փետրվարի 11-ի նիստում, քննության առնվելով Նորին Սրբության գահակալության քանամյակը հանդիսությամբ նշելու հարցը, ընդունվեցին հետևյալ որոշումները.


1. Նկատի ունենալով, որ այս տարին նվիրված է Ապրիլյան մեծ եղեռնի վաթունամյակի տիտոր ոգեկոչումին, Հայոց Հայրապետի գահակալության քանամյակը տոնել առաջիկա տարի՝ 1976 թվականի աշնանը, սրբալոյս մյուսոնի օրինության հանդիսավոր առիթով:

2. Մայր Աթոռում կազմել կենտրոնական հանձնաժողով, որի պարտականությունը լինի հայրապետական հոբելյանական հանդիսությունների կազմակերպումը:

3. Հոբելյանական հանդիսությունների և միջոցառումների մասին հետագայում առանձին հաղորդագրություն հրապարակել մամուլում:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՇՀՈՒՐԴ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,  
15-ը փետրվարի 1975 թ.





# Հ.Տիգրանիս

## ԱՐԹՈՒԻՆ ՀԱՏԻՑՑԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՈԻՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԷՇՄԻԱԾԻՆ»  
ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՍՆԱՄՑԱԿԸ

(Զեկույց՝ կարդացված 1974 թվականի նոյեմբերի  
27-ին Վեհարանում, հանդիսավոր նիստի ժամանակ)

1974 թվի հունվարին լրացակ Մայր Աթոռի պաշտոնաթերթ «ԷՇմիածին» ամսագրի հրատարակության երեսնամյակը:

«ԷՇմիածին»-ը 1944 թվականի հունվարին հրատարակվում էր որպես «Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ սրբոյ Էշմիածին, հրամանաւագգիր տեղակալի Ամենայն Հայոց Հայրապետութեան տ. Գևորգ արքեպիսկոպոսի»:

Հայատանում սովետական կարգերի հաստատման սուածին իսկ օրերից Մայր Աթոռի և հայրենին կառավարության միջև կատարված բանակցությունների հիման վրա Մայր Աթոռին իրավունք էր տրվում 1922 թվականին հրատարակել ամսագիր, ունենալ տպարան և վերաբանալ հոգմոր ճեմարանը:

Սակայն Գևորգ Զ կաթողիկոսի անվան և գործունեության հետ են կապված Մայր Աթոռ և Էշմիածին՝ մե՞ր օրերի հոգևոր, վանական-վարչական, կրթական-կազմակերպաշական պատասխանատու աշխատանքների սկզբանավորությունը և այդ թվում նաև պաշտոնաթերթի հրատարակությունը:

Գևորգ Զ-ը Գալուստ Կյուլպեմկյանին գրած իր նամակում այսպես էր բնութագրում «Էշմիածին» ամսագրի դերը հայ կյանքում. «Ամսագիրը արձագանքում է թե՛ հայրենին երկրի և թե՛ Սովետական Միության մեջ տեղի ունեցող բոլոր կարևոր երևոյթներին: Արձագանքում և լուսաբանում է սփյուռքի հայության ընդհանուր կյանքի երևոյթները: Տաղիս է բնաշխարին և ափյուռքի հայության և ննդիանրապես քոյլ եկեղեցիների եկեղեցական կյանքի կարևոր երևոյթների նկարագիրն ու լուսաբանությունը: Նա արձարծում է Հայ երկրի, Սովետական Միության և եկորոպական գրականության աշքի ընկանությունը»:




E. GERSERIAN  
CHICAGO

ԵՐԶԱԿԱԿԱՀԻՉՍԱՆԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԶՈՐԵՔՑԱՆ



«Էշմիածին» ամսագրի առաջին շապիկը  
(գործ՝ Ակարիչ Հակոբ Կոջոյանի)

խնդիրները, բնորոշելով նոցա արժեքավոր կողմերը և տպալ գրական դեմքերի գնահատականները: Ամսագիրը հրատարակում է հայ հին մատենագրական նորույթներ՝ տպալ նոցա ուսումնասիրությունը, այլև սովորական նոր գրական երկերի գրախտականները: Նա տպիս է հայրենադարձ ժողովով կյանքի տնտեսական մկարագիրը հայրենի երկրում, նորա տնտեսական



«Էշմիածին» ամսագրի առաջին տիտղոսաթերթը  
(գործ՝ Ակարիչ Հակոբ Կոչոյանի)

և հոգեկան վիճակը և նորա վերելքը բոլոր ասպարեզներում: Նա ծանոթացնում է հայությանը իր ղեկավարող սկզբունքների մեջ և համայն հայությանը կապում է իր միջոցով հայրենիքի և հայութեան ժողովորի մեջ: Ամսագիրը արձագանքում է նաև համամարդկային բնույթ կրող կարևորագույն հարցերին, որպիսին է համաշխարհային խաղաղության և ազգերի ու պետությունների համագործակցության և եղարարության հարցերը: Այսայիսի թերթի գոյության անհրաժեշտությունը, ընդհանուր առմամբ և մանավանդ սփյուռքի հարցերյան համար ինքնին հասկանալի է, որի ապացույցը հայրենի երկրի և սփյուռքի հայության դրական վերաբերմունքն է: Արդարև, ամսագրի հրատարակությունը ընդունվում էր մեծ խաղաղապությամբ և երախտագիտությամբ:

Ամսագրի Ա. համարում ազգընտիր տեղակալը «Հայ եկեղեցու պարտքը իր ժողովորի հանդեպ» առաջնորդող հոդվածում գրում էր.

«Հայ եկեղեցին օրինել է հայ ժողովորի հերոսական դիմակալության ոգին, Աերշնչել է ազգային անկախության գաղափարը, մշակել է ազգային ինքնագիտակցության գգացումը և խաչն ու Ավետարանը ձեռին, քաջակերպով հայ զորքը, դեպի հայություն է առաջնորդել նրան» («Էշմիածին», 1944, № 1, էջ 6—8):

Խաղաղ կյանքի տարիներին և հայ եկեղեցականներ իրենց նվիրել են

եկեղեցու պայծառացմանը, հիմնել են վաճքեր, նրանց կից դպրոցներ, գրի են առել հայ ժողովրդի պատմությունը, հարստացրել եկեղեցական գրականությունը, ճոխացրել հոգևոր տաղերգությունը:

Հայ եկեղեցին իր ժողովրդի նկատմամբ ունեցած սիրո և հոգատար վերաբերմունքի ցայտուն օրինակներ ցուցաբերեց նաև Հայրենական պատերազմում, հավատարիմ նախնաց ավանդներին: «Հայրենի երկրի և սիյութի հայ՝ ժողովրդ, եթե իրը հայ մարդ և իրը հայ ազգ ապրել կուզես, դի՛ր քո ձգտումներն ու հուզերը մեր մեծ հայրենիքի ու Հայրապետական Աթոռի առաջ, հավատալով, որ նրանք են սրտիդ սրբությունների և իշերի պահապանն ու կատարողը» («Էջմիածին», 1944, №№ VII—IX, էջ 3—4):

«Հայը, բացի Սովետական Հայաստանից, չունի ա՛յլ հայրենիք: Հայը Հայաստանից դուրս չունի ա՛յլ հաստատուն կովան, բայց եթե հայ եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ և. Էջմիածնի Հայրապետական Աթոռով» («Էջմիածին», 1944, № 1, էջ 6—8):

Ամսագրի հիմնական, կարևոր և առաջին խնդիրներից մեկը եղավ 1945 թվականի հունիսի 16-ին Մայր Աթոռում ազգային-եկեղեցական ժողովի գումարումը, հայրապետական ընտրության, օծման հանդիսությունների կազմակերպումը, որոնք լայնորեն արձանագրվեցին ամսագրի էջերում:

«Հայ եկեղեցին ցարդ բարոյական տեսակետով միասնական էր, բայց իրավական տեսակետից ոչ:—գորում է ամսագրում նորընտիր կայողիկուսը,—այսօր տեսա համերաշխության ոգին վերադարձ մեր մեջ» («Էջմիածին», 1945, №№ VI—VII, էջ 42):

Ամսագրը առաջինն էր, որ սիյութի և հայրենիքի միջև ստեղծեց սիրո, համագործակցության ոգեշունչ ու կենդանի կամուրջ, անքակտելի միություն՝ մրրկալ բաժանված հայության երկու մեծ հաստվածների միջև:

«Էջմիածին» ամսագրում տպագրվեցին մեծագործ Հայրապետի 56 կոնդակներ, բարոզներ, ճառեր, որոնք մեր ժամանակի եկեղեցական մատենագրության մարգարիտներն են, գաղափարական բովանդակության և արտահայտչական ձևերի գեղեցկության տեսակետներից: Այդ կոնդակներում միաժամանակ շոշափված-լուսաբանված են պայծառությամբ, հայրապետական նեղինակությամբ և իմաստությամբ մեր ազգային-եկեղեցական կյանքի մեծ իրադարձությունները, ժամանակակից հարցերը: Առաջին համագային, պատմական հշանակություն ունեցող հարցը, որի վրա լայնորեն կանգ է առնում ամսագրից, դա ներգաղթի հարցն էր: Հայոց Հայրապետը շերմորեն ողջունում էր կենտրոնական կառավարության և հայրենի պետության հայրենասիրական մեծ նախաձեռնությունը, պատմական որոշումը. «Դեպի երկիր, դեպի երկիր, ամեն ինչ ներգաղթի համար» հայրապետական կոչով ամսագրը դիմում էր արտասահմանի առաջնորդներին, ազգային մարմիններին և մամուլին կազմակերպելու հայ ժողովրդի ներգաղթի գործը («Էջմիածին», 1946, №№ VIII—X, էջ 3—4):

«Դարձե՞ք որդյանք իմ, դարձեք տունը ձեր հայրական, շարդեցեք մելի-ընդմիշտ օտար ժայռերի վրա գաղթացուաք ձեր դարավոր և վերադարձ շենշող հայրենիքը մեր:

Երևան տանող ուղին՝ դա հայ ժողովրդի դարավոր գաղթականությանը վերջ դնող ուղին է հանդիսանում: Ներգաղթի պետական որոշումը՝ դա հայ ժողովրդի փրկության մակուլյան է, որ վերջապես պիտի փրկի զարհութելի հավաքելության մատնված հայ ժողովրդի բեկորներին: Հոգեզմայլ է սիյութի պատմական հայրենադարձը: Ով բացահայտ թե գաղտնի դավեր է լարում

հայ սիրութի հայրենադարձի դեմ, նա ակամա դուրս է մնում հայ ժողովրդի ազգային-հոգևոր միասնականությունից»:

«Էջմիածին» ամսագրի անունը սերտորեն կապված է նաև արդիականության մեծագույն հարցի՝ խաղաղության համաշխարհային շարժման, եկեղեցու ու աշխարհի միջև դիալոգի հարցի հետ:

«Էջմիածին» ամսագրը խաղաղության շարժման ստեղծման առաջին խոհ օրերից, 1949 թվականից, իր գիտակից և դրական վերաբերմունքն է արտահայտել հօգուտ այդ շարժման:



«Էջմիածին» ամսագրի շապիկը  
(գործ՝ Ակարիչ Տարագրու Տեր-Վարդանյանի)

«Մենք այսօր,—գրում է ամսագրում Գևորգ Զ.-ը,—իրավունք չունենք լոելու, եթե համայն մարդկության ապագա անվտանգությունն ու խաղաղ կյանքի խոստումը ենթակա է վտանգի և տևական պատերազմից հոգեած մարդկությունը կանգնած է նոր պատերազմի, նոր թշվառության առաջ... Հայատանյաց եկեղեցին հավատարիմ իր ավանդական սկզբունքներին իր ձայնն է բարձրացնում խաղաղության օգտին:

Հայ ժողովուրդը, որ պատմական անցյալում լիապես ճաշակել է պատերազմի դատնությունը, որ՝ Սուաշին համաշխարհային պատերազմում մեկուկես միլիոն զոհ է տվել և Երկրորդ հայրենական պատերազմում իր հարազատների և բազմաթիվ սիրատուն զավակների կորուսն է ողբացել, խաղաղությունն է պահանջում»:

Բացի հիմնական այս հարցերից, «Էջմիածին» ամսագրը միշտ էլ իր



ԵՐԶԱՆԿԱՀԻՉԱՏԱԿ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆՑ

Էջերը սիրով տրամադրել է նկեղեցագիտական, պատմական, հայագիտական, բանասիրական, եկեղեցական արվեստի և պատմության նվիրված արժեքավոր հոդվածների հրատարակության:

Ամսագիրը դառնում է հայագիտական լուրջ հրատարակություն, «Արարատ»-ի հայագիտական ավանդությունների շարունակողն ու ժառանգորդը:

Առաջին համարում գիտական արժեք ներկայացնող բովանդակալից հոդվածներ, ուսումնասիրություններ են հրատարակել Ստ. Մալխաչյանը՝ «Հայերը ե՞ր են ընդունել քրիստոնեությունը», Հր. Աճառյանը՝ «Հայ տառերի գյուտի ստույգ թվականը», Գ. Լունյանը՝ «Հովհաննես վարդապետ Մրգուով» և այլն:

Այսուհետև հաջորդ համարներում ամսագրին իրենց աշխատակցությունն են բերել հայագիտական մտքի պայծառ ու վաստակավոր ներկայացուցիչներ, այդ թվում՝ բազմավաստակ գիտնական Գարեգին կաթողիկոս Հովհանիսը, Երվանդ Շահազիզը, Վարդետը՝ Ավ. Խանիսյանը, Արտավազդ արքեպ. Այուրմեյանը, Սիրաբիկի Տեր-Ներսեսյանը, Ար. Ալպոյանյանը, պրոֆ. Սո. Սուպելյանը, պրոֆ. Սիմոնովը, պրոֆ. Ա. Արքահամյանը, Արամ Երեմյանը, Հարություն Քյուրյանը, Նորայր և Դերենիկ Եպիսկոպոսները, Մայր Աթոռի միաբաններ Ռուբեն Եպիսկոպոս Դրամբյանը, Եղիշիկ Վարդապետը, հոգևոր ճեմարանի դասախոսները, Մինաս Մինասյանը, Հովհանիս Գրիգորյանը, Վ. Բդրյանը, Պատրիկը: Տարիների ընթացքում «Էջմիածին» ամսագրի շուրջ համախմբվեց այսպես հայագիտությամբ գրադարձ լուրջ գիտնականների մի հովու:

1868 թվականի հունվարին հրատարակվող Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթ «Արարատ»-ի Ա համարը անպանույն, փոքրիկ ու նիհար մի տեսրակ էր, ուր էջից բաղկացած, մինչ 1944 թվականին հրատարակվող «Էջմիածին» ամսագրի Ա համարը բաղկանում էր 52 մեծադիր, տպագրական էջերից, ուներ շքեղ շապիկ և տիտղոսաթերթ, գեղարվեստորեն ձևավորված անվանի նկարիչ Հակոբ Կոչոյանի կողմից: Ամսագրի հաջորդ տարիների գեղարվեստական ձևավորումը կատարել է նկարիչ Տարագրոս Տեր-Վարդանյանը:


«Էջմիածին» ամսագրի հրատարակությունը մշակութային ուշագրավ երեւույթ է հայ լրագրության պատմության և Մայր Աթոռի ժամանակակից տարեգրության մեջ, հայրենական մշակույթի ծաղկման այս փառանելու օրերին:

1955 թվականին, հոկտեմբերին, Ա. Լուսավորչի Աթոռու վրա էր բազմում Տ. Տ. Վազգեն Ա. Հայոց Հայրապետը, որը դեպի ս. Էջմիածին ունեցած իր պաշտամունքով և իրավ հայրենասիրությամբ շարունակում էր Գևորգ Զ-ի եկեղեցաշեն և հայրենասիրական գործունեությունը, երիտասարդական թափով, ավելի ընդարձակ արդյունավորությամբ և շքել իրագործումներով: Այդ գահակալությամբ մի նոր էջ էր բացվում Մայր Աթոռի ժամանակակից պատմության և հայ եկեղեցու մեր օրերի տարեգրության մեջ:

Այդ օրվանից անցել են աշխատանքի, կառուցումների, վերաշնուրական, հաջողությունների և դժվարությունների 19 տարիներ՝ լի հոգևոր, մշակութային, եկեղեցաշեն և հայրենանվեր ոգևորիչ իրագործումներով:

Այդ սրտառուց ճիգերի, կառուցումների, հաջողությունների և դժվարությունների կենդանի օրագրությունն է հանդիսացել «Էջմիածին» ամսագրը, հայրապետական կոնդակների, քարոզների, ելույթների, նամակների հրատարակություններով, որոնք միշտ զարդարել են ամսագրի առաջին էջերը, և որոնց միջոցով Հայոց Հայրապետը իր խոհերև ու ապրումները, իր հոգին

ու սիրտն է բացել իր հոգևոր զավակների առաջ, հայրապետական հեղինակությամբ ու իմաստությամբ, ընդհանրապես լավատեսությամբ և երթեան էլ դաստիարակմբ, բայց միշտ սիրով ու համբերությամբ: «Էջմիածին» ամսագիրը եղել է Հայոց արդի Հայրապետի սրտին ամենամոտ ձեռնարկը:



«Էջմիածին» ամսագիր շապիկ  
(գործ՝ ճարտարապետ Բաղդիկ Արգումանյանի)

Ն. Ս. Օծոյթյունն ամսագրի խմբագրության առաջ խնդիր է դրել հոգևոր սնունդ և ազգային-հայրենասիրական իրավ գիտակցություն տայ հայ ժողովրդին, պատկերել Մայր Աթոռի, միաբանության, հոգևոր ճեմարանի կյանքը իր բոլոր կողմերով, լայն կերպով արձագանքել ներքին թեմերի և սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքին, առանձին սիրով. ու կարևորությամբ ներկայացնել Արարատի հավերժական նայվածքի ներք հայրենի հողի վրա հոգևոր, մշակութային, տնտեսական ու պետական իր զարթունքը ապրող, երեկ նահատակված և այսօր հրաշափառապես հարություն առած մեր ժողովրդի կյանքը, արձագանքել միջնեկեղեցական հարաբերություններին և միաժամանակ ամսագրի էջերը լայնորեն բանալ հայ եկեղեցու պատմության, եկեղեցական մատենագրության ու արվեստի հետ աղերս ունեցող գիտական լուրջ հոդվածների և ուսումնակիրությունների առաջ:

Ամսագիրը ընթացել է Վեհափառ Հայրապետի գծած այս ուղիով: «Նա՝ է եղել իրական խմբագրապետը:»

Հայոց Հայրապետը հետևողականորեն և արթնամտությամբ հետևում, հնկում է ամսագրի հրատարակության վրա, մի հանգամանք, որը բարձրացնում է պատասխանատվության գգացումը խմբագրական աշխատանքում:

Ամեն մի բառ և նախադասություն անցնում է Հայոց Հայրապետի սրտի ու մտքի միջով, հասնելու համար իր զավակների սրտին ու գիտակցությանը, որպես «հայրապետական հրամանաւ» տպված խոսք և մտածում, պատզամ և օրինություն:

1956 թվականի հուլիսին, հայրապետական կարգադրությամբ, «Էշմիածին» ամսագրի խմբագրությունը Մայր Աթոռում ունենում էր իր առանձին, մասնավոր խմբագրական գրասենյակը՝ երեք մնայուն աշխատակիցներով՝ խմբագիր, մեկ մեքենագրող-սրբագրիչ և մեկ առարիչ: Ամսագրի տպարանակը 2000-ից բարձրացվում էր 3500-ի: Մեծ ուշադրություն էր դարձվում ամսագրի բովանդակությանը, հյութերի ընտրությանը, գեղարվեստական ձևավորմանը և տպագրության կանոնավորությանը: Ամսագրի գեղարվեստական ձևավորումը, Հայոց Հայրապետի ցուցմունքով, կատարում են ճարտարապետ Բաղդիկ Արգումանյանը և ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը:

Վեհափառ Հայրապետը իր գահակալության առաջին խև օրերից մտածում էր «Էշմիածին» ամսագրի խմբագրությունը օժտել նաև սեփական տպարանով: Մինչև 1961 թվականը ամսագիրը տպվում էր Երևանի տպարաններում:

Վազգեն Ա. Հայրապետը հոգեկան մեծ հրճվանքով և լավատեսությամբ գրում էր հայրապետական իր անդրամասիկ կուսակում.

«Մայր Աթոռի պաշտոնաթերթը պիտի շարունակե իր դերը կատարել ի միսիթարություն և ի դաստիարակություն մեր հավատացյալ ժողովուրդին և երբ Մեզ խոստացված նվիրատվությամբ հաջողինք Մայր Աթոռի տպարանը նիմնել, պիտի սկսինք հրատարակել նաև այլ պարբերականներ ու հոգևորեկեղեցական գրականություն և Մայր տաճարի զանգակները հաղթական պիտի դողանչեն և հորիզոնն հորիզոնն պիտի ավելան թե՝ այստեղ կենդանի է ս. Մեսրոպի ոգին և կամգուն՝ ս. Էշմիածինը՝ հայ ժողովուրդը լուսավորելու իր փառագարդ ճամփուն վրա» («Էշմիածին», 1956, № 2, էջ 5—6):

1961 թվականի հոկտեմբերին Ա.ՄՆ-ի հայոց նվիրատվությամբ բացվում էր Մայր Աթոռի տպարանը, «լուսի նոր վառարան մը մեր եկեղեցիին և համայն հայ ժողովուրդի կյանքին մեջ», նշում էր Հայոց Հայրապետը տպարանի բացման առթիվ գրած իր կոնդակում, 1961 թվականի հոկտեմբերի 16-ին:

Վազգեն Ա.-ը գահակալեց նոր ու ավելի նպաստավոր պայմաններում և ամսագրի առաջ դրեց այժմեական այլ խնդիրներ:

1956-ից սկսած «Էշմիածին» ամսագիրն ամենայն կարևորությամբ իր էջերը տրամադրում էր Վեհափառ Հայրապետի արտասահմանյան ուղևորությունների պատմական նշանակությանը, սիյուռի մեր ազգային-եկեղեցական կյանքի տարագրության մեջ, որպես ն. Ս. Օծուրյան գահակալությունը հատկանշող ու նշանավորող իրադարձություն:

Հայոց Հայրապետը արդարեն մեծ կարևորություն է տալիս արտասահմանյան իր այցելություններին: Ցանկանում էր անձամբ տանել Մայր Աթոռ ս. Էշմիածինի օրինություններն ու վերածնված Հայոց մայր հողի ու ժողովուրդի ողջույնները ախյուրքին, ծանոթանալ մեր ժողովուրդի ապրումներին, հույսերին, մտահոգություններին, իր հովանական այցելությամբ, քարոզներով միխարել, ոգևորել հայրենակարոտ հայության քեկորներին ու ամրապնդել կապը Մայր Աթոռի, ախյուրքի ու հայրենիքի միջև:

**Ս. Էշմիածին և մայր հայրենիք.** ահա երկու սրբություններ, որոնց ներշնչումով և տեսիլքով միայն հայ ախյուրքը կարող է գոյատել: Սփյուռքի

համար չկա ա՛յլ փրկարար ճանապարհ, եթե ոչ բոլոր հայ հոգիների եղբայրացուն ու միավորում Էջմիածնի լուսին ու հայրենիքի վեհ զգացումին մեջ:

Հայոց Հայրապետի համար մեր օրերի մեծագույն հրամայականը մայր հայրենիքից դուռ և հեռավոր ափերի վրա ապրող հայության ազգապահանան և գոյատևման հարցն է:

Ով այսօր իր հոգին չի լուսավորում և Էջմիածնից ճառագայթող լուսով և իր սիրով չի տաքացնում վերածնած հայրենիքի լուսավոր ապրումներով, ոչ մեկ բանով կարող է շերմանալ, հայանալ մանավանդ ու զորանալ: Սփյուռ-



«Էջմիածն» ամսագրի շապիկը  
(գործ՝ ճարտարապետ Բաղդիկ Սրբումանյանի)

թի հայության գիտակցության մեջ այս մտածումը արդեն ինկ հայրապետական ուղևորությունների առիթով բյուրեղացած հավատք, ապրում ու առաջնորդող ոգի է դարձել:

Ահա թե ինչո՞ւ «Էջմիածն» ամսագիրը իր էջերում ամենայն կարևորությամբ նշում էր, մեկնարանում հայրապետական ուղևորությունների ոչ միայն ազգային-եկեղեցական, այլ նաև մի՛ջեկեղեցական, մի՛ջեստական նշանակությունը, եթք Հայոց Հայրապետը նման առիթներով անհրաժեշտ էր համարում նաև, որպես հայ եկեղեցու գերագույն պետ և գլուխ, ներկայանալ իր այցելած երկրների պետական ու հոգևոր իշխանությանց ու լսել բարի վկայություններ հայ եկեղեցու, հայ ժողովրդի բարեմասնությանց մասին:

«Մայր Աթոռ և Էջմիածնին, այսօր և և հավետ պիտի ըլլա՛, ինչ որ եղած է ի սկզբանե, այսինքն, վե՛մ հավատքի, լո՛յս հոգիներու և պաշտպա՛ն հայրենյաց», պատգամում էր ամեն տեղ Հայոց Հայրապետը:

Ամսագրի էջերից Հայոց Հայրապետը միշտ նր խորքի ու պատգամը ուղղել է նաև սիրով և գորովով հայ եկեղեցու ուխտյալ ու հայրենասեր հոգեվորականությանը, շեշտելով նրա հոգևոր-պատմական, հայրենասիրական ու բրիստոնեական առաքելության վեհությունը, կոչման հերոսական քաղցրությունն ու երանությունը:

«Խնձ վսեմ և ի՞նչ գեղեցիկ է հոգևոր կոչումը քահանայական... աստվածային սիրո գործիքներ եք դուք ձեր հավատացյալներու ծոցին մեջ, ուսուցանող եք և դատիքարակ, սրբացնող և միսիթարող...»:

Հայոց Հայրապետը ամսագրում տպագրված նր եղութեարում, ճառերում միշտ էլ անդադարձել է այսօրվա աշխարհը և մարդկությունը հոգող ընկերային, բարոյական հարցերին, տագնապներին, դժվարություններին:

Մեր օրերում խաղաղության պաշտպանության հրամայականը և ճշմարիտ հայրենասիրությունը իրար լրացնող երկու լրսավոր ու ճշմարիտ սկզբունքներ են Հայոց Հայրապետի 19-ամյա գործունեության մեջ, Ավետարանի պատգամի և բրիստոնեական մտածողության լույսի մեջ պայծառացած:

«Խաղաղությունը կյանքի առողջ և ստեղծարար ուժերու ներդաշնակութեան զարգացող գոյավիճակն է արդարության լույսի տակ: Մեր օրերուն եքր մարդու հանճարը թոփք է առած հվաճելու համար հյութական տիեզերքը ամբողջ մինչև արև՝ աղբյուրը լույսին, ինչքան հրաշալի պիտի ըլլար տեսնել հաղթանակը նույն մարդուն բարոյական հանճարին, նվաճումը արդարության և խաղաղության լույսին, որ դարեր առաջ շողաց հավատքի և հույսի բարձունքներն, աշխարհին բերելով պատգամը Աստուծոն՝ «Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն», գրում է Հայոց Հայրապետը:

Միջեւելեցալան և միջանական հանդիպումների ժամանակ և միջազգային ամբիոններից Հայոց Հայրապետը, հաճախ խոսելով խաղաղության մասին, չէր մոռանում նաև հիշել ու դատապարտել 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը՝ հայկական Ապրիլյան եղեռնը, որին զոհ գնաց շորջ երկու միլիոն հայություն, ցեղասպանություն, որն անպատճ մնալով գաղափարապես և գործնականորեն, դուռ բացավ հետագա զարհութելի այլ ցեղասպանությունների:

«Երբեք գլուխ եկեղեցիի մը և կրոնապետը ժողովուրդի մը, որ անցյալին մեջ բազում անգամներ ահավոր չափերով զոհ գացած է ուրիշ պետություններու պատերազմներու ընթացքին, և մանավանդ 1915 թվին, Մենք շերմապես աղոթող ենք որ այսս և ոչ մեկ տեղ աշխարհի վրա չկրկնվին նման ողբերգություններ», հայտարարել է Հայոց Հայրապետը 1968 թվականի մայիսի 2-ին Նյու-Յորքում, ՄԱԿ-ի սրահում, պաշտոնական ընդունելության ժամանակ, ի ներկայության ավելի քան 20 պետությունների դեսպանների:

Հայրենասիրությունը Հայոց Հայրապետի սրտի ամենավառ զգացումներից մեկն է: Հայրենասեր Հայրապետը մեծ հոգումով և ապրումով պահում էր միշտ ամսագրի էջերից՝ նր զավակներին. «Այստեղ, մայր հողի վրա, վերջապես, հայր կշինե, կատեղծ իրեն համար: Կշինե իր ներկայի ու ոսկի ապագայի համար: Ամեն ինչ կմեկտեղվի, ամեն ինչ կկուտակվի, ամեն ինչ կան: Եվ ինչ որ այստեղ կշինվի, այդ կմնա մեզի՝ միայն:

Ու հայ հայրենիքի վերածննդյան այս օրերուն, Լուսավորչի անմար կանքեղն ալ, Արագածի կատարեն, սև ամպերեն ազատած, նոր շողակաթումներով, իր շնորհները կափու հայոց աշխարհին և հայաստանցիներուն, նոր կյանք առած՝ լուս խորան սրբազնասուրբ էջմիածնի օրինությամբ:

Ո՞չ երազ է այլս, և ո՞չ ալ պատրամք: Իրավ է, սիրելի՞ք, Մայր Հա-

յաստանը վերածնա՞ծ է այսօր, Մայր Հայաստանը խաղա՞ն է այսօր, Մայր Հայաստանը կապրի՝ կենապի, կապրի՝ կառուցելով, կկառուցե երգելով՝ ողբարձամբ Աստուծո նարց մերոց և աղոթքներով Հայաստանյաց առաքելական և եկեղեցվոյ: Հայ ժողովուրդը արցոնքով սերմանեց և այսօր ցընծությամբ և փառքով կհնձե»:



Մեր ժամանակաշրջանը հատկանշվում է նաև եկումենիկ շարժման աշխատացումով: Հայ եկեղեցին անդամ է ԵՀԽ-ին: Ամսագրի էջերում լայնորեն արձագանք է գտել եկումենիկ շարժման գործունեությունը Հայոց Հայրապետի գրած եկեղեցների միության մասին պատմական կոնդակի լուսի տակ:

Այո՛, Մայր Աթոռու այսօր դարձել է հայ եկեղեցու Վատիկանը, միջնեկեղական առումով:

Ինչպես տեսնում ենք հայրապետական կոնդակներից, քարոզներից, ելույթներից կատարված այս համառոտ ծաղկաքաղի մեջ, ամեն տեղ էր նա՛, Հայոց Հայրապետը, իր մեծ սրտով, մտքով ու խոնիքով: Նրա հայրապետական նայվածքից չի վրիպել երեք իր ժողովուրդին և եկեղեցուն վերաբերող ոչ մի ազգային ու միջնեկեղական իրադարձություն: Նրա լայն ու մեծ սիրոտը ընդգրկել է աշխարհի բոլոր հայարձնակ վայրերը՝ Անթիլիս, Երոսադեմ, Կ. Պոլիս, Եվրոպա, Բեռովոր Ամերիկաներ, Մերձավոր Արևելք, Աֆրիկա, Հնդկաստան և Ավստրալիա:

Վեհափառ Հայրապետի օրով «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը դառնում է նաև Մայր Աթոռի հրատարակչականը, ի պաշտոնե և ի կոչմանե:


Խմբագրության հսկողությամբ է հրատարակվում ամեն տարի Մայր Աթոռի տարեկան օրացույցը (14 մամուլ): Խմբագրությունն է պատրաստել և հրատարակել նաև հետևյալ աշխատությունները, խմբագրի Ա. Հատիտյանի գլխավորությամբ.

1. 1956 թվականին արտասահման նայրապետական Ս. ողևորությամբ գիրքը, 24 հրատա-  
րակչական մամուլ, պատկերազարդ, 332 էջ.
  2. 1958 թվականին Վեհափառ Հայրապետի ծննդյան 50-ամյակի առթիվ «Վազգեն Ա.  
Հայրապետ Հայոց», գիրք Ա, 29 հրատարակչական մամուլ, 402 էջ.
  3. 1960 թվականին «Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի երկրորդ ուղևորություն»-ը, 28 հրա-  
տարակչական մամուլ, 325 էջ.
  4. 1960 թվականին «Տաճա Կիլիկիո կաթողիկոսությունը պատմության լուսի տակ, հա-  
մառու ալմարկ», 8 մամուլ, 120 մեծադիր էջ.
  5. 1961 թվականին, Վազգեն կաթողիկոս, «Հոգերանության դասագիրք», 8 մամուլ,  
110 էջ.
  6. 1962 թվականին «Էջմիածին» արքուն, Բագերեն և ամգերեն լեզուներով, 8 մամուլ,  
90 էջ.
  7. 1966 թվականին Հակոբ Շ. Սիրունու «Հայ Ակնշեցին ուումն հողի վրա. Նիկոլա  
Ցորգա», 17 մամուլ, 266 էջ.
  8. 1968 թվականին Վեհափառ Հայրապետի ծննդյան 80-ամյակի առթիվ հայրապետա-  
կան կոնդակների, քարոզների, ճառիքի, նամակների հատումներով՝ «Վազգեն Ա. Հայրապետ  
Հայոց», գիրք Բ, 24 հրատարակչական մամուլ, 818 էջ.
  9. 1969 թվականին ուղևորության 8-րդ գիրքը, 28 հրատարակչական մամուլ, 290 էջ.
  10. Նոր Կոտակարան. Չորս Ավետարաններ և «Գործ առաքելոց» արևելաբայերեն  
թարգմանություն, թարգմանիչներ՝ Արթուր Հատիսյան, Պարզ Շահրապյան, Սամվել Ամթոս-  
յան, 14 հրատարակչական մամուլ, 472 էջ.
  11. 1971 թվականին «Էջմիածին» արքուն, Բ հրատարակություն, քարեփոխված, հայ-ռուս-  
անգլերեն լեզուներով, շորջ 100 մկար, 8 մամուլ, 100 էջ.
  12. «Արարատ» պաշտոնական ամսագիր հայրապետական Արթուր Ա. Էջմիածնի, 1868—  
1919, մատենագիտություն, կազմող՝ Սեղա Կոծիման, խմբագրողներ՝ Արթուր Հատիսյան,  
Սուրեն Քոլանջյան, 1970, 30 մամուլ, 290 մեծադիր էջ.
  13. «Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի իմաներորդ ուղևորություն»-ը:

Ուղևորության սույն հատորը կազմեցին և խմբագրեցին Արթուր Հատիսյանը և Պարզ Շահրապյանը, Սայր Արթուր Ստպարան, 1971, 19 մամուլ, պատկերազարդ, 308 էջ.

  14. Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյան, «Աթոռ Հայատանալաց», 1972, 5,5 տպագրական  
մամուլ, 85 էջ, Բ հրատարակություն.
  15. Արտակ եպիսկոպոս Սմբատյանց, «Սուրբ Էջմիածնի միարանության գրական-կլր-  
քական գրոծունեությունը և Սայր Արթուր տպարանը», հրատարակության պատրաստումը,  
ներածությունը, ծանոթագրությունները և հավելվածը՝ Սուրեն Քոլանջյանի և Արթուր Հա-  
տիսյանի, Սայր Արթուր տպարանի հիմնադրության 200-ամյակի առթիվ, 1978, պատկերա-  
զարդ, 184 մեծադիր էջ, 25 մամուլ:
- «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը պատրաստել է և այժմ մամուլի  
տակ են հետևյալ գործերը.
- ա) Ամրող Նոր Կոտակարան, աշխարհաբար թարգմանությամբ, Չորս Ավետարաններ  
և «Գործ առաքելոց», առաքելական թյօթը և Հայունություն. թարգմանիչներ՝ Արթուր Հա-  
տիսյան, Պարզ Շահրապյան, Սամվել Ամթոսյան, շորջ 24 տպագրական մամուլ.
  - բ) «Էջմիածն» ամսագրի 80 տպական հյութերի մատենագիտություն, կազմող՝ Սեղա Կո-  
ծիման, խմբագրողներ՝ Արթուր Հատիսյան, Սուրեն Քոլանջյան, շորջ 24 մամուլ:
- Մասնավոր կարևորությամբ պետք է նշել «Էջմիածին» ամսագրի հրա-  
տարակած բացառիկ համարները, եկեղեցական, ազգային մեծ տոների և  
համագույն հորելյանների առիթով:
1. 1955 թվականին հոկտեմբեր-դեկտեմբեր համարները ազգային-եկեղեցական ժողովի  
գումարման, կաթողիկոսական ընտրության, օծման, գահակալության և առաջին մյուսուն-  
օրինարարական համեմատությանց, պատկերազարդ.
  2. 1958 թվականին Վեհափառ Հայրապետի ծննդյան 50-ամյակին.
  3. 1962 թվականին Ա. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1800-ամյակին.
  4. 1962 թվականին ազգային-եկեղեցական ժողովի գումարման և երկրորդ մյուսունօրին-  
սության.
  5. 1965 թվականին Ապդիլյան Եղիոնի 50-ամյակին, 200 մեծադիր էջ ամսագրի.
  6. 1965 թվականին Վեհափառ Հայրապետի գամակալության 10-ամյակի հանդիսության  
և Սարիլյան Եղիոնի հուշարձանի բացմանը.

7. 1968 թվականին Ուկամբան Աստվածաշնչի տպագրության 800-ամյակին, 250 մեծա-  
դիր էջ ամսագրի.
8. 1987 թվականին Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին և նայ ժողովրդի ազ-  
գային վերածնուրյան 48-ամյակին.
9. 1968 թվականին Սարդարապատի հերոսամարտի 50-ամյակին.



10. Նոյն թվականին Սանամին և Հաղպատ վամքերի հիմնադրության 1000-ամյակին.
11. Վեհափառ Հայուապետի արտասահման կատարած Գ, Դ, Ե, Զ, Է ուղևորության.
12. 1988 թվականին «Արարատ» ամսագրի հրատարակության 100-ամյակին, 120 մեծա-  
դիր էջ.
13. Նոյն թվականի 2750-ամյակին.
14. Հովհաննես Թումանյանի և անմահ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակնե-  
րին.
15. Հայոց Հայրապետի ծննդյան 80-ամյակին, Խայսկոպոսական ժողովի հրավիրման և  
երրորդ մուտքնօրմնության հանդիսությանը.
16. S. Գարեգին Ա Վեհի ծննդյան 100-ամյակին.
17. «Եղմիածին» ամսագրի հրատարակության 25-ամյակին.

18. Առարկ վլոյ. Դավիթիմեցու մամվան 300-ամյակին.
19. Ներսէս Ե Աշտարակեցու ծննդյան 200-ամյակին.
20. ՍՍՀՄ կազմության 50-ամյակին.
21. Հայաստանում սովորական կարգերի հաստատման 50-ամյակին.
22. Խրիմյան Հայրիկի ծննդյան 150-ամյակին.
23. Հ. Պետր Աղիշտանի ծննդյան 150-ամյակին.
24. Կալկաթայի հայոց Մարդաբանական ճեմարանի հիմնադրության 150-ամյակին.
25. Մայր Աթոռի տպարամի հաստատման 200-ամյակին.
26. Ս. Ներսէս Ծննդինայու մամվան 800-ամյակին.



«Էջմիածին» ամսագրի շապիկը  
(գործ՝ Ակարիչ Գրիգոր Խանջյանի)

27. Հայ համարարքառային գրականությունը և հայ մատևագրության համարարքառ (Հ. Ս. Անապան):

Պետք է նշել նաև հայրապետական մի շարք կոնդակների առանձին, գեղարվեստական շքեղ ու ճաշակավոր ձևավորմամբ հրատարակությունը, օրինակ.

Հայրապետական Ս. կոնդակը. ձևավորումը՝ Ակարիչ Հակոբ Կոչոյանի.

Ս. Մեսրոպի ծննդյան հազարվեցհարյուրամյակի կոնդակը.

Ապրիլյան եղեննի հիսնամյակի կոնդակը.


Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակի կոնդակը և այլն:

Հայրապետական այս կոնդակների գեղարվեստական ձևավորումը կատարեցին ճարտարապետ Բաղրիկ Արգումանյանը և Ակարիչ Գրիգոր Խանջյանը:

Վազգեն Ա. Հայրապետի օրով «Էջմիածին»-ին իրենց թանկագին աշխատակցությունն են բերել Մայր Աթոռի միաբաններ տ. Հայկազուն, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսները, տ. Պարգև, տ. Հովհաննես, տ. Վահան, տ. Տիրապը, տ.



Արսեն, տ. Ներսես, տ. Նարեկ, տ. Գևորգ Եպիսկոպոսելքը, Անահիա և Նզ-  
միկ աբեղանելքը, Հովհաննես Մարտիրոսան և Ռուբեն Մարտիրոսյան ախա-  
քահանս հայրերը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ պրոֆ. Ա. Առա-  
քելյանը, պրոֆ. Ա. Ղարիբյանը, պրոֆ. Գր. Հակոբյանը, Արտ. Տիրացյանը,  
պրոֆ. Ա. Մելիքսեթյանը, պատմաբան Հովհ. Թոփոլյանը, հոգևոր ճեմարա-  
գի դասախոսներ Գր. Գրիշանը, Պ. Շահրապյանը, Ա. Անթոպանը, Խորենի  
Մելիսանեցյանը, Արամ Սահակյանը, Երվանդ Մելքոնյանը, Մայր Աթոռին  
առքերեր ճարտարապետական հանձնաժողովի անդամներ ճարտ. Միք.  
Մազմանյանը, պրոֆ. Կ. Ղաֆարյանը, պրոֆ. Վ. Հարությունյանը, Ռ. Խ-  
Մազմանյանը, պրոֆ. Կ. Ղաֆարյանը, պրոֆ. Վ. Հարությունյանը, Ռ. Խ-



րայելյանը, Ա. Գալիկյանը, գիտության, արվեստի ներկայացուցիչներ, Վար-  
պետը՝ Մարտիրոս Սարյանը, Մարիետա Շահինյանը, պրոֆ. Կ. Մելիք-Օհան-  
չյանյանը, պրոֆ. Եր. Տեր-Միմասյանը, պրոֆ. Վ. Առաքելյանը, Համո Հարու-  
թյունյանը, Խաչատրյան Կանյանը, Հարություն Թուրշյանը, Հովսեփ Ե-  
ղիազարյանը, Գեղամ Սարգսյանը, պրոֆ. Ա. Սահմանյանը, պրոֆ. Լևոն Մե-  
լիքսեթ-Բեկը, Կոստան Զարյանը, պրոֆ. Ռ. Աթայանը, Ալ. Հարությունյանը,  
Օհան Դուրյանը, Հ. Շ. Սիրունին, Զ. Սիրունին, Համաստեղը, Արամ Հայ-  
կազը, Վահե Հայկը, Հ. Քյուրտյանը, Ա. Պատմագրյանը՝ յորաքանչյուրն իր  
մասնագիտության գծով, իսկ սփյուռքի բարձրաստիճան հոգևորականներից՝  
Եղիշէ, Շնորհը պատրիարքները, Սերովեն, Բարգեն, Սիոն, Նորայր, Շահն  
արքեպիսկոպոսները, Զգոն, Զավեն, Արիս Եպիսկոպոսները և ուրիշներ:

Այստեղ առանձին կարևորությամբ պետք է հշեմ Մատենադարանի և  
ակադեմիայի տարեց և ապա երիտասարդ ու խոստումնալից մի խումբ մտա-

վորականների աշխատակցությունը, բռնորն էլ սիրված ու ճանաչված մտավորականներ, ինչպիսիք են պրոֆ. Ասատոր Մնացականյանը, պրոֆ. Գ. Արգարյանը, պրոֆ. Վազգեն Հակոբյանը, Հակոբ Անաստանյանը, Ս. Քոյանչյանը, Շոշիկ Շահնազարյանը, Օ. Եգանյանը, Ն. Թահմիջյանը, Հ. Մելքոնյանը, Ա. Տեր-Ղևոնյանը, Հ. Բարյթիկյանը, Ա. Մաթևոսյանը, Պ. Մուրադյանը, այլ մտավորականներ, Ռաֆիկ Խշնանյանը, Խաչիկ Սամվելյանը, Գևորգ Մադոյանը, Նշան Մուրադյանը, Գոհար Ազնավորյանը, Նինել Ուկանյանը, Հրավարդ Հակոբյանը, Բագրատ Ովորաբյանը, Արմինե Քյոշկերյանը, Խաչատոր Մուշեղյանը, Պիոն Հակոբյանը, Հայրիկ Մուրադյանը, Լևոն Բատիկյանը և ուրիշներ:

Արտագին շնորհակալություն բոլորին:

1965 թվականին, հայրապետական կարգադրությամբ, «Էջմիածին» ամսագիր խմբագրին օգնելու համար կազմվեց խմբագրական մի մարմին, Մայր Աթոռոյի միաբաններից, հոգևոր ճեմարանի դասախոսներից և այլ ծանոթ մոտավորականներից բաղկացած:

Այժմ Խմբագրական մարմնի անդամները և նև Հովհաննես ավագ քհԱ. Մարտիրյանը՝ տեսուչ հոգևոր ճեմարանի, պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Քոլանչյանը, բանասիրական գիտությունների թեկնածու և հոգևոր ճեմարանի դասախոս դոցենտ Սամվել Անդրոսյանը ու «Էջմիածն» ամսագրի քարտուղար և հոգևոր ճեմարանի դասախոս ու. Եզնիկ արդ. Պետրոսյանը: Խմբագրության մնացուն աշխատակիցն է, որպես ոճաբան և Վերատուգող սրբագրիչ, Վոլոդյա Աբրահամյանը: Խոկ Սարգսի Մարգարյանը 30 տարիների աշխատանք ունի ամսագրում որպես առաքիչ:

«Եջմիածին» ամսագիրը և Արա Խմբագիրը ամսագիրի հրատարակության 25-ամյակի առթիվ արժանացել են Հայոց Հայրապետի 1969 թվականի հունիսի 1 թվակիր օրինության կոնդակին և Խաղաղության պաշտպանության սովորական կոմիտեի 1969 թվականի մայիս 30 թվակիր պատվորին:

«Էջմիածին» ամսագրի հրատարակության 30-ամյակին նվիրված սույն զեկուցումը ավարտելուց առաջ, այս համեմատվոր աղիթով, սրտագին պարտականությունը ունեմ երախտագիտական և շնորհակալական խոսքեր ասելու որպես խմբագիր:

Մեր երախտագիտության և որդիխական խորը հարգանքի առաջին խոսքը պարտինք ուղղել լուսաբնակ S. S. Գևորգ Զ մեծագործ Հայրապետին, որը եղավ համազգային ու դարավոր այս հաստատության մեր օրերի վերակենդանության իմաստուն և հավատավոր նախաձեռնողը: 1945 թվականին ազգային-եկեղեցական ժողովում կարդացած իր զեկուցագրում նա նշում էր, որ ինը փաստորեն ակտում էր իր գործը «ոչնչից», բայց հավատորով ու տեսիլքով: Նա զահակալեց ու գործեց մեր եկեղեցու, ժողովորի և հայրենիքի կյանքում պատմական նշանակություն ունեցող վճռական ու բացառիկ իրադարձություններով հարուստ շրջանում և հանդիսացավ ստեղծված նոր կացության նոր և հազվագյուտ դեկապարը, և Մայր Աթոռող դրավ իր պատմական առաջնային բարձրության վրա:

Երախտագիտության ու շնորհակալության մեր երկրորդ խոսքը պար-  
տինք ուղղել, ի դեմք ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու  
գործերի խորհրդի, հայրենի հարազատ ու բարեխնամ կառավարությանը,  
որի օրինական, իրավական և գործնական օգնությամբ հրատարակվում է  
«Էջմիածին»-ը:

Սրտագին շնորհակալության խոր ուժեմք նաև ամսագրի նախկին խմբագիրներին ուղղված:

1944—1956 թվականներին «Էջմիածին» ամսագիրը ուսուցչ է պատրիարքագիր:

Ամսագիր առաջին խմբագիրն է եղել հարգելի պիտիք. Յունակը Յունակը յանը, նախկին Գլուրգյան մեմարանի սան, որն աշխատ ձեռնիստորեն խըսքագրել է ամսագիրը 1944—1948, ապա 1955—1956 հունիս թվականներին



և միաժամանակ որպես հոգևոր ճեմարանի դասախոս ու այնուհետև նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամ իր սրտագին աշակցությունն է բերել Մայր Աթոռի եկեղեցական-մշակութային, կրթական-դաստիարակչական, կազմակերպական աշխատանքներին, Գևորգ Զ և Վազգեն Ա կաթողիկոսների օրով:

Ամսագրի երկրորդ խմբագիրն է եղել ազնիվ մի մտավորական՝ Հովհաննես Կիսիբեկյանը, 1948—1950 թվականներին:

Ամսագրի երրորդ խմբագիրն է Եղիկ պրոֆ. Աշոտ Արքահամյանը, 1950—1955 թվականներին: Պրոֆ. Ս. Արքահամյանի անունը նույնպես կապված է Մայր Աթոռի հերկա պատմության հետ, որպես Գերագույն հոգևոր խորհրդի գլուխական քարտուղարի և հոգևոր ճեմարանի ռասանուսի:

1956 թվականի հունիսից մինչև այսօր, Վազգեն Ա. Հայրապետի գահակալության առաջին խկ օրերից, «Էջմիածին» ամսագիրը խմբագրել է Ար-

թուն Հատիտյանը, որի աշխատակցությունը, սակայն, ամսագրին սկսվել է 1952 թվականի հունվարից, որպես խմբագրի տեղակալ:

1952 թվականից սկսած նա գրել է ի մասնավորի ամսագրի բոլոր խըմքագրականները:

Մասնավոր և անկեղծ շնորհակալության խոսք ունեմ նաև Մայր Աթոռի տպարանի նախկին տեսուչ Խաչիկ Սամվելյանին, որը ոտքի կանգնեցրեց Մայր Աթոռի տպարանը, և արդի տեսուչ Մուկուչ Միհնասյանին, որը միաժամանակ ամսագրի տեխնիկական խմբագիրն է: Սրտագին շնորհակալություն նաև տպարանի ողջ աշխատավորությանը, որը մեծ սիրով և ուշադրությամբ կատարել է միշտ Ամենայն Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի տպագրական բոլոր հանձնարարությունները և առաջին հերթին՝ «Էջմիածին» ամսագրի հրատարակության գործը:

«Էջմիածին» ամսագրի հրատարակության 30-ամյակի առթիվ մեր ամենախոնարհ ու որդիական հարգանքն ու երախտագիտությունը մի անգամ ևս ներկայացնում ենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ու կրկնում հավատարմության ու ծառայության մեր ուխտը՝ իր բարձր դեկավարության և օրինության ներքո շարունակելու մեր էլ համեստ սպասը՝ ի նպաստ հայ մշակույթի, ի պայծառություն Մայր Աթոռ և Էջմիածին:

«ԶԲոյս ի Քոյոց Քեզ մատուցանեմք», Հայոց արի և բարի Հայրապետ:





## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԵՐ

«Էջմիածին» ամսագրի հրատարակության 30-ամյակի առթիվ ստացվել են շնորհավորական բազում հեռագրեր և ողջունի ջերմ խոսքեր՝ գնահատանքի արտահայտություններով և նրա ապագա գործունեության սրտագին բարեմաղթություններով:

Այս կապակցությամբ հրատարակում ենք վերոհիշյալ ողջունի խոսքերից մի քանիսը:

Չերմ շնորհակալություն բոլորին:

**«ԷջՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ԹՈՒՐԳԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ  
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ**

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակության երեսնամյակին առիթով կուղարկենք մեր ողջունի խոսքը՝ գնահատելով անոր կրոնա-բարոյական, պատմա-բանասիրական մեծ դերը:

Թող լուս իշնե ամսագրի հիմնադիր Գևորգ Զ կաթողիկոսի հոգվոյն և երկար պահէ Աստված արևը Չերդ Սուրբ Օծության, որ ամսագիրը հասցուց իր այսօրվան բարձր մակարդակին:

«Էջմիածին» ամսագրի հրատարակության երեսնամյակի առիթով խմբագրության կմաղթենք երկար տարիներ՝ շարունակելու եկեղեցական-մշակութային իր կարևոր ծառայությունը մեր եկեղեցին և մեր ժողովուրդին:

**ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ  
Տ. ԿՈՄԻՏԱՍԱ ԱՐՔԵՊ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ  
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ**

Բացառիկ որախ առիթ է, որ նշում ենք Մայր Աթոռ ս. Եջմիածնի պաշտոնաթերթ «Եջմիածն» ամսագրի հրատարակության 30-ամյակը: Ընդունված կարգ է, որ, ի գնահատություն մարդու, հոբելյանական հանդիսություններ կատարվեն նրա կյանքի որոշ հանգրվաններին, եթե տվյալ անձնավորությունն իր կենդանության օրոք կարողացել է Տիրոջ կողմից շնորհված քանքարը տանապատճել ու հարցորապատճել՝ ներդնելով դրանք իր ժողովորդի հոգևոր, բարոյական և, ինչու չէ նաև, նյութական արժեքները հարցստացնելու ազնիվ գործի մեջ:



Հորելյանական հանդիսություններն առավել նշանակություն ու հանգամանք են ստանում, երբ կատարվում են հետմահու, երբեմն դարեր անցնելուց հետո: Դա նշանակում է, որ այդ մարդիկ կարողացել են հայտահարել ամեն ինչ հարթեցնող «մահվան» ու մնալ «կենդանի» իրենց ժողովոդի ու երբեմն էլ աշխարհի երանելիների պանթեոնում: Արժանանալ այդ պատվին կարողանում են անշուշտ քիչ բացառություններ: Ահա թե ինչու այդպիսի բացառությունների ոգեկոչումի առջև մենք՝ տկարներս ու սովորականի մակարդակից այն կողմ անցնել չկարողացողներս, հիացմունքի ու երբեմն էլ պաշտամունքի աստիճանի հասնող երախտագիտության զգացում ենք ունենում:

Սլոր պարագան ուրիշ է սակավն: Մի անհատի գործի առաջ չե, որ կանգնել ենք, այլ մի խումբ մարդկանց տքնածան ու ազնիվ աշխատանքն իր մեջ ամփոփող ու ամբողջ այդ հավաքական աշխատանքի երեսուն տարվա պատկերն արտացոլող «Էջմիածին» ամսագրի հրատարակման երեսնամյակի առաջ, մեր գնահատանքի ու երախտագիտության խորը ասելու այս երջանիկ առիթով:



S. Ներսես սրբազն պատրիարք Բայրոց Երուսաղեմի

Մեր ժողովողի պատմության ամենից ճակատագրական մի թվականին՝ գերմանական ֆաշիզմի դեմ մղվող կյանքի ու մահվան պայքարի ամենալենջ օրերին՝ 1944 թվականին, Բայրութի կառավարության բարեհաճ թույլտվությամբ Ամենայն Հայոց Հայրապետությունը սկսեց հրատարակել «Էջմիածին» ամսագիրը, որը և բոլորեց իր հրատարակության երեսուն տարին, Բոգուր, Կրոնական, բարոյական ու հայրենասիրական ոգի ու հավատք բաշխելով մեր ժողովրդին, որպես մասունք ու հաղորդություն, և լուս տանելով աշխարհի քառուղիներում աստղերի հովոյ հման սփոված մեր եկեղեցու զավակներին և յուղ՝ հրանց առկայօն կանթեղներին:

Մեր երախտագիտությունն ու որդիական հարգանքը երջանկահիշատակ S. S. Գևորգ Զ կաթողիկոսի հիշատակին, որ մղիչ ուժը եղավ ամսագրի հրատարակության:

Մեր խորին շնորհակալությունները նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին, որը կենդանի ու լուսավոր պահեց ամսագիրը մեր օրերում: Մեր հարգանքն ու շնորհակալությունները ամսագրի նախակին երկու խըմ-

բագիրներին՝ պրոֆ. Առաքել Առաքելյանին և պրոֆ. Աշոտ Արքահամյանին, որոնք ծանր պայմաններում ձեռնիասորեն խմբագրեցին ամսագիրը:

Մեր չերմ ու սրտագին շնորհակալությունները ներկա խմբագիր Արթուր Հասիտյանին, որը մեծ նվիրումով և անխոնջ աշխատանքով փառքի պատվանդանին է հասցրել «Էջմիածին» ամսագիրը մեր օրերում:

Թող Տերը իր հովանու տակ պահի «Էջմիածին» ամսագիրը և նրա աշխատողներին: Ամեն:



Տ. Օհանես սրբազն պատրիարք Բայրո Կ. Պոլսի

**ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ  
ԹԵՍԽԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ.  
ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ**

Հայ մամուլի պատմությունը, որ սկիզբ առավ 1794 թվականին Հնդկաստանի Մահրաս քաղաքին մեջ, Հարություն քահանա Շմավոնյանի խմբագրած «Ազդարար» ամսագրով, կրովանդակե շատ առավ նյութեր հայ ժողովուրդի մշակութային, կրթական, գրական գանձարանը հարստացնող, ինչպես նաև ազգային-եկեղեցական, ընկերային-քաղաքական կացությունները նկարագրող:

Այդ տարեգրության մեջ շատ նշանակալի դեր ունեցավ նաև հայ կրոնական մամուլը: Երուսաղեմի սրբոց Հակոբյանց միաբանության պաշտոնաթերթ «Սիոն» ամսագիրը, երկար ընդհատումով մը թեև, ամբողջ հիսունութ տարի (1868—1876 և 1927-են մինչև մեր օրերը) հրամցուց ազգային, քանակի ամենաշատ գրագիտական և նույնիսկ քաղաքական նյութեր: Իր երախտաշատ

նպաստը բերավ նաև «Արարատ» ամսագիրը 1868—1919 թվականներուն, իբրև աշխատահրություն միաբանից առաքելական Մայր Աթոռու Հայաստանյաց և Էջմիածնի:



«Էջմիածն» ամսագիրի խմբագրական կազմը

Հետագային հրապարակ իշան Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ» (1932), Հարավային Ամերիկայի հայոց առաջնորդության պաշտոնաթերթ «Հայ Կեդրոն» (1932) և Ամերիկայի հայոց առաջնորդարանի պաշտոնաթերթ «Հայաստանյաց Եկեղեցի» (1939) ամսագիրները, առավելապես կրոնական, գրական, բանասիրական և նկարագրական էջերով:

Իսկ «Էջմիածն», իրու պաշտոնաթերթ-ամսագիր Հայրապետական Աթոռու և Էջմիածնի, նախ 12 թիվ հրատարակվեցավ 1920 տարվա ընթացքին և ապա 1944-ին, գնահատելի ջանքերովը երջանկահիշատակ Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսի, սկսավ լույս տեսնել: «Էջմիածն» ամսագիրը շարտանակեց ավանդապահ իր նախորդին՝ «Արարատ»-ի առաքելությունը, ընկերային և բաղաքական տարրեր պայմաններու մեջ: Առավել ևս «Էջմիածն» ամսագիրը պատեհություն ունեցավ արձագանք ըլլալու հայրենի պետության, հայ ժողովորդի վերազարթնումին, հայ մշակույթի ծաղկումին, մեծ հայրենադարձին և հայ մարդերու ամեն ասպարեզներու մեջ կատարած սրանչելի նվաճումներուն:

Ամերիկայի գույգ թեմերու շուրջ յոթանատուն համայնքային եկեղեցիներու մեջ, հոգևորականներ և հասարակական կյանքի մեջ գործուն շատ անձեր

մտքի և հոգիի սնունդ կատանան «Էջմիածին»-ի էջերուն բերված քրիստոնեական բարոյախոսության, ազգային-եկեղեցական իրագործումներուն, հայկական ժառանգությանց ու բանամիրության նվիրված գրություններեն և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբազն կոնդակներեն, քարոզներեն և պատգամներեն:

Այս հոգեշնեն պարագան մենք գոհունակությամբ կիշշատակենք անգամ մը ևս՝ նկատի ունենալով, որ շուտով Մայր Աթոռի մեջ մասնավոր հանդիսադրությամբ պիտի նշվի «Էջմիածին» ամսագրի հրատարակության երեսնամյակը: Պատշաճ իր հորելանը ողջունելով, սրտագին կմաղթենք, որ պաշտոնաթերթ «Էջմիածին»-ը շարունակի լույսին գալ անդադրում ու բերե հայրենի երկրի և սիյուրի տարածքին վրա ապրող հայրենասեր և եկեղեցանվեր ընթերցողներուն՝ այս օրերուն այնքան կարնոր բարոյական ըմբռնումներու և հայրենիքի ամեն ճակատներու վրա տարված հայրանակներուն համապատկերը: Ասիկա, կհավատանք, ավելի ևս պիտի ամրացնե օղակը միության՝ ընդ մեջ աշխարհի ծագերուն կայք հաստատած հայ ժողովուրդին և պատմական հայրենիքի ու Ամենայն Հայոց Հայրապետության՝ Բէջմիածին:

Այս ոգիով չերմապես կշնորհավորենք «Էջմիածին» ամսագրի հրատարակության երեսնամյակը և կուգենք հավատալ, թե անոր խմբագիրն ու աշխատակիցները նույնքան նվիրումով և խանդով պիտի կարենան ճոխացյալ բովանդակությամբ զայն դարձնել բազում կարդացողներուն անբաժանելի ընկերը՝ մտքի և հոգիի լուսավորության համար:

### ՈՐԻՄԻՆԻԱՅԻ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՏԻՐԱՅՅՐ ԵՊՍ. ՄԱՐՏԻԿՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Մենք, որ նեռունեն-հեռու կիետսինք ձեր թափած ջանքերուն՝ հանուն հայ գրին ու մշակույթին, բացադիկ երջանկություն մը կսեպենք գալ անձամբ ալ շնչել սույն խանդապատ մթնոլորտը, որովհետև համոզված ենք, որ բոլոր կապերուն մեջ, զոր մարդիկ ունին իրենց ճիգերը միացնելու համար, մշակույթը ամենանվերական և ամենաուժեղն է հայ ժողովուրդի բոլոր խավերուն և բոլոր հատվածներուն միջն հոգեկան շաղախ դառնալու համար:

Եթե մարդոց միջն ստեղծված կապերեն շատերը վաղանցով են, հայ եկեղեցվո և մշակույթի ստեղծած կապը հավերժական է: Այդ հոգեսոր կապն է, որ ոչ միայն կմիացնե մեզ ենրկա օրերուն հայ ժողովուրդի բոլոր հատվածներուն հետ, այլ նաև այն կհանդիսանա կամուրջ մը անցյալ դարերուն և վաղվան գալիք բոլոր հայ սերունդներուն հետն ալ:

Հայաստանյայց եկեղեցին մշտապես եղած է ու կմնա հայ գրին, դպրության և մշակույթին սրբազն տունն ու մշտավառ կանթեղը: Հակառակ հագարամյա մշտահոլով փոթորիկներու, ան իր տաքով ծոցին մեջ պահեց և պահպանեց մեսրոպատառ մեր մայրենին, մեր մագաղաթյա մատյաններն ու պատառիկները, մեր «ի խորց սրտի» արձակված երգն ու աղոթքը:

Գիրը Հայաստանյայց եկեղեցվո մշտանորդ կենսահյութն է: Անիկա գրով նորոգած է ինքն իրեն և իր հավատացյալ ժողովուրդին: Այդպես եղած է անցյալին, այդպես է նաև մեր օրերուն: Վատահությամբ և հպարտությամբ

այսօր կրնանք ըսել, թէ այդ նվիրական գործը առավելագույնն կկատարն «Էջմիածին» ամսագիրը, որուն երեսնամյակն է, որ կրողրվի:

Հստակ ու հայտնի է, թէ ինչ կարևոր դեր է վերապահված անոր և ինչ հաջողությամբ կիրագործն ան իր դերը: Համուն հայ ժողովուրդին, որ որ ալ ըլլա անհեկա, «Էջմիածին»-ը զմայելի վայելչությամբ կհասցնե հայրապետական ազգաշեն ու հայրենանվեր պատգամներ, հոգենորդ հորդորներ, մեր երջանկահիշատակ հախնեներուն հոգին և մորքին ամեննեն լուսավոր մըրմունքներն ու ճառագայթումները:

Աստվածային Բանին զուգընթաց, անոր Էջերուն կը ներեցվին հայ պատմության, գիտության, մշակույթին, արվեստներուն, հայ համեմարին հոգևոր և հոգութեղեն ստեղծագործություններուն վերաբերող շահեկան ու արժեքավոր շատ խոսքեր: Ան ամենայն իրավամբ կշարունակե ու կզարդացնե պահածի «Արարատ»-ին մեծ գործը: «Էջմիածին»-ը դեռ շատ պիտի խոսի հավատավոր և հայրենակարոտ հոգիներուն:

Մեր որդիական երախտագիտական խոսքը այս առիթով կը սենք երջանիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի հիշատակին, որ իմաստությունն ունեցավ հիմնելու «Էջմիածին» ամսագիրը:

Մեր որդիական խորը սիրո տուրքը կմասուցենք Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին, որ իմաստնորեն կղեկավարե և կտօնորին անոր երթն ու առաքելությունը:

Շնորհակալության խոսքով պիտի շնորհավորել նաև անոր խմբագիրները, հատկապես ժողազան ու քաղցրախոս պրն. Արթուր Հատիտյանին:

Բարի երթ, սիրելի «Էջմիածին»:

## ԱԴՐԵՋԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

1868 թվականին երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Դ կաթողիկոսը ս. Էջմիածնում, ի շարու այլ կարևոր գործերի, հիմք դրեց նաև «Արարատ» ամսագրին: Հազիկ «Արարատ» ամսագիրը բոլորել էր իր 50-ամյակը, երբ առաջին համաշխարհային պատերազմի թոհուրուի ավարտին՝ 1919 թ., հայ ժողովրդի շատ արժեքների մետ միասին կորցրինք նաև «Արարատ» ամսագիրը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթական վերջին օրերին՝ 1944 թ. հունվարին, ս. Էջմիածնում ազգընտիր տեղակալ Նորին Ամենապատվություն տ. Գևորգ արքեպիսկոպոս Զորեքչյանը հիմնադրեց «Էջմիածին» ամսագիրը:

Մայր Աթոռի երկրորդ պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրն արժանավորապես փոխարինեց իր նախորդին՝ «Արարատ»-ին, մեր օրերի եկեղեցու կյանքի ներկա պայմաններում՝ բավարարելով հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր, հայրենասիրական պահանջները:

1946 թ. երբ ես, որպես ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի սան, ուսանում էի ս. Էջմիածնում, «Էջմիածին» ամսագիրը երկու տարեկան էր: Այսօր ես իրավունք ունեմ հսկարտությամբ աւելու, որ ինչպես «Էջմիածին» ամսագիրը տարիների մետ աճեց, ես էլ աճեցի ս. Էջմիածնում նրա մետ՝ սնվելով նաև նրա էջերից, և մետագայում դարձա նրա 23-ամյա համեստ աշխատակիցը:

«Էջմիածին» ամսագրի 30-ամյա կյանքը և նրա Էջերում հրատարակված բազմազան հոդվածները մեր եկեղեցու պատմության ու հայ քանասիրության

տեսակետից արժեքավոր են: Նրա մատուցած ծառայությունները մեր հոգևոր մշակույթի ուսումնասիրության ուղղությամբ գնահատելի և ուսանելի են: Ամսագիրը լայնորեն արձագանքել է Մայր Աթոռի, միաբանության, հոգևոր ճեմարանի և մեր բոյոր թեմերի կյանքին և գործունեությանը:

«Էջմիածին» ամսագրի կատարած դերը նաև խաղաղության պաշտպանության սրբազն գործում, Հայոց Հայրապետի թեկադրությամբ և օրհնությամբ, արժանի է գնահատանքի:

«Էջմիածին» ամսագրի էջերում լայնորեն արձագանք են գտել նաև ԱԷջմիածին-հայրենիք-սփյուռք հարաբերությունները, ինչպես նաև հայրենիքի վերածնունդն ու մեր ժողովրդի հոգևոր, մշակութային զարթոնքը բոլոր բնագավառներում:

Մեր սրտի և հոգու պարտքն է՝ մեր երախտագիտությունը հայտնել ամսագրի նախկին և այժմյան խմբագիրներին, որոնք ամեն ինչ արին, որպեսզի ամսագիրը միշտ բարձր մնա իր առաքելության վրա:

Հազար արև և օրհնություններ «Էջմիածին» ամսագրին: Վատահ ենք և հավատում ենք, որ քանի կա հայոց վերածնված մայր հայրենիքը, կանգուն ու պայծառ է հավիտենական և Էջմիածինը և կենդանի է հայ ժողովուրդը, պիտի ապրի ու հարատիկ նաև մեր պաշտելի ամսագրը՝ «Էջմիածին»-ը, քանզի նրա արմատները հարազատ Արարատյան դաշտում խորն են այնպես, ինչպես և Էջմիածնի տաճարի հաստանելուն օրինյալ հիմքերը:

Ողջո՞ւն և փա՞ռ «Էջմիածին» ամսագրի ՅՈՒ-ամյակին:

## ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԾԱՔՍ.ՌՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Երախտագիտությամբ ենք դիմավորում Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակության ՅՕ-ամյակը ոչ միայն որպես հոգևոր-հիմացական սենյամատակարարի, այլև հոբելյարի:

Մեր որդիական երախտագիտությունն ամենից առաջ երջանկահիշատակ S. S. Գևորգ Զ հեռատես և բանիմաց Հայրապետին, որի ազգընտիր տեղակալության շրջանին, 1944 թվականի հունվարից, սկսվել է հրատարակվել այս պարբերաթերթը՝ որպես «Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ և Էջմիածնի»:

Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթ «Արարատ» ամսագիրը հրատարակվել էր 1868—1919 թվականներին: 1944 թվականից իր վերազարդումը էր ապրում Մայր Աթոռ և Էջմիածինը: Վերածնվում էր նաև Մայր Աթոռի պաշտոնաթերթը, որն իր թափը ստացավ մանավանդ S. S. Վազգեն Ա. Հայրապետի արժանավոր գահակալությունից հետո: Այս հաճելի առիթով մեր երախտագիտությունն ու շնորհավորանքը և որդիական հարգանքը նաև մեր սիրելի Հայրապետին Հայոց:

Հոգևոր-եկեղեցական կյանք, հայրենասիրություն, եկումենիզմ, խաղաղություն, պատմա-բանասիրական, գրական ու երաժշտական և այլ բազում ընդգրկումներ,—ահա ինչ բովանդակությամբ և մտահորիզոնվ ամեն ամիս ներկայանում է մեզ «Էջմիածին» ամսագրը, որին մենք սպասում ենք անհամբերությամբ և ընթերցում գերագույն հաճուքով: Այն մեկ աղոթք է, մեկ՝ հայրապետական պատգամ, օրհնություն ու կոնդակ, մեկ՝ պատմություն, մեկ՝ Մայր Աթոռ, մեկ՝ եկեղեցական թեմերի կյանք ու գործունեություն, սփյուռք՝

իր հաջողություններով և մտահոգություններով, նաև հոգևոր ճեմարանի առօրյա և նրա սաների առաջին գրական-բանափառական թոթովանքներ ու հաճախ հայր մշակույթի և պատմության անդաստանի կարկառությունների պատմական իրադարձությունների հոբելյանական հանդիսություններ:

«Էջմիածին» ամսագիրը պայծառ տարեգրությունն է Մայր Աթոռի և մեր եկեղեցու ու ժողովրդի վերջին 30 տարիների կյանքի և գործունեության:

Ս. Էջմիածին պաշտոնաթերթը հոգևոր կամորթ է նաև հետավորի և մերձավորի միջև, Մայր Աթոռ ու Էջմիածին և Հայոց պատասխան մրու Աթոռների, թեմների, հայրենիքի և սիրության միջև: Ամսագիրը իր շորջն է բոլորում և՝ ընթերցողներին, և՝ հավատացյալներին՝ բաշխելով հրանց Ավետարանի առասլուս ու հայրենասիրության ճշմարիտ ոգին:

Որպես եկեղեցու մեկ պահապորը, մենք հպարտ ենք իրենով՝ Մայր Աթոռ ու Էջմիածին «Էջմիածին» պաշտոնաթերթով: «Հատուցեք իրաքանչիր զպարտս... և մի ուժեք պարտապահ գտանիցիք, բայց զմիմեանս սիրելոյ» (Հոռ. ԺԳ 7—8):

Մեր գնահատանքի խոսքը նաև ամսաթերթի ինչպես առաջին և հարգելի իմ խմբագիներ պրոֆ. Ս. Առաքելյանին, Լուս Կիսիբեկյանին և պրոֆ. Աշոտ Արքահամյանին, այնպես էլ և Արթոն Հատիտյանին, որը 1956 թվականի հունիսից մեծ սիրով և բանիմացությամբ խմբագրում է ամսագիրն ու ձեռնինաստրեն ղեկավարում Մայր Աթոռի հրատարակչական ամրող գործը մեծ արդյունավորությամբ:

«Էջմիածին»-ի միմբն ամոր է և հորիզոն՝ բաց: Մենք հավատում ենք, որ հետայսու էլ «Հրամանա Տ. Տ. Վազգենի Առաջնոյ Վեհափառ և Սրբազնագրուն կաթողիկոսի Ամենայն Հայոց» և գործակցությամբ խմբագրի ու մասնակցությամբ խմբագրական մարմնի անդամների, նա միշտ մնալու է նվաճված բարձրության վրա, որպես Հայոց Հայրապետի կենդանի ձայնն ու խոսքը, որպես կրոնա-քարոյական և պատմա-բանասիրական ամսագիր շարունակելով նաև իր լուսը սփռելով հայ հավատավոր հոգիների և մոքերի վրա՝ ջերմացնելով բոլորին:

Հանոն Ծիրակի թեմի, մեր ջերմ շնորհավորանքները և ողջույններն ամսագրի 30-ամյակին, խմբագիր Արթոն Հատիտյանին, որն իր սիրուն ու հոգին դրած ունի աշխատանքի մեջ, ժրաշան խմբագրական մարմնին, ամսագրի հոգևորական ու աշխարհական բոլոր աշխատակիցներին, «Էջմիածին»-ն այդպես գեղեցիկ ձևավորող Ըկարիչներին, Մայր Աթոռի տպարանի աշխատողներին, բոլորին, բոլորին:

Բազում հոբելյաններ նաև քեզ, սիրելի իմ «Էջմիածին», և օրինություններ քեզ Ծիրակի թեմից, որն ամեն ամիս անհամերությամբ սպասում է հերթական համարիդ հրատարակությամբ:

Կեցցե՛ երեսնամյա «Էջմիածին»-ը:

Որպես վերջաբան, սիրելի «Էջմիածին»,

«Թույլ տուր ինձի,

Մեծ ակումիտ, անհուն մոնազ,

Քեզ քերելով երախտիքի

Խաչքուն այս շինչ

Ուկի արտեն ցորեններու,

Զոր օր մը դուն, ափով արդար,

Ցանեցիր մեր հոգիներուն»:

(Եղիկարդ, Ս. Մեսրոպ, Երուսաղեմ, 1962, էջ 112):


**ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԳԵՎՈՐԳ  
ԵՊՍ. ՍԵՐԱՅԻՆԱՐՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ**

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ամբողջ հայության ուշադրությունը սևոված էր ս. Էջմիածնի աղոթքներին՝ «Վասն հայրենեաց ազատագրութեան և խաղաղութեան ամենայն աշխարհի»: Հայոց աղոթքն ընդունվեց և կամորն Աստուծո «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը հայոց քաջորդիներով ու եղբայրական ժողովուրդների արհական շանքերով մաքրեց հայրենի հողը թշնամիներից:

Ահա այս ծանր տարիներին հիմնվեց «Էջմիածին» ամսագիրը, որն առաջին ավելացներից մեկը եղավ՝ հայ ժողովուրդին տալով հաղթության և խաղության ավետիս:

Երեսուն խաղաղ տարիներ են անցել այն օրվանից: Եվ այսօր, տոնելով «Էջմիածին» ամսագրի 30-ամյակը, ցանկանում ենք նորանոր հաջողություններ խաղաղ պայմաններում առավել պայծառանալու հավատավոր հայի որոշությունը ու զարկերակը հանդիսացող «Էջմիածին» ամսագիրը:

Բարձր գնահատելով «Արարատ» ամսագրի շարունակությունը հանդիսացող «Էջմիածին» ամսագրի 30-ամյա գործունեությունը, ցանկանում ենք ամսագրի բոլոր աշխատակիցներին նորանոր հաջողություններ՝ հոգևոր, հայունասիրական, խաղաղասիրական ոգու ամրապնդման բարձր գործունեության մեջ:





# Խաղաղության ՀԱՄԱՅՆ

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԾԱԳԱՐՑԱՆ

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ «ԷՇՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԷԶԵՐՈՒՄ

Խաղաղության պաշտպանության հարցն արդիականության կարևորագույն խնդիրներից մեկն է, որն արդարորեն հոգում է ամբողջ մարդկությանը, այդ թվում նաև քրիստոնեական աշխարհը համայն:

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էշմիածին» ամսագիրը խաղաղության պաշտպանության հարցը համարել է իր սրտին մոտ խնդիր և իր էջերը լայնորեն տրամադրել այդ կնճական հարցի պաշտպանությանը:

Խաղաղությունն Աստուծո կամքն է և ոյխոն աշխարհի և մարդկության հետ. «Ուխտ իմ որ ընդ համա, ոյսու կենաց և խաղաղութեան» (Մադաքիա Բ 5):

Հայատանիաց եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էշմիածինի գլխավորությամբ, հասկանում է, թե ինչ են հշանակում խաղաղության պաշտպանությունն ու նրա կարևորությունը և անհրաժեշտությունը նաև մեր ժողովոյի կյանքում:

Հայրենական պատերազմից հետո, երբ սկիզբ առավ խաղաղության պաշտպանության շարժումը, Մայր Աթոռը և Հայոց Հայրապետները շերմորեն մասնակցել են հանուն խաղաղության պաշտպանության կատարած միջազգային, միջեկեղեցական համագումարներին, ասել հօգուտ խաղաղության իրենց կենդանի խոսքը:

Այդ խոսքը եղել է սուրբ Ավետարանի խաղաղության երկնապարգև պատգամների ճշմարիտ արտահայտությունը:

«Էշմիածին» ամսագրում տպագրվել են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետների՝ հօգուտ խաղաղության պաշտպանության արտասանած ճառերը, նրանց եղութեարը միջազգային բեմերից խաղաղությանը նվիրված:

S. S. Գևորգ Զ և S. S. Վազգեն Ա. Հայրապետները հաճախ անձամբ մասնակցել են խաղաղության կոնֆերանսների՝ ի գլուխ հայ եկեղեցու պատվիրակություններին: Խաղաղության այդ համագումարներին իրենց կարևոր մասնակցությունն են բերել նաև սիյուռքի հայ եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչները:

«Էշմիածին» ամսագիրն իր էջերում հաճախ իր խմբագրականներով անդրադարձել է խաղաղության պաշտպանության հարցերին: Հիշենք խաղաղության ի նպաստ ամսագրի բազում խմբագրականներից մի քանիցը.

Խաղաղության պատգամը (1952, Ա 3).

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի (1952, Գ 18).

Հայ եկեղեցին խաղաղության համար պարարի ճակատում (1952, Ե 7).

Հանուն խաղաղության (1955, Ե 3).

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի (1959, է 3)։

Հանուն խաղաղության (1960, ը 3)։

Եւ լերկիր խաղաղութիւն (1961, է 3)։

Խաղաղության համաշխարհային վեճածողով Մոսկվայում (1962, ը 3)։

Կյանքի և խաղաղության ուսուր (1964, ը—թ 19)։

Խաղաղությունը Աստուծո կամքն է (1969, է—ը 3)։

Խաղաղությունը Աստուծո պարգևն է և մարդկության կամքը (1973, ԺԱ 3)։

«Էջմիածին» ամսագիրը Խաղաղության պաշտպանության ճակատում վերնագրի տակ տարիներ շարունակ, 1949 թվականից սկսած, հասուկ էշ է բացել նաև՝ հանգամանորեն ներկայացնելու համար մայր հայությունում և մեր հանրապետության սահմաններից դուրս խաղաղության համար տարվող բոլոր շաների ու միջազգային կոնֆերանսների նոյնականությունում։

Մայր Աթոռի պաշտպանաթերթը, խոսելով խաղաղության պաշտպանության հարցերի մասին, միաժամանակ մտահոգված է եղել հայ ժողովրդի և մեր եկեղեցու, մեր վերածնված Հայոց աշխարհի անվտանգության, պահպանության ու խաղաղության հարցերով։

1949 թ. Ստոկհոլմի խաղաղության պաշտպանության կոնֆերանսի կոչով սկիզբ առավ խաղաղության պաշտպանության համաշխարհային շարժումը։ Այդ շարժման անդրանիկ կոչը լայն արձագանք գտավ նաև հայ հավատացյալ ժողովրդի սրտում։ Հայաստանյաց առաքելական եկեղեցին, Ամենայն Հայոց Հայրապետության թելադրությամբ և գլխավորությամբ, իր խաղաղափառական ձայնը միացրեց՝ աշխարհում խաղաղություն պահանջող բարի կամքի տեր բազմամիլիոն մարդկանց ձայնի։

Հայաստանյաց առաքելական եկեղեցին խաղաղության շարժման ստեղծման առաջին իսկ օրից իր գիտակից և դրական վերաբերմունքն է արտահայտել հօգուտ այդ շարժմանը, որովհետև հայ եկեղեցին միշտ էլ խաղաղության կողմնակից է եղել իր ողջ պատմության ընթացքում։ Հայ ժողովրդի և հայ եկեղեցու համար հարցերի հարցն է խաղաղության պաշտպանության անհրաժեշտությունը։ Խաղաղությունն Աստուծո կամքն է և պատգամը։ Աստուծո ուսուր աշխարհի և մարդկության հետ՝ կյանքի և խաղաղության ուսուր է։ «Ուսուր իմ, որ ընդ նմա կենաց և խաղաղութեան» (Մահարիա Բ 5)։

Այս մտածումների լուսի տակ 1949 թվականին խաղաղության պաշտպանության ի

նպաստ և Էջմիածնից հնչեց Գևորգ Զ երշամակիշտակ Հայոց Հայրապետի ձայնը։ «Մենք այսօր իրավունք չունենք լույսու, երբ համայն մարդկության ապագա անվտանգությունը և խաղաղ կյանքի խոստումը ենթակա են վտանգի, և տևական պատերազմից հոգնած մարդկությունը կանգնած է նոր պատերազմի, նոր թշվառությանց առաջ։ Մենք այսօր իրավունք չունենք լույսու, այլ պարտավոր ենք հանդես գալու և ուժգնացնելու բողոքը կայուն պատերազմի դեմ, որը հակասում է համարյա ամբողջ մարդկությունը հայության դավանած կողմնակից սիրու և եղայրության գաղափարին, մարդկության դավանած բարոյական սկզբունքներին և շահերին։

Նոյն թվականի ապրիլին Գևորգ Զ կաթողիկոսը հասուկ գրությամբ դիմում էր հայ եկեղեցու նվիրապետական մյուս Աթոռութերին՝ Տաճան Կիլիկիո Գարեգին կաթողիկոսին, Երոսաղեմի և Կ. Պոլսի հայոց պատրիարքական Աթոռութերին, բոլոր թեմակալ առաջնորդներին և կոչ էր անում. «Ըստ ամենայնի զորավիգ լինել խաղաղության կողմնակիցների համաշխարհային խորհրդին, հնչեցնել իրենց ձայնը բոլոր նրանց դեմ, որոնք ձգտում են նոր պատերազմ հրահրել, և միացնել իրենց ձայնը բոլոր նրանց ձայներին, որոնք իրենց աստվածահան գրություններով ձգտում են կասեցնել մարդկության զլիսին կախված նոր արհավիրքը» («Էջմիածին», 1950, Գ—Դ 3)։

Այդ նոյն օրերին Գևորգ Զ կաթողիկոսն Արևմտյան Եվրոպայի թեմերի հայոց հայրապետական պատվիրակ Ա. Արտավազդ արքապիսկոպոս Սյուրբեանին հանձնարարում էր Մայր Աթոռի, հայ եկեղեցու և հայ ժողովրդի անունից հանդես գալ Փարիզում գումարված խաղաղության կողմնակիցների առաջին կոնֆերանսում և ջերմորեն պաշտպանել հրա խաղաղափառական միջոցառումներն ու իդեալները. «Հայաստանյաց առաքելական եկեղեցին,—գրում էր Գևորգ Զ-ը,—հավատարիմ իր ավանդական սկզբունքներին, իր ձայնն է բարձրացնում խաղաղության օգտին և անվերապահ միանում է խաղաղության կողմնակիցների համաշխարհային ասամբելայի մշտական կոմիտեի Ստոկհոլմի նատարչանի բանաձեռներին։ Պատերազմ՝ նշանակում է միինուազոր մարդկանց մահ, շեն բաղաքների և մշակության արժեքավոր ստեղծագործությունների ոչնչացում։ Խաղաղություն՝ նշանակում է ապրել, ստեղծագործել և երջանիկ կյանք վարել։ Հայ ժողովուրդը, որը պատմական անցյալում լիազես ճաշակել է պատերազմի դառնությունը, որ՝ առաջին համաշխարհա-

յին պատերազմում մեկովես միլիոն զռի է տվել և երկրորդ հարյունական պատերազմում իր հարազատների և բազմաթիվ սիրառուն զավակների կորուստն է ողբացել, խաղաղություն է պահանջում»:



1950 թվականի ապրիլի 12-ին Մայր Աթոռ ս. Էջմիածնի Գերագոյն հոգևոր խորհուրդը և իր ձայնն էր բարձրացնում հանուն խաղաղության պաշտպանության:

1950 թ. հունիսի 29-ին Գևորգ Զ կաթողիկոսը հայրապետական իր համաձայնությունը տվեց Հայկ. ՍՍՀ խաղաղության կողմնակիցների հանրապետական հանձնաժողովի առողջական գենքն արգելելու ստորագրությունների հավաքման որոշմանը և նոյն տարվա հունիսին առանձին մրացագամավորություն ուղարկեց Շնոտպավակիան՝ Լոգաչովիցայում գումարված քրիստոնեական եկեղեցիների կոնֆերանսին՝ Էջմիածնի միարան տ. Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանի գլխավորությամբ:

1950 թ. օգոստոսի 5-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում հրապարակվեց Սովորական և համայն Ռուսիի Պատրիարք Տ. Ալեքսի, համայն Վրաց Պատրիարք-

կաթողիկոս Տ. Կալիստրատի և Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ի միաձայն դիմումը՝ ուղղված քրիստոնյա աշխարհին՝ պաքարելու հանուն խաղաղության:

Քրիստոնեական երեք եկեղեցիների պետքի սույն կոչը լայն արձագանք գտավ և առ հայ հավատացյալ ժողովրդի մեջ, ինչպես նաև հայ հոգևորականության բոլոր խալերում:

Այդ օրերին Ռուսիայի հայոց առաջնորդ տ. Վազգեն Եպիսկոպոս Պավլանը, այժմյան Ամենայն Հայոց կաթողիկոսը, արտահայտելով ափյուռքի ողջ հայ հոգևորականության մտահոգություններն ու իղձերը, գրում էր Գևորգ Զ կաթողիկոսին. «Մի թարության և ոգևորության զգացումներով սոգորվեցավ իմ և մեր հավատացյալների հոգիները՝ կարդապով այն սրտաշարժ կրչը, որ օգոստոսի 5-ին Ձեր Վեհափառությունը, համայն Ռուսի Պատրիարք Ալեքսի և համայն Վրաց կաթողիկոս Կալիստրատի նետ միասնաբար ուղղած եք աշխարհի բոլոր քրիստոնյաներուն խաղաղության պաշտպանության, ընդուն բոլոր անոնց, որոնք դավեր կայութեն ժողովրդներու կյանքի խաղաղ զարգացման դեմ» («Էջմիածն», 1950, թ 27):

Նոյն թվականի հոկտեմբերի 12-ին Սովորական գումարվող խաղաղության կողմնակիցների համամիտության կոնֆերենցիայի պատզամավոր ընտրվեց Գևորգ Զ-ը Սովորական Հայաստանի ժողովրդի կողմից: Այնուհետև կոնֆերանսում նա ընտրվեց խաղաղության պաշտպանության սովորական կոմիտեի անդամ և կոնֆերանսում ունեցած իր պատմական եղությունը շարադրեց խաղաղության նկատմամբ քրիստոնեական սկզբունքը Ավելատարանի պատգամների լուսի տակ՝ դատապարտելով պատերազմը և շեշտելով. «Պատերազմի հրձիգները ի՞նչ բարյական իրավունք ունեն մարդու այդ բարձրագույն եւակի կամքի ինտեր խաղաղությունը»:

Այնուհետև, հետագա տարիներին, մինչև իր մահը, 1954-ի մայիսը, Գևորգ Զ կաթողիկոսը միշտ մասնակցեց խաղաղության ինպատ գումարված կոնֆերանսներին և իր ձայնը բարձրացրեց քրիստոնեական լավատեսությամբ այն մասնի, որ «կամ ծամանակ, երբ պատերազմի միտքն ու ծրագիրը կմտնեն և կանչանան, և մարդկությունը կազատվի նոցա մղճավանջից և կհանգըստանա»:

1955 թվականից սկսած հայ եկեղեցու նոր Հայրապետը՝ Տ. Տ. Վազգեն Ա-ն, անշեղունեն և ավելի մեծ արդյունավորությամբ ու երիտասարդական կորուպով շարունակում է իր նախորդի նաև խաղաղասիրական ու

մարդասիրական գործունեությունը՝ հօգուտ խաղաղության:

Հայոց ամժան կաթողիկոսի 20-ամյա գործունեության մեջ խաղաղության պաշտպանության հրամայականը և ճշմարիտ հայտենասիրությունն իրար լրացնող երկու լուսավոր և իրավ սկզբունքներ են Սվետարանի խաղաղության պատգամի և քրիստոնեական մարդասիրության լույսի մեջ պայծառացած:

1959 թ. հունիսի 15-ին Հայոց Հայրապետը ջերմագին ողերդ է հողում Ստովորինի խաղաղության համաշխարհային կոնֆերանսին՝ նշելով. «Հանուն հայ եկեղեցին և մեր հավատացյալ ժողովուրդին մենք ի սրտեւ կմադթենք ճեզ լիակատար հաջողություն ի միմիթարություն և հուրախություն բոլոր ժողովուրդներուն: Մենք ևս, ոգեշնչված նոյն լիդեալներով, բոլոր եկեղեցիների կողքին, կոչ կը նենք պետություններու մեծարող դեկապարներուն լսել համայն մարդկության խոնի ձայնը և սրբությամբ պահպանել խաղաղության աստվածառաք պատգամը, արգիլել ամեն տեսակի ատոմական գեներերու գործածություն և փորձարկումներ ու աշխարհի վրա վերջնականապես հաստատել վիճելի հարցերը փոխադարձ հասկացողությամբ և արդարությամբ լուծելու փրկարար և կենարար կանոնը:

Ամեն բանի մասին կարելի է տարակարծիք ըլլալ և վիճիլ. խաղաղությունը, սակայն, վեր պեսք է ըլլա ամեն վեճել և դառնա բոլորին համար մոռածելու և գործելու գերագույն կանոն՝ ամեն տեսակի հարցերը լուծելու:

1959 թ. մայիսի 26-ին Հայոց Հայրապետը Սուվորյան մասնակցում էր խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի համագումարին, որ հանդես էր գալիս բովանդակալից ճառով՝ նշելով. «Խաղաղությունը կյանքի առողջ և ստեղծարար ուժերու ներդաշնակորեն զարգացող գոյակինակն է արդարության լույսի տակ: Մեր օրերուն, երբ մարդու հանճարը թոհշը է առած նվաճելու համար նյութական տիեզերքը ամբողջ, մինչև արև՝ աղբյուրը լույսին, ինչքան հրաշալի պիտի ըլլար տեսնել հաղթանակը նույն մարդու բարոյական հանճարին, նվաճումը արդարության և խաղաղության լույսին, որ դարեր առաջ շողաց հավատքի և հույսի բարձունքներեն՝ աշխարհին բերելով պատգամը Սաստուն. «Յերևանի խաղաղութիւնը և ի մարդիկ հաճութիւնը»:

1959 թ. հունվարի 13-ին Հայոց Հայրապետը և Էջմիածնից ողջովածի խոր էր ողողում, հօգուտ խաղաղության, ՍՍՀՄ Միջնարդության սովետի համագամհին և ԱՄՆ-ի պրեզիդենտին՝ նշելով. «Մենք ի մասնավո-

րի կողշունենք Սովետական Միության մեծարգ վարչապետին և Միացյալ Նահանգաց մեծարգ նախագահին, որոնք պատմական այս օրերին կպատրաստվին համայն մարդկության մասուցելու բոլոր ժամանակներու մեծագույն և ամենաթանկագին ընծան՝ խաղաղությունը, ամբողջական և տնական խաղաղությունը՝ բոլոր ժողովուրդուն, բոլոր երկիրներուն:

Պատերազմ գուժող մոայլ ամերը տակավ ցրվում են անա, և մարդկային կյանքի երկնակամարը սկսում է պայծառանալը»:

1961 թ. հունիսի 13-ին Հայոց Հայրապետը, ի գոյս հայ եկեղեցու մի մեծ պատգամավորության, մասնակցում էր Պրագայի համաքրիստոնեական համաշխարհային խաղաղության կոնգրեսին, որ հանդես էր գալիս հունիսի 14-ին «Խաղաղությունն և քրիստոնեական արդարություն» թեմայի շուրջ բովանդակալից ճառով՝ նշելով. «Աստարակույս, առանց արդարության, մարդկային անհատի և հավաքականությանց համար կարելի չէ ապահովել կյանքի մեջ խաղաղ գոյավիճակ: Խաղաղությունը կյանքի առողջ և շինարար ուժերի, ժամանակների հոլովությով հետզինեւն վերանորոգվող ու զարգացող ուժերի ներդաշնակ գոյավիճակն է՝ արդարության բարոյական օրենքի լույսի տակ... Այսպես է, որ կարելի կիմքի ստեղծել մարդկային կյանքի մեջ արդար հարաբերություններ և արդար պայմաններ»:

Հետագա տարիներին ևս Հայոց Հայրապետի համաձայնությամբ Մայր Աթոռի զանազան պատգամավորություններ միշտ մասնակցել են Պրագայի և այլուր կայացած խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսներին և ասել իրենց խոսքը՝ ի պաշտպանություն խաղաղության:

1962 թ. հունիսի 13-ին Հայոց Հայրապետը Զագրոսկում մասնակցում էր ընդհանուր զինաբանման և խաղաղության պաշտպանության հարցերին նվիրված համաշխարհային մեծ համագումարին, որ հանդես էր գալիս դարձալ մեծ ճառով՝ նշելով, «Քրիստոնեությունը ինքը խաղաղության և մարդասիրության մի առաքելություն է մարդկային աշխարհի մեջ: Հետևարար, երկրուի և անսուգության մեջ տառապող այսօրվա մարդկությանը՝ պարտինք մասնավանդ մենք՝ հոգևորականներս, ցույց տալ խաղաղության և ամբողջական զինաբանման ճանապարհը: Սուտնական դարաշրջանի պայմանների մեջ այլևս կարելի չէ քրիստոնյա լինել, մարդ լինել և խաղաղության դատին պաշտպան չհանդիսանալ և չգործել խաղաղության հաղթանակի համար:

Ոչ մեկ ընկերային, քաղաքական, ազգային կամ միջազգային հարց այլևս կարելի

չէ լուծել պատերազմով: Պատերազմի հնարավորությունը պեսք է մարդկային կանքի մոտածությունը դուրս կանչել իբրև միջազգային իրավունքի գերագույն կանոն»:

## Ս.Տ. ՎԱՀՈԳԵՆ Ա ՀԱՅՐԱՎԻՇՏԻ ԲԱՆԵՐՈՐԴ ՈՒՆԿՈՒԹԻՆՑՅՈՒՆԸ



ԽՄՀ ՀՀ Սահմանադրության  
1971

1965 թ. հունիսի 12-ին Հայոց Հայրապետության դաշտավայրության մասնակցության էր Հեղսինիի խաղաղության համաժողովին, որը գումարվել էր՝ քննարկելու համար խաղաղության հարցի բոլոր կողմերը համաշխարհային ներկա պայմանների մեջ, մասնական Վիետնամում բորբոքվող պատերազմի առնչությամբ: Այստեղ ևս Հայոց Հայրապետության համար կազմակերպության պաշտպանության ի նպաստ մեծ ճառով՝ շեշտելով. «Ընդդիմանալ պատերազմին, կնշանակե հապատակի Սաստուծ կամքին: Մարդկությունը կրնա և պետք է ապրի առանց պատերազմներու»:

Միջնեղեցական և միջակետական հանդիպումների ժամանակ և միջազգային ամբողջական, խուելով խաղաղության մասին, Հայոց Հայրապետությունը չէր մոռանում նաև հիշելով ու դատապարտել 20-րդ դարի առաջին ցեղազանությունը՝ հայկական Ասքիլան եղեղնը, որին, ինչպես նշվեց, զոհ գնաց մեկուեա միջին հայություն, ցեղասպանությունը:

թյուն, որը, գաղափարապես և գործնականապես անպատճ մնալով, դրու բացավ, ինչպես գիտենք, այլ զարհութելի ցեղազանությունների: «Եթեն զոհին եկեղեցին մը և կրոնապետը ժողովուրդի մը, որ անցյալի մեջ բազում անձանները ահավոր ջարդերով զոհ գացած է որիշ պետություններու պատերազմներու ընթացքին և մասնական 1915 թ., մենք չերմասպես աղոթող ենք, որ այլս ոչ մեկ տեղ աշխարհի վրա չկրկնվեն նման ողբերգություններ», — հայտարարել է Հայոց Հայրապետությունը 1968 թ. մայիսի 2-ին Նյու-Յորքում ՄԱԿ-ի դահլիճում պաշտոնական ընդունելության ժամանակ, ի ներկայության ավելի քան 20 պետությունների դեսպանների: Ահա թե ինչո՞ւ, եզրակացնում է Հայոց Հայրապետությունը, «հայ եկեղեցին և մեր հավատացյալ ժողովուրդը, և Հօմիածնի գիշավորությամբ, հայրենիքում և սփյուռքում, կանգնած է եղել և շարունակում է կանգնած մնալ հայ ժողովուրդի և հայրենիքի գերագույն իդեալի՝ խաղաղության պաշտպանության դիրքերում»:

1969 թ. սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 2-ը Հօմիածնում գումարվեց հայ եկեղեցու եպիսկոպոսաց ժողովը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց կաթողիկոսի: Սույն ժողովին ներկա են եղել 25 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ:

Եպիսկոպոսաց ժողովի օրակարգի կարեւոր հարցերից մեկն է եղել նաև «Հայատանայաց եկեղեցին և աշխարհի խաղաղության ամրապնդումը» հարցը, որի մասին ընդարձակ զեկուցումով հանդիս է եկեղեց, հանուն ժողովի, Գերագույն հոգևոր խորհրդի առենապետ և Հօմիածնի Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազոն արքեպիսկոպոս Արքահամբանը: Եպիսկոպոսաց ժողովը միաձայնությամբ ընդունել է խաղաղության պաշտպանության ի նպաստ հետևյալ բանաձև-կոչը:

«Մենք պատվեր կտանք մեր եկեղեցվու պահապորներուն և հավատացյալներուն արթուր և սրտեռանուն կերպով պաշտպան կանգնել աշխարհի խաղաղության, ժողովուրդներու բարեկամության և պետություններու համերաշխ գործակցության դատին, իրավունքի, արդարության և պատության նվիրական սկզբունքներու լույսին ներքո»:

Ինչպես բովանդակ մարդկությունը, այնպես էլ հայ հավատացյալ ժողովուրդը հասկանում են խաղաղության պաշտպանության կենսական անհրաժեշտությունը: Ահա թե ինչո՞ւ խաղաղության օգտին ծավալված շարժումը մեզ համար ևս ունի համաշխարհային նշանակություն և համաժողովրդական գործի բնույթը: Ահա թե ինչո՞ւ նաև Մայր Աթոռու պաշտոնաթերթը լայնորեն իր էջերն

էր տրամադրում խաղաղության պաշտպանության հետ կապված ամեն մի իրադարձության:

Դարեր շարունակ մեր եկեղեցու կամարների տակ միշտ հնչել են խաղաղության օրինագներն ու պեղուաները, և մեր պապերը երկուղածորներ ու սրբությամբ աղոթել են՝ «Զի լուսցին պատերազմումք, դադարեսցին յարձակումք թշնամաց, տմկեցի սէր և արդարութիւն ի լերկրի...», որպեսզի գալիք երշանիկ օրերին, ըստ Եսայի մարգարեի՝ «Եւ ձուսցեն զուտերն իրեանց ի խոփս, և զուինս իրեանց ի մանգաս, ոչ առնու ազգ յազգի վերայ սոր, և ոչ ևս ուսանիցին տալ պատերազմ» (Եսայի Բ 4):


Մենք համոզված ենք, որ խաղաղությունը, սերն ու աշխատանքը կհայթնեն պատերազմին, և արդարությունն ու իրավունքը կրառնան խաղաղասեր ազնիվ ժողովուրդների սեփականությունը սորբ:

1969 թվականի հունիսի 4-ին ոռու եկեղեցու հոգևոր կենտրոն Զագորուկում Վեհափառ Հայուապետը խաղաղության համաժողովի նր ելույթում այդպես էլ նշել է. «Արդ, չերմ եռանդով աղոթենք և Աստուծո ողոր-

մությունը հայցենք, որպեսզի պահպանվի խաղաղ համագործակցությունն աշխարհի վրա, բոլոր ժողովուրդների միջև: Զբարարվենք սակայն միայն աղոթքով: Աստված պետք է տեսնե, որ մենք արժանի ենք նր ողորմության: Մենք կենդանի գործով արդարացնենք զմեզ Աստուծո դատաստանի առջև: Զգանք և գիտակցենք, թե մենք, եկեղեցիներու և կրոնական հաստատություններու դեկապարներու, պատասխանաւորվության բաժին ունինք այսօրվան ստեղծված այս վտանգավոր կացության առջև, ჩետևարար հովն չափով գտնեն պարտականությունը ունինք մեր կենդանի գործով միջամտելու, կանգնեցնելու համար պատերազմի մեքենան և վերացնելու համար բոլոր այն պատճառները, որոնք ժողովուրդներու միջև թշնամության և ատելության որոմը կցանեն»:

Այս գիտակցությամբ և հավատով է գործել և աշխատել նաև «Էշմիածին» ամսագիրը՝ իր գործոն մասնակցությունը բերելով խաղաղության դատի պաշտպանությանը՝ սուաչնորդվելով նաև մեր եկեղեցու, մեր ժողովրդի և մեր վերածնված մայր հայրենիքի գերագույն շամերով:





## ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

### **ՀԱՅ ԴԱՎԱՆԱԲՍԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԷՃԵՐՈՒՄ**

Հայ եկեղեցին երկար դարերի մաքառումների հողակերտ մի պատմություն ունի: Այդ մաքառումների հիմնական էությունը կազմել են դավանաբանական գանձակն հարցեր:

Այդ մաքառման շրջանին ստեղծվել է հարուստ ու արժեքավոր հայ դավանաբանական գրականությունը, որը սակայն, ցավոք սրտի, հիմնականում թաղված է պատմության բողի՝ մագաղաթյա և թղթյա ձեռագրերի մեջ և երբեմն խոլ աղաղակում է իրեն բաժին ընկած այդ անարդարության համար:

30-ամյա «Էջմիածին» ամսագիրը, լինելով հայ եկեղեցու եկեղափառ կենարունի պատունաբերյը և միակ կրոնական ամսագիրը Հայաստանում, իր էջերում երբեմն տեղ է տվել արժեքավոր դավանաբանական հոդվածների և բնագրերի, որոնք և միշտ կենդանի են պահել հայ դավանաբանական գրականության բազմակողմանի ուսումնահրության անհրաժեշտությունը հայ հոգևորականների և աշխարհիկ գիտականների գիտակցության մեջ:

Հայ դավանաբանական գրականությունը սկիզբ է առնում Ե դարի 30-ական թվականներին ս. Սահակ-Մեսրոպյան գրական-մատենագրական, կրթական գործունեության

շրջանում: Հայ դավանաբանական գրականությունը, որը մեր եկեղեցական գրականության ամենահարուստ հյուտերից մեկն է հանդիսանում, մաքառման ու պայքարի մի գրականությունն է ոչ միայն ի պաշտպանություն հայ եկեղեցու ողղափառության, այլ նաև հայապահպանման և հայ Ակարագրի ինքնուրույնության:

Ե դարի հայ դավանաբանական մտքի ու քրիստոնական մտածողության արժեքավոր էջերից են ս. Սահակ Պարթևի, ս. Մեսրոպ Մաշտոցի գրած թղթերը 431—440 թթ. հունաց Պողոկ Պատրիարքին, Ակալիոս միտրոպոլիտին, ինչպես նաև Մովսես Խորենացու, Հովհանն Մանդակունու և այլոց դավանաբանական թղթերն ու ճառերը:

Ե դարի 80-ական թվականներին հայերենի է թարգմանվում Ալեքսանդրիայի Պատրիարք և ողղափառ միաբանության պարագունի Տիմոթեոս Կուզի «Հականառութիւն» առ սահմանեապն ի ժողովոյն Քաղկեդոնի» ընդհանուր եկեղեցական գրականության մեջ դարագլուխ կազմող աշխատությունը, որով և պաշտոնապես հայ եկեղեցին Հովհանն Մանդակունի կախողիկովի օրով (478—490) ճշտում է իր վերաբերմունքը ընդդեմ Քաղկեդոնի ժողովի: Երկար ժա-

մանակ Տիմոթեոս Կուզի «Հակամառութիւն»-ը հայ հոգևորականի համար եղել է հզոր մի պատվար՝ մաքանու և նեասորականության, և քաղկեդոնականության դեմ:

Ը դարում հայ դավանաբանական գրականության պատմությունը թևակոյսում է մի նոր դարաշրջան, երբ Դիմինի Հայրապետանոցում կազմվում են երկու նշանավոր «Կնիք Հայաստոյ» և «Գիրք թղթոց» ժողովածուները:

Հետագա դարերում ևս հարուստ և արժեքավոր էջեր են արձանագրվել հայ դավանաբանական գրականության պատմության մեջ:

Ուրախությամբ պետք է արձանագրել, որ այդ պատմության առանձին հարցեր իրենց լուսաբանությունն են ստացել «Էջմիածին» ամսագրի էջերում:

Մեր այս հոդվածի նպատակն է ներկայացնել «Էջմիածին» ամսագրում տպագրված դավանաբանական բնույթի հոդվածներն ընդհանուր գծերով։

«Էջմիածին» ամսագրում հրատարակված դավանաբանական բնույթի առաջին հոդվածներից առանձին արժեք է ներկայացնում Լ. Ս. Մելիքսեթ-Բեկի «Մի փորձ «Գիրք թղթոց»-ի թերի մասերի վերականգնման ողղությամբ» հոդվածը (1960, Զ, 28—35):

Հայ մատենագրության մեջ «Գիրք թղթոց»-ը մեկն է մեծ հոչակ վայելող այն երեք ժողովածուներից («Գիրք թղթոց», «Կնիք Հայաստոյ», «Խանոնագիրք»), որոնք սկիզբ են առել և—Ը դարերում։ Այս ժողովածուներից առաջին երկուսը մեզ են հասել մեկական հազվագյուտ ձեռագիր օրինակներով։ «Գիրք թղթոց»-ի օրինակը, արտագրված 1298 թ. Կիլիկիայում, գտնվելիս է եղել Կ. Պոլսում Անտոնյան հայ կաթողիկ վանքում, որի վրայից ընդորինակվելով հրատարակվել է 1901 թ. Թիֆլիսում։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին «Գիրք թղթոց»-ի ձեռագիրը, ի թիվուայլ ձեռագրերի, փոխադրվում է Լիբանանի Զմանի հայ կաթողիկ վանք, որը և գտնվում է այժմ։

«Գիրք թղթոց»-ի հրատարակումից մի տարի հետո պարզվեց, որ թեև այդպիսի մի լուսիր պատմական աղբյուր թերի է հասել մեզ, սակայն հնարավոր է այդ պակասը լրացնել այլ ձեռագրերից։ Այսպիսով հրատարակում է Հ. Գյուլիսանդայանի ««Գիրք թղթոց»-ի պակասները և հրանից դուրս մնացած թղթերը» վերնագրով հոդվածաշարը («Արարատ», 1902, էջ 560—569, 748—753):

Հոդվածագիրը, ժամանակին կազմելով Վրաստանի պետական թանգարանի հայե-

րեն ձեռագրերի ցուցակը, հայտնաբերում է 1316 թ. արտագրված մի ձեռագիր, որը մի տեսակ փորձ է «Գիրք թղթոց», «Կնիք հայաստոյ» և «Կանոնագիրք» կոչված հավաքածուների միաձուլման։

## ՆԱՐ ԿՏԵՎԱՐԾԵ

ՉՈՐԻ ԱՅԻ; ՏԱՐԻ ԵՐԿՐՈ

ԵՒ

Գ. Ա. Բ. Շ. Ա. Ա. Ա. Վ. Ե. Ա. Յ.

ՈՐԵՆԴԱՀԱՅԵՐԵՆ ՆԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ


ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՇՄԻԱՌԻՆ

1969

Լ. Ս. Մելիքսեթ-Բեկը այս հոդվածով մի նոր փորձ է կատարում լրացնելու «Գիրք թղթոց»-ի թերի մնացած որոշ մասեր, ուստի հայտնաբերած վերոհիշյալ ձեռագրի տվյալների։

Ե դարի երկրորդ կեսի հայ դավանաբանական մտքի վերաբերյալ արժեքավոր մի հոդված է հրատարակում Ե. Տեր-Մինասյանը՝ «Ե դարի հայ եկեղեցու պատմության և գրականության մի քանի հանգուցային հարցերի շուրջը» վերնագրով (1962, Ե, 37—44, Զ, 45—55):

Հոդվածագիրը մատնանշում է մի քանի կարևոր հարցեր՝ կապված Եղարփի հայ եկեղեցու պատմության և գրականության հետ, որում մինչև այսօր դեռ չեն ստացել իրենց լուծումը և շարունակում են լուրջ վիճականության առարկա մնալ: Այդ հարցերը նետևյալներն են.



ա.—Հայոց եկեղեցին կամ թեկուզ նրա ականավոր Աերկայացուցիչներից մեկը Եղարփում ընդունել է Քաղկեդոնի 451 թ. ժողովի որոշումները, և ընդհանրապես Քաղկեդոնի ժողովը որևէ դեռ խաղացել է հայերի կյանքու Եղարփի երկրորդ կեսի ընթացքում:

բ.—Ի՞նչպիսի՞ հակամարտ մտավորական հոսանքներ են եղել հայերի մեջ Եղարփի երկրորդ կեսին, և ի՞նչ խնդրի մեջ է եղել նրանց հակամարտության հույժունը, կամ այդ հակամարտության որևէ արտահայտույթն համար է մեզ:

գ.—Ի՞նչ աղանդներ են եղել Հայաստանում Եղարփում, և նրանք առհասարակ որևէ վտանգ Աերկայացրել են հայոց եկեղեցու և ժամանակի մտավորականության և մտավոր շարժման համար:

դ.—Նեստորականների դեմ Հայաստա-

նում Եղարփում Սահմակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կողմից սուր պաքար մրցել է իրոք, յեւ այդ պաքարը մեր ժամանակի բանակերթների հերյուրանք ու զյուտ է, ինչպես կարծում և պնդում են ուսաներ (Ս. Մալիսասանց և որիշներ):

ե.—Ծաղեռու առաջապի շուրջ Հայաստանու կապնված և տարածված ավանդությունը ո՞ր ժամանակի գործ է. կարո՞ղ է այն կազմված լինել Եղարփի երկրորդ կեսին, շուրջ 470 թվականին, ինչպես պնդում է Ս. Մալիսասանցը:

զ.—Հայոց եկեղեցու Եղարփում պատմության համար ի՞նչ արժեք են Աերկայացնում վրաց Արսեն կաթողիկոսի տված տեղեկությունները:

է.—Ի՞նչ կերպարանք կատանար ընդհանուր պատմական զարգացումը հայերի մեջ, եթե նրանք ընդունած լինեն Քաղկեդոնի ժողովի որոշումները:

տ. Տեր-Սիհնայանը, առաջ քաշելով այս հարցերը, համառոտակի մի քանի կարևոր դիտողություններ է անում, որով այդ հարցերը շատ հնարավորության ավելի լուսաբանություն են ստանում:

1967 թ. Դ համարում (էջ 50—55) տպագրվում է Հ. Մ. Բարթիկյանի «Խահիակ Անգեղոս կայսեր պատասխան համակը հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային»:

Հեղինակը սոյն հոդվածը հրատարակում է որպես փաստաթուղթ, որը ցույց է տալիս հայ եկեղեցու դերն ու համակությունը Արևելքում Բյուզանդական Կայության շրջանին և այն քաղաքական ակնկալությունը, որ ուներ Բյուզանդիան հայ ժողովրդի դավանակիությամբ եկեղեցական միության բռնի տակ:

Հ. Մ. Բարթիկյանը նախ անդրադառնում է Գրիգոր Տղայի և Խահիակ Անգեղոս կայսեր ժամանակ տեղի ունեցած հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերություններին, դավանարանական հոդի վրա, ապա հրատարակում Խահիակ Անգեղոս կայսեր պատասխան համակը հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային: Խահիակ Անգեղոսի պատասխան համակի քաղաքական պատմության հարցերին վերաբերող առանձին հատվածներ հեղինակը թարգմանարար հրատարակել էր «Բանքեր Մատենադարանի» 4-րդ գրքում: Գտնելով, որ համակի դավանարանական հարցերին նվիրված մասը ևս հետաքրքրություն կներկայացներ հատկապես հայ եկեղեցու պատմությամբ գրադրվող մասնագետներին, հեղինակը նպատակահարմար է գտել համակը հայերեն թարգմանությամբ ներկայացնել ամբողջությամբ:

«Էշմիածին» ամսագիրը առանձին կարեւորություն է տվել հայ եկեղեցու դավանա-

բանությանը և այս նկատառումով վերահրատարակել ս. Ներսես Շնորհալու «Սահմանը հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ... ի խնդրոյ աստուածասէր խագաւորին Հոռոմոց Էմանուէլի» գրությունը ըստ «Թուղթք միաբանութեան գրեալ առ Յոյնս՝ վասն միութեան եկեղեցոյ» (Էջմիածին, 1865, էջ 163—176) գրքի (1969, Բ, 34—39):

Ապա «Էջմիածին» ամսագրի էջերում ներկայացված է «Սահմանը հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ» թղթի աշխարհաբար թարգմանությունը, որ կատարել են հոգևոր ճեմարանի դասախոսներ Արքուն Հատիւնը, Պարգև Շահարազյանը և Սամվել Անթուպյանը՝ տղղատակում տալով մանրամասն ճանութագրություններ (1969, Բ, 40—46):

«Վրթանես Քերթողը և պատկերամարտությունը» վերնագրով մի ճեմարաբիր հոդված է հրատարակել հոգևոր ճեմարանի դասախոս Երվանդ Մելքոնյանը (1970, Զ—Է, 86—97):

Հոդվածագիրը նախ ներկայացնում է պատկերամարտությունը իրու եկեղեցու ծոցում ծնված մի նշանավոր շարժում՝ տալով այդ շարժման առաջացման և զարգացման պատմությունը, և ապա ցուց տալիս հայ եկեղեցու դիրքավորումը այդ շարժման նըլատումը: Մենք ոչ թե պատկերներն ենք պաշտում, այլ հրանց վրա նկարված սրբերն ենք փառակրուտ և նրանցից բարեխուսությունը խնդրում: Կորաբամակ պիտի չլինել հրանց առաջ և միայն հրանց վրա չդնել հույսը, ինչպես հեթանուններն էին անում: Մենք խաչին և նկարներին երկրպագում ենք որպես միջնորդի՝ Աստուծո օգնությունը խնդրելու:

Հոդվածի Բ մասում հեղինակը ներկայացնում է Վրթանես Քերթողին իրու նշանավոր եկեղեցական գործիչ և մատենագիր: Պետք է նշել, որ Երվանդ Մելքոնյանի տույն արժեքավոր հոդվածում, մեր վերջին ուսումնասիրությունների միման վրա, որոց անձը ստուգություններ կան Վրթանես Քերթողի անձի վերաբերյալ՝ համարելով հրանց և՝ կաթողիկոսական տեղապահ Դվինում, և Սյունյաց վարդապետանի աշակերտ, և՝ Քչկանորդի, Շաղնասար և Տերանց նվիրակ: Իրականում այս երեք տվյալները վերաբերվում են նոյն ժամանակում ապրած և գործած երեք տարբեր Վրթանեսների<sup>1</sup>:

<sup>1</sup> Զ դարի երկրորդ կեսին և է դարի սկզբներին հայ իրականության մեջ գործել են Վրթանես անունը կրող մի շարք նշանավոր անձինք: Զանազան հանգամանքներ հայ բանակերներից ունաց առիթ են տվյալ շփոթելու միջանց մեջ այս անձնավորություններին և հանգելու միայն նկարակացությունների: ԺԳ դարի պատմի Ստ. Օրբելյան իր «Պատմութիւն նա-

Հոդվածի Գ մասում հորդվածագիրը անդրադառնում է թղթի բովանդակությանը և հրա արժեքին: Սույն թուղթը հրատարակվել է երկու անգամ. առաջինը 1852 թ. Հ. Գ. Զարքիանալյանի «Յաղագ բարեխսութեանց սրբոց» գրքի հավելվածում, իսկ երկրորդը՝ 1927 թ. «Սիոն» ամսագրում (էջ 23—25, 61—63), հրատարակությամբ Եղիշե պատրիարք Դուրյանի:

նանգին Սիսական» (Թիֆլիս, 1910, էջ 98) աշխատության մեջ խոսում է մի Վրթանեսի մասին, որ սեվել ու մեծացել է Սյունյաց վարդապետարանում, Պետրոս նպա. Սյունյոց շահի տակ, և եղել է Սյունյաց եպիսկոպոս ու մահացել 580 թ.: Ժ դարի պատմի Ուխտանեսն իր «Պատմութիւն նայոց» (Վաղարշապատ, 1871, էջ 59) գրքում խոսում է մեկ որիշ Վրթանեսի մասին, որը սեվել ու մեծացել է Դվինի կաթողիկոսանում, գրել բազմաթիվ մատենագրական երկեր ու եղել կաթողիկոսական տեղապահ 604—607 թք: Խեթենստինքան այս ամենից կարիքի էր եղանակացնել, որ դրանք տարբեր անձնավորություններ են: Բայց պատեղ կա մի հանգամանք, այն, որ Օրբելյանը Սյունյաց Վրթանես եպիսկոպոսին նույնացնում է կաթողիկոսական տեղապահի նիս: Եվ հավանաբար այս էլ եղել է շփոթության այն պատճառը, որը որոշ բանակերների հանձեցրել է միայն նկարակացությունների, իսկ ունաց էլ ատիպակ լուսամք անցնել այս հարցի վրայից Միայն Մ. Ա. Օրմանիան ու Հ. Անապանն են անշատում այս երկու Վրթանեսներին: Սակայն նրանցից հետո նոյն նոյն բանակերներից շատերը կրկնում են հախորդակի սիստմերը: Եթենք այսուղ մի քանի պատճառաբանություն միայն՝ պացուցելու համար, որ այդ երկու Վրթանեսները նոյն անձը չեն:

ա.—Սյունյաց կիրանես եպիսկոպոսը մահացել է 580 թ.՝ Օրբելյանի վկայութամբ: Մինչդեռ Վրթանես Դվինեցին (պարմանական անուն—Ե. Ա. Պ.) եղել է կաթողիկոսական տեղապահ 604—607 թք. և նոյնիս հիշվում է 617 թք:

բ.—Խմբանեսը վկայում է, որ Վրթանեսը սեվել և մեծացել է Դվինի կաթողիկոսարանում, իսկ Օրբելյանը՝ Սյունյաց վարդապետարանում:

գ.—Ուխտանեսը, լինելով հանձերձ Վրթանեսի կենսագիրը, որեւ տեղ չի հիշում, որ նա եղել է Սյունյաց եպիսկոպոս, մի հարց, որ երբեք չէր անտեսի նա:

դ.—Օրբելյանը, ինչպես հ. Ն. Ակիմյանն է ասում՝ «Ամենուր Սյունյաց փառք միտրողը», որևէ ակնարկ չի անում այն մասին, որ Վրթանեսը մատենագրական գործեր ունի: Մինչդեռ տեղապահ Վրթանեսն աչքի է ընկնում իր բազմազան մատենագրական վաստակով:

Իսկ ինչ վերաբերում է Օրբելյանի վկայությանը, ապա շատ նախանարար ԺԳ դարի պատմիչը կարող է սկսաված լինել: Ի դաս հրա աշխատության մեջ հանգան ին հանդիպում աղյուսի սիստմեր, որոնք մենք կարող ենք պահել աշեալ անհրաժեշտության դեպքում:

Երվանդ Մելքոնյանը սույն թուղթը հրատարակում է երրորդ անգամ այս անգամ սակայն կազմելով թողթի համեմատական բնագիրը և տպալով նաև աշխարհաբար թարգմանությունը:

«Հշմիածին» ամսագրում տպագրված դավանաբանական հոդվածներից առանձին արժեք է ներկայացնում Հ. Ս. Անայանի «Հայ պատմա-դավանաբանական գրականության թանկարժեք հոչշարձակը» հոդվածը (1972, Ը, 27—36, թ. 45—56), «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ» դավանաբանական ժողովածուի մասին:

«Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ»-ն կամ, կրօնա ձևով՝ «Արմատ հաւատոյ»-ն կամ «Հաստատմատ»-ն իր կառուցվածքով նման է «Կնիք հաւատոյ» ժողովածուին<sup>2</sup>, որը կազմված էր է դարի սկզբներին, և Տիմրժեան Կողի «Հակաճառութիւն» գրքին<sup>3</sup> հունարենից թարգմանված հայերենի և դարի վերջերին: Այս երկու ժողովածուների նման «Արմատ հաւատոյ»-ն դա-

Հայ բանասիրության մեջ Վրթանես տեղապահի անձնավորության հետ է շփոթվել նաև նոյն դարում ասլորդ Բագրատումի Քչկան իշխանի որդի Վրթանես Վարդապետը (նույնաց իշխան), որին ուղղված մի թուղթ է գրել հունաց կայսրի կողմից Արևմտյան Հայոց ստրատելատ Զշամանիկած Սորմենով՝ ամրատանելով Վրթանես տեղապահին: Պատասխան քրդառում Բագրատումի իշխան Վրթանեսը հանդիւ է գալիս ի պաշտպանություն Վրթանես տեղապահի: Այս մասին տես Եղիշեն ևս. Դորյանի «Լրատես Քրթոր» նոդվածը («Սիոն», 1928, էջ 10—11):

Ամփոփելով՝ Զ դարում գործել են երկու համապատը Վրթանեսները:

ա.—Վրթանես կաթողիկոսական տեղապահ (604—607 թթ.), նեղինակ «Յաղագ պատկրամարտից» երկի և բազմաթիվ նամակների: Սնվել և մեծացել ու պաշտպանված է Դիվինի Հայրապետանոցում:

բ.—Վրթանես Բագրատումի, Քչկան իշխանի որդի, նեղինակ Սորմենու ստրատելատին ուղղված թողթի:

գ.—Վրթանես ևս. Սյունյաց (558—580 թթ.), աշակերտ Պետրոս Սյունյացու, որին 570-ական թթ. Հովհաննես Բ Գարենյան կաթողիկոսը, այլ հայուպուների հետ, գրել է մի թուղթ՝ գործանալու համար նեստորականներից (Օրելյան, էջ 92): Նրանից մեզ որևէ մատևնագրական գործ չի հասել:

<sup>2</sup> «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ նկանեցոյ յողովափառ և սուրբ նոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, յաւորս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքալը», հրատարակություն Կարապետ ևս. Տեր-Մկրտչյանի, Հշմիածին, 1914:

<sup>3</sup> «Տիմրժեան կայսկառապետի Աղեքսաներեայ Հակաճառութիւն առ սահմաննալս ի ժողովոյն Քաղիդովնե», հրատարակություն Կարապետ ծ. Վոր. Տեր-Մկրտչյանի և Երվանդ Վոր. Տեր-Մինասյանի, Հշմիածին, 1908:

վանաբանական վիճակի հարցերի վերաբերյալ կազմված վեպուրունեների ժողովածուն, որպես «առ ձեռն պատրաստ զեն» բաղկաղունական մտավորթյան ծավալման դեմ: «Արմատ հաւատոյ»-ն հիշյալ ժողովածուներից իր բովանդակությամբ տարբերվում է միայն նրանով, որ մինչ վերջիններս լոկ դավանական իննիդրներ էին ընդգրկում, «Արմատ հաւատոյ»-ն ընդգրկում է նաև ծիսկական վիճելի հարցեր:

Հ. Ս. Անայանը Վարդան Աղքեկցուն նվիրված իր մի ուսումնասիրության մեջ՝ տվել է «Արմատ հաւատոյ»-ի ընդհանուր կնքագրությունը և ներկայացրել այս հիմնական իննիդրները, որ ընդգրկում է այն: Բայց դեռ մնում էին լրացուցիչ բազմաթիվ հարցեր, որոնք պետք է քննվեն հետզետեւ: Այդպիսին ներից են ժողովածուի կրկնակ իմբագրությունների հարցը, նրա մեջինակի ինքնության հարցը, բնագրական կազմի վերակառուցման հարցը, ալբյուրների հարցը, բնագրաբանական հարցեր և այլն: Անհայտ հարցերից մի քանիսին է նվիրված վաստակավոր բանակերի և մատենագետի խնդրո սուրբրկությանը:

Հողվածագիրը նման «Անդրադասում» է «Արմատ հաւատոյ»-ի կրկնակ իմբագրությունների հարցին, պարզում, որ մեզ հասած «Արմատ հաւատոյ»-ի ձեռքբերը կազմում են երկու ուրույն իմբագրություններ՝ ընդհանակ և համառոտ: Այս փաստը անցյալում շփոթության է մատնել բանակերներից շատերին, որոնք առիթ են ունեցել հետաքրքրվելու դավանաբանական այս ժողովածուով:

Այսուհետև մեղինակը հանգանանորեն ընկնում է «Արմատ հաւատոյ»-ի մեղինակի ինքնության հարցը և բազմաթիվ պատմական ու մատենագիտական տվյալների հիմնա վորապետությունը, որ այս ժողովածուն կազմել է միշնադարի հայունի առակագիր Վարդան Աղքեկցին: Հ. Ս. Անայանը այս հարցին անդրադասել է նաև «Հշմիածին» ամսագրի 1969 թ. է—լ համարներում հրատարակված «Վարդան Աղքեկցին որպես համերաշխության գաղափարախոս» հոդվածում (էջ 52—58):

Վերջում հոդվածագիրը անդրադասում է հեղինակային օրինակի հայտնաբերման հարցին և եզրակացնում, որ ընդհանակ իմբագրության բնագրին, իր թերություններով հանդերձ, շատ մոտ է մեղինակային օրինակին և հիմնականում պահել է նրա կերպարանքը:

<sup>4</sup> Հ. Ս. Անայան, Վարդան Աղքեկցին իր նորանակության լույսի տակ, Վենեսուսի, 1969: Արտապահած է «Բազմավելս»-ի 1968 թ. հատորից:

Հ. Ս. Անասյանը ծրագրել է բոլոր օրինակների համեմատական ուսումնափրությամբ վերակառուցել նրա բնագրական կազմը և այդ նկատառությունը իր հոդվածին է կցել «Արմատ համատոյ»-ի կառուցվածքային ընդհանուր պատկերը, որով մեզ համար պետք ճանաչելի է դառնում «Արմատ համատոյ»-ն, նախքան նրա բնագրային տեքստի հրապարակումը:

Մի այլ առիթով (ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակ) Հ. Ս. Անասյանն «Էշմիածին» ամսագրում հրատարակում է «Ներսես Շնորհալին և «Արմատ համատոյ» ժողովածուն» (1973, ԺԲ, 88—92):

Հոդվածագիրը նախ ներկայացնում է Ներսես Շնորհալու ժամանակ տեղի ունեցած հայ-քաղկեդոնական դպրանքաբանական վիճաբանությունները, այնուհետև անդրադառնում Վարդան Այգեկցու խմբագրած «Արմատ համատոյ»-ին, մատնանշում Շնորհալու այն գործերը, որ օգտագործել է Վարդան Այգեկցին, և ապա մեջբերում «Արմատ համատոյ»-ում եղած այն վկայությունները, որոնք Շնորհալու հեղինակության են պատկանում, հանգամանորեն վերլուծելով Շնորհալու և «Արմատ համատոյ»-ի կապը ժամանակի պատմական իրադրության գարգաման ընթացքի մեջ:

«Վարդան Այգեկցին և «Արմատ համատոյ» ժողովածուն» (գրախոսության փոխարեն) հոդվածում (1972, Գ, 37—43) Ս. Քոլյանցյանը հանգամանորեն անդրադառնում է Հ. Ս. Անասյան՝ Վենետիկում հրատարակած «Վարդան Այգեկցին իր հորահայտ երկիրի լուսի տակ» աշխատությանը՝ գնահատելով այն գիտական աշխատանքը, որ արել է հեղինակը՝ բանասիրությանը ներկայացնելով երեք նորահայտ արժեքավոր գործեր, որով և Վարդան Այգեկցին ի հայութական մեր միջնադարի երախտավորների շարքում, ունենում իր կենսագրությունը և իր արժանավոր տեղը գրավում հայ մատենագրության պատմության մեջ:

«Էշմիածին» ամսագրում հրատարակված հաջորդ դասանարանական հոդվածը ստորագրել է Է. Մ. Բաղդասարյանը՝ «Հովհաննես Որոտնեցու դասանարանական գրությունը Կոստանդին Ե Սաեցի կաթողիկոսին» վերնագրով (1973, Բ, 19—28):

Սույն գրությունը ծնվել է ԺԴ դարի երկրորդ կեսին տեղի ունեցող հայ-կաթոլիկ դավանարանական պայմանագրի ժամանակ: Այդ պայմանագրում արևմտաքից քաղաքական ակնկալություններ ունեցող Կիլիկիայի հայոց կաթողիկոսարք չէր կարող բացարձակ պայման ծավալել: Դա պետք է ստանձներ բոլոր Հայաստանի հոգևորականություններ, ինչպես որ եղել էր արդեն ԺԴ դարում:

Այդ պայմանում, ի թիվս այլ հոգևորականների, գործուն մասնակցություն է ունենում նաև ականավոր գիտնական Հովհաննես վրդ. Որոտնեցին, որի լավագույն վկայություններից մեկն է նրա նորահայտ «Համատոյ դասանութիւնը...» կոչված թուղթը՝ ուղղված Կոստանդին կաթողիկոսին, որը գտնվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 557 ձեռագրի 1ա—15թ էջերում:

Է. Մ. Բաղդասարյանն այս հոդվածով նախ անդրադառնում է Հովհաննես վրդ. Որոտնեցու ծավալած գործունեությանը, ապա անդրադառնում խոնրո առարկա գրության դրդապատճառների և ժամանակի հետ կապված հարցերին:

Հոդվածագիրը վերջում հրատարակում է նաև վերոհիշյալ գրության բնագիրը, որն ունի հետևյալ խորագիրը. «Այս են համատոյ դասանութիւնը, զոր գորեաց մեծ վարդապետն Յոհաննէս Որոտնեցի հրամանաւ Խությունին ի Հայութ, առ կաթողիկոսն տէր Կոստանդին»:

«Էշմիածին» ամսագրում տպագրված դավանաբանական վերջին հոդվածները կազմում են մի ամբողջություն, տողերին հեղինակի ստորագրությամբ, ներկայացնելով միշնադարի մոռացված մատենագիրներից մեկի՝ Եշանավոր վարդապետ, մեկնիշ և դավանաբան Մովսես Երզնկացու կյանքը, գործունեությունը և դասանարանական գրությունները:

Այս հոդվածաշարի հեղինակը դեռ 1973 թ. հրատարակում է «Մովսես Երզնկացու «Համաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին, զոր յառաջադոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն» աշխատությունը» (Թ, 14—20, ԺԱ, 43—48), որ և երևան է գալիս Մովսես Երզնկացին՝ որպես մի քանի դավանարանական գրությունների հեղինակ:

Այսուհետև հրատարակվում է «Մովսես Երզնկացու «Հնդիմադրութիւնն սակա ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին հայոց ՀԾԸ.» դասանարանական թուղթը» (ոսումնասիրություն և բնագիր) հոդվածը (1974, Թ, 33—42, Ժ, 49—64), որ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Մովսես Երզնկացուն որպես ժամանակի աշքի ընկնող հոգևորականներից մեկի: Հոդվածագիրը տալիս է Մովսես Երզնկացու ողջ մատենագրական վաստակի մանրամասն տեղեկատվությունը՝ անդրադառնալով նաև Երզնկացու կորած դասանարանական գրություններին:

Խոնրո առարկա թուղթը ծնվել է ԺԴ դարի առաջին տասնամյակին ծավալված հայ-լատին հարաբերությունների ժամանակ՝

իրեն հականառողջում 1307 թ. Սսում գումարված ազգային-նկեղեցական ոչ օրինական ժողովի, որի ընթացքում ժողովական ներք, Հեթուն Բ թագավորի գինվորական ճշշման տակ, ընդունել են Հոռմից առաջարկած դավանաբանական և ծիսական փոփոխությունները, որոնց հիմնական կողմն է եղել՝ հաղորդության և բաժանման մեջ գինու հետ չուր խոնակու խնդիրը:

Հովվածագիրը այն հականառողին ուսումնակիրում է սովոր թղթի գրության դրդապատճանների, ժամանակի և ներքին կառուցվածքի մեջ կապված հարցերը, ապա հրատարակում քննագիրը՝ ըստ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2268 ձեռագրի (Էջ 74ր—84ր):

Սովորեն վրդ. Երգնկացու մասին Յ-րդ հոդվածը տպագրվում է 1974, ԺԲ (41—42) և 1975 Ա. (30—40) համարներում «Մովսես Երգնկացու «Պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր Երեց» դավանաբանական գրությունը» վերևագրով:


Սովորեն վրդ. Երգնկացին սույն գրությունը գրել է Տրապիզոնի հովանաբանական Գրիգոր քահանայի՝ հայ եկեղեցու մասին արված ամբատանագիր թղթին ի պատասխան, 1309 թ. առաջ:

Հովվածագիրը նախ անդրադառնում է գրության դրդապատճանների, ժամանակի և ներքին կառուցվածքի հարցերին, ապա

հրատարակում այն՝ ըստ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2678 ձեռագրի (Էջ 108ր—115ա):

Բացի նկարագրված վերոհիշյալ հոդվածներից «Էջմիածին» ամսագրում հրատարակվել են նաև հայ դավանաբանական գրականության պատմության մեջ Երկրորդական կապ ունեցող մի շարք հոդվածներ, որոնցից են Արտավազդ արքեպիսկոպոսի «Հայ-Ղատին հարաբերությունները հովնատին հարաբերությանց լուսով» (1945, Ա.—Բ, 16—23, Գ-Դ, 19—24), Լ. Մ. Մելիքսեթ-Բեկի «Պողոս Տարոնեցի՝ ԺԱ—ԺԲ դարերի հայ մատենագիրը և թուղթակեցին ու ծայթ հայերը» (1960, Դ, 38—44), Ա. Հատիսյանի «Արարատ»-ը և հայ դավանաբանական գրականությունը» (1968, ԺԱ—ԺԲ, 15—29), «Ա. Ներսես Ընորհալին և եկեղեցական միության հարցը» (1973, ԺԲ, 61—71), Հովհաննես քիւս Մատուքյանի «Հայ եկեղեցու դավանաբանական վերաբերյալ հրատարակություններ Մայր Աթոռի տպարանից» (1972, ԺԲ, 56—65), «Հայ եկեղեցու դավանաբանական դիրքը» խմբագրականը (1969, Բ, 9—11) և այլ հոդվածներ:

Ահա այս է, ընդհանուր գծերի մեջ, այն հպատակ, որ արել է «Էջմիածին» ամսագիրը հայ դավանաբանական գրականության պատմության առանձին հարցերի լուսաբանման գործում:



# Օ Ա Ռ Ք Մ Ե Ծ Ա Ծ



ՍՈՒՐԵՆ ՔՈՂԱՆՁՅԱՆ

## «ԷՇՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էշմիածին» ամսագիրն արժանավոր հաջորդը հանդիսացավ իր մեծ նախորդի՝ «Արարատ» ամսագրի լավագույն ավանդույթների: Նա, լուս տեսնելով բոլորովին նոր հանգամանքներում և հայրենի կառավարության առկայության բարենպատ պայմաններում, իր հերթին կարևոր ավանդ մուծեց հայ մամուլի վերջին 30 տարիների պատմության մեջ:

Ծնունդ առնելով Հայրենական մեծ պատերազմի օրերին, 1944 թվականի հունվարին, «Էշմիածին»-ին բախտ վիճակվեց իր մասնակցությունը բերելու նաև վերածնվող մեր հայրենիքի առաջնորդացի մեծ գործին: «Էշմիածին»-ն իր բովանդակությամբ ոչ միայն կարողացավ կարևոր դեր խաղալ հայ սփյուռքը Մայր Աթոռին ու հայ հայրենիքի հետ շաղկապելու հայրենասիրական մեծ գործում, այլև իր էջերը լայնորեն բացեց հայագիտության առջև:

Ամսագրի հիմնադիր երջանկահիշատակ Գևորգ Զ կաթողիկոս Չորեցյանը, Գալուստ Կյուլպեհմյանին գրած իր նամակում, ի միջի այլոց Աշել էր, որ «Ամսագիրը հրատարակում է հայ հին մատենագրական նորույթներ՝


տարվ նոցա ուսումնասիրությունը, այլև սովորական նոր գրական երկերի գրախոսականները»<sup>1</sup>: Այսպես է, որ սկսեց «Էշմիածին» ամսագիրը լուս տեսնել և նույն ուղիով նա շարունակեց ընթանալ մինչև այսօր:

«Էշմիածին»-ը, շնորհիվ Գևորգ Զ կաթողիկոսի և ապա Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ցուցաբերած բարձր հոգատարությունների, ինչպես նաև նրա խմբագրությունը վարդող հայագիտությանը նմուտ անձանց և ամսագրին իրենց աշխատակցությունը բերող հայագետների պատկանելի թվին, իր կարևոր լուման է մուծել հայագիտույթան զարգացման գործում:

Ամսագրի խմբագրությունն իր հրատարակման առաջին օրվանից կոչ է ուղղել ինչպես Սովորական Միությունից, այնպես էլ արտասահմանից հոդվածները ընդունելու մասին: Այդ կոչին շատերը մեծ սիրով պատասխանեցին: «Արարատ» ամսագրի երբեմնի խմբագիր և բազմաթերթում աշխատակից Գարեգին արքեա, Հովհանիսանը (ընտրյալ կաթողիկոս Տաճան Կիլիկիո) արտա-

<sup>1</sup> «Էշմիածին», 1969, նույն, էջ 16:

սահմանից գրած իր համակում նշելով, որ ինք ստացել է «Էջմիածին» հանդեսի առաջին համարը, հաստատում էր հետևյալը. «Ամեն կերպով պիտի աշխատենք մասնակից լինել նորա (հնա «Էջմիածին» ամսագրի) հառաջադիմությանը»<sup>2</sup>:



Ներկա հոդվածի սահմաններում դժվար է հաճախանալից կերպով խոսել «Էջմիածին» ամսագրում անցնող երեսուն տարիների ընթացքում ծավալվող հայագիտական աշխատաբերի մասին: Մեր հապատակն է միայն բավարարվել հպանցիկ մի ակնարկով, անդրադառնալով միայն ամսագրի էջերում ընդգրկված հայագիտական հյութերի բազմազանությանը, գլխավոր աշխատակիցներին և ձեռք բերված հաջողություններին:

«Էջմիածին» ամսագրի հրատարակման առաջին տասնամյակը կարելի է համարել հրա հիմնադրման և ամրապնդման շրջանը: Ամսագրի սկզբնական շրջանի աշխատակիցների մեծամասնությունը կազմու հայագիտության մեր պատկանելի ներկայացուցիչները հանդիսացել են նաև «Արա-

րատ»-ի երթևմնի արդյունաշատ գործակիցները: Նրա առաջին աշխատակիցներից էին. այն ժամանակ տեղակալ և պատ կաթողիկոս Գևորգ Զ Հայրապետը, Տանեն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա. Հովհաննեսը, հայրենի նորատեղ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսները Ստեփանոս Մայ- կապանցը, Հրաչյա Աճառյանը, դոկտ. Երվան Չահազիզը, արվեստի վաստակավոր գործի Գարեգին Ալոեյանը, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լևոն Մելիքսեթ-Բեկը, դոկտ.-պրոֆ. Երվանդ Տեր-Մինապյանը, դոկտ.-պրոֆ. Առաքել Առաքելյանը, դոկտ.-պրոֆ. Աշոտ Աքրա- համյանը, հոգևորականներից՝ Եղիշե Վար- դապետ Ազնավորյանը, Ռուբեն արքեպ. Դրամբյանը, Կարապետ եպս. Ղրիմեցին և որիշները: «Էջմիածին» ամսագրի հրատա- րակում մեծ ոգիորությամբ է ընդունվում նաև ափյուրուս: Նրա առաջին համարներից սկսած իրենց աշխատակցությունն էն բերում նաև սիլուորահայ մի շարք անվանի հայագետները. Արտավազդ արքեպ. Սյու- մեյանը, Արշակ Ալպյուաճյանը (Եգիպտոս), Նորայր եպս. Ծովականը (Պողարյան. Ե- ռուսական), Հարություն Քուրտյանը (ԱԱՐՆ), Նուպար Մազոստյանը (Կիպրոս), Արամ Երեմյանը (Իրան) և որիշներ:

Ամսագիրն այս շրջանում ակներև հաջո- դություններ է ունենում հասկապես հայ ձե- ռագրագիտության, այդ թվում նաև աղբյու- րագիտության, հնագրության, և հայ արվես- տի պատմության, սովորագիտության, հայ պատմության, հայ գաղթավայրերի պատ- մության և այլ բնագրավառներում: Կատար- վում են նաև մի շարք արյսիվային հյութերի հրապարակումներ, լույս են տեսնում հա- րուստ հուշագրություններ զանազան հայ ա- կանավոր մարդկանց մասին և այլն:

Առաջին տասնամյակում հայ ձեռագրա- գիտական հարցերին էին նվիրված Գարե- գին Ա Կաթողիկոս Հովհաննեսի «Խնճե- րորդ դարի ձեռագրական մի հատակուտոր և Ատոս Անձնացյաց իշխան» ուսումնասի- րությունը, որը մեծ երախտավորի կողմից հայ հնագրությանը նվիրված տպագիր ամե- նավերջին կարևոր գործը կարելի է համա- րել: Դոկտ.-պրոֆ. Ա. Աքրահամյանը լույս է ընծայում «Մովսես Խորենացու պատա- ռիկները» և «Մեր միջնադարյան գրիշները» հոդվածները, Եղիշե Վարդապետը ներկա- յացնում է «Ս. Էջմիածնի տաճարի ձեռագիր Ավետարանները» և այլն: Հայ մանրանկար- չության ուսումնասիրության գծով լույս են տեսնում բանասեր Արամ Երեմյանի՝ Թո- րոս Ռուբենի, Սարգիս Պիծակի, Եգինատիոս մանրանկարչի մասին գրած հոդվածները, Ա. Ավետիսյանը հրատարակում է Գլաձորի

<sup>2</sup> «Էջմիածին», 1944, նոյիս-օգոստոս-սեպտեմբեր, էջ 9:

մանրանկարչական դպրոցի և Մոմիկի վերաբերյալ հոդվածներ:

1950 թվականից ամսագրի էջերում պարբերաբար սկսում է լույս տեսնել Մայր Աթոռու. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի գիտական ցուցակը, որը շարունակվում է մինչև օրս (Կազմող Նուրար Միքայելյան) և ընդգրկում ավելի քան 320 գրչագրերի նկարագրություն: Լոյս է տեսնում նաև ուսմինահայերի կողմից Մաշտոցյան Մատենադարանին նվիր ուղարկված 42 ձեռագրերի համառոտ նկարագրությունը:


«Էշմիածին» ամսագրի միջոցով հայագիտության և եւփականությունն են դառնում մեր միջնադարյան մատենագիրների մի շարք անտիպ հոլուքերը, ինչպիսիք են Դավիթ Ա-լավլիա որդու կանոնները, Հովհաննես Սարկավագի կենագրության և մատենագրության վերաբերյալ հոլուքերը, Մտեփան Դաշտեցու հանելուկները, գրված դոկտ.-պրոֆ. Ա. Արքահամյանի կողմից: Հայ մշակութիւն, հայ եկեղեցու և ժողովրդի պատմության զանազան հարցերի լուսաբանմամբ հանդես են գալիս Ստ. Մալխասյանց՝ «Ե՞րբ են հայերը ընդունել քրիստոնեությունը», «Գրիցոր Նարեկացի», «Հայերեն և արաբերեն Ազգաթանգեղունները», Գարեգին Ա. կաթողիկոսը՝ «Պատմական վայրերի հիմ առունելիության վերականգնում», Հր. Աճառյանը՝ «Հայ տառերի գյուտի ստուգ թվականը», «Երեք հարց Մեսրոպյան այբուրենի շուրջը» և այլ հոդվածներով:

Հայ արվեստի պատմության շորջ իրենց  
աշխատակցությունն են բերում Գարեգին  
Լևոնյանը՝ գրելով Հովհաննես Միքուզի,  
ճարտարապետ Տրդատ Անեցու և այլոց վե-  
րաբերյալ հոդվածներ, նկարիչ-բանասեր  
Առաքել Պատրիկը հրատարակում է «Մշո-  
Առաքելոց վանքի դուռը» հոդվածը։ Դրա-  
մագիստրության վերաբերյալ Կիարոսից բա-  
նասեր ն. Մազուտյանը գրում է. Հեթում  
Ա թագավորի երկեղավան դրամների մասին։

Հայ մատենագրերի և վարքագրական գրականության շորջ իրենց աշխատակցությունն են բերում նաև Մայր Ստոռի միաբաններից Ռուբեն եպս. Դրամբյանը՝ «Առաքել Դավթիծեցի», «Մեր մատենագիրների պատմագիտական ճանաչողությունը», Կարապետ եպս. Ղրիմեցին՝ Սրբոց Հոդիսիսց և Գայանյանց կուսերի վկայաբանությանց մասին հոդվածներով։ Տոմարագիտության վերաբերյալ իր աշխատակցությունն է բերում պոռֆ. Լ. Մելինովը՝ գրելով հոդվածներ Սարկավագադիր տոմարի, խավարումների լուսաբանման, Անանիա Շիրակացին որպես աստղաբաշխ և այլ հարցերի մասին։

Այս շրջանում ամսագրում կարևոր տեղ է

գրավում հատկապես հայ արխիվային հյութերի հրապարակումը։ Ընորհիվ բազմավայսակ բանասեր երլանեց Շահազդիկի, 1944—1951 թթ. շրջանառության մեջ են



դրվում 19-րդ դարի մեջ հշանավոր դեմքերի կյանքի ու գործունեության վերաբերյալ արժեքավոր անտիպ հյութեր, որոնք համեմած են նաև հեղինակի՝ ականատեսի հուշերով։ Նման քննութիւն գործերից են Մանվել Վոր. Կյումիշխանեցու, Խ. Արուլյանի, Պ. Պոռչյանի, Ղ. Աղայանի, Ստ. Նազարյանի, Պետրոս Սովամյանի, Մ. Էմինի, Ք. Պատկանյանի, Նորայր Բյուզանդացու, Գր. Խալաթյանի, ծովանկարիչ Հովհ. Ալվազովսկու, Վահան Վորդ. Բաստամյանցի, Սմբատ Շահազդիկի և այլոց նվիրված հոդվածները։ Նույն ժամանակաշրջանում հուշերով և կենսագրականներով հանդես են գալիս նաև Հր. Աճառյանը՝ Խրիմյան Հայրիկի, Գարեգինին եպս. Սրբանաւանցի, Ութեռու Պետքերյանի, Գարեգին Ա կաթողիկոս Հովհաննեացի մասին, Ավետիք Խասհակյանը «Եջմիածին» ամսագրին աշխատակցում է դարձալ Խրիմյան Հայրիկի, Թորոս Թորամանյանի մասին հուշերով։ Արխիվային հյութերի հրապարակման գործում կարևոր մասնակցություն է ցուցաբերել 1947—1950 թթ. Գրիգոր Հարությունյանը, որը նորահայտ հյութեր է դնում շրջանառության մեջ տունահայրություններով հանդերձ. Մ. Թաղիադ-

յանի, Միք. Նալբանդյանի, Խ. Արդվանի, Ղ. Աղայանի, Խրիմյան Հայրիկի, Գ. Սունդուկյանի, Սար. Շահազգի, 1812 թ. Բայրենական պատերազմին հայերի մասնակ-

ԱՐԵՎԻ

ՀԱՅՈՒԹԵԱՑՑ

九四

ԱՐԴՅՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՅԻ ՕՐՄԱՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՐԱՔ

### (Հայուսական Արքունի Ամսագիր)

ՎԱԴԱՐՑԱՆ

ъ земельнаго погоды чиркейской волости

1886-0311

Վերամիանարակություն Մայր Աթոռի, 1972 թ.

ցույշան վերաբերյալ: Այս շրջանում լուս է տևանում նաև Կոմիտաս վարդապետի սարկավագության շրջանում գրած «Ներսես Շնորհալին և նորա ժամանակը» անտիպ մնացած աշխատությունը:

Ամսագրում պատշաճ ուշադրություն է դարձվում նաև հայ միջնադարյան հուշաբանների ուսումնակիրման ու հրանց արձանագրությունների հրատարակման գործին։ Լույս են տեսնում Գեղամ Սարգսյանի միշտաքանչեղանքը՝ Ավելի ված Բարձրաքաշ վանքին, Անապատ կամ Նոր Վարագին, Դեղնուտին, Մակարավանքին և այլն։ Տիրապետ Մարտիկյանը (այժմ եակիսկ.)

գրում է Ծովիկի, Ամարասի և Գանձատարի հուշարձանների մասին:

Հայ եկեղեցու պատմության, Հջմիածնի  
անցյալին և հայ ականավոր հոգևոր գործիշ-  
ների կյանքի ու գործի ուսումնասիրությամբ  
հանդես են գալիս պիտոքահայ անձակի  
պատմաբան Արշակ Ալպյանցյանը, որ գրում  
է «Հայաբավանության շարժման մասին Հա-  
յատանուն և Հայատանից դրու» հոդվա-  
ծաշարը, Ռուբեն Եպիս. Դրամբյանը գրում է  
հայոց կաթողիկոսության պատմական դերի  
մասին: «Արարատ»-ի աշխատակիցներից  
Հովհաննի Գրիգորյանը (Ծեմարանցի) գրում է  
հոդվածաշար հայոց Վերանորոգիչ կաթո-  
ղիկոսների մասին, բանաստեղծ Եղվարդ  
Գոյանցյանը (Բոխարեստ) հուշեր է հրա-  
տարակում Մաղաքիա արքեպ. Օրիանցյանի  
և Եղիշէ արքեպ. Ռուբյանի մասին: Ռուբեն  
քին. Մարտիրոսյանը գրում է Ներսոս Աշ-  
տարակեցու մասին և այլն:

«Հշմիածին» ամսագիրը սկզբից և եւթ մեծ ուշադրություն է դարձնում աշխարհով մեկ սփոված հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրությանը: Այդ գործին ներգրավվում են ոչ միայն սփյուռքի, այլև հայրենիքի մուավորականները: Ռումինահայ և բուլղարահայ թեսերի անցյալի և ներկայի մասին ակնարկներ է հրատարակում Վազգեն եպս. Պալճանը (այժմ Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց), Սուրեն Քոյանջյանի ուսումնասիրությամբ հոդվածաշարեր են լույս տեսնում նաև Բուխարեստի «Հայ Մշակույթի Տաճ» և Բուխարեստի հայերի անցյալի և ներկայի պատմության մասին: Ուսումնասիրություն են նաև Եգիպտոսի (Գ. Մըրըլյան), Կիպրոսի (Ն. Մագսուտյան), Մարտրասի (Արամ Երեմյան) և պրոֆ. Ա. Արքահամյան), Երուսաղեմի (Նորայր եպս. Պողարյան), Խնդրնեզիայի և այլ հայ գաղթավայրերի պատմություններ: Այս շարքից կարևորագույն տեղ են գրակում հայ-ռուսական դարավոր բարեկամության նվիրված փաստաթյուների հրապարակումը (պրոֆ. Ա. Արքահամյան), դարձալ ուսահայ գաղթավայրերի պատմության, ինչպես նաև հայ տպագրության պատմության հետ սերտորեն առնչվում է Պարգև եպս. Գևորգյանի կողմից գրված Հովսեսի արքեպ: Արդությանի 18-րդ դարի վերջում Ռուսաստանում ծավալած տպարանական գործունեության մասին հոդվածաշարու:

Ներզադի և սիյուր-հայրենիք կապերի պատմության ուսումնասիրնան համար մեծ արժեք է Անրկայսցնում հան հանդեսի յուրաքանչյուր համարում լուս տեսած լուրերի բաժինը: Գրախոսությունների բաժինը ևս կարևոր էր ծամանակի հայագիտական արժեքավոր գործերին ծանոթանալու առումով:

Հնարիվող ժամանակաշրջանում հանդեսում արտատպվել են նաև բազմաթիվ հայագիտական արժեքավոր հոդվածներ, որոնց մասին սակայն խոսելը դարձյալ դուրս է մեր սույն հայացիկ ակնարկից: Հանդեսի խմբագրությունը, բաշակերելու նպատակով, երբեմն տեղ է հատկացրել նաև ճեմարանի սաների հայագիտական բնույթի պահպանության: Դրանցից հիշատակենք «Գրիգոր Մագիստրոսի լոլթերը» (Գորգեն Մուրադյան), «Ակների գրչության դպրոցը» (Մովսես Ղազարյան) և այլն:

Այսպիսով իր գոյության առաջին տարրադիմում «Էջմիածին» ամսագիրը դարձավ ոչ միայն հայրենիքում և Սովորական Միությունում, այլև բովանդակ սփյուռքում սիրելի և գնարված հայենին մի պարբերական: Ծնորհիվ Գևորգ Զ Հայրապետի, այև ժամանակավա խմբագիրներ պրոֆ. Ս. Անոքելյանի, Լ. Կիսիբեկյանի և դոկտ.-պրոֆ. Ս. Արքահամյանի, ինչպես նաև նրա շորջը համախմբված աշխատակիցների շանթերի, ամսագրի լույսնեաման գործը հաջողությամբ էր պակված: Գևորգ Զ Հայրապետը, փակելուց առաջ իր աշքերը, սրտ անհուն գործունակությունն ուներ, որ Մայր Աթոռը կոչված էր իր վերածնունդը ապրելու, և դրա հետ միասին իր իսկ հիմնարդած «Էջմիածին» համեստի պագան պահուված էր:

«Էջմիածին» ամսագրի հրատարակման հետագա 20 տարիների կյանքը սերտորեն կապված է կոսավորչի Աթոռի նոր գահակալի՝ Վազգեն Ս. Հայոց Հայրապետի հայրենանվեր ու եկեղեցաշնչն գործունեության հետ: Այս շրջանը իրավամբ կարելի է անվանել ամսագրի վերելի շրջան: Վեհափառ Հայրապետը, սկսած իր առաջին սրբաւոտ կոնդակից, բացառիկ ու ամենօրյա հոգատարությամբ շրջապատեց նաև «Էջմիածին» ամսագրի հրատարակման գործը: Այն օժտեց, առաջին անգամ լինելով, խմբագրական գրասենյակով և առանձին տպանանով և ապա նաև խմբագրական առանձին մարմանով: Վեհափառի հոգատարության և նոր խմբագրի Արթուր Հատիխյանի ջանքերով, ինչպես նաև տիրող բարենպատ պայմանների հետևաբար ամսագրի շորջը համախմբված աշխատակիցների մեծ թվի շնորհիվ հետևետե ճոխացավ և պայծառացավ նաև «Էջմիածին» ամսագրի հայագիտական բովանդակությունն ու տպագրությունը: Մեծացավ ամսագրի տպաքանակը, բարելավվեց թղթի և նկարների որակը և այլն:


«Էջմիածին» ամսագրի վերելի և ծաղկման այս շրջանի հիշատակությամ արժանի կարևորագույն երևույթներից են հորելյանների կապակցությամբ բացառիկ և իր

նախընթացը չունեցող համարների լույսը ծայրմարդությունը: Հնարավոր եղավ նաև ամսագրից առանձնատիպով լույս ընծայել մատենագիտական մնայուն արժեքի գործեր, ինչպես նաև ամսագրի խմբագրությունը համարել Մայր Աթոռի հրատարակչականը:

«Էջմիածին» ամսագրի հրատարակման վերջին 20 տարիների ընթացքում աշխատակիցների թվի աճի հետ միասին մեծանում է նաև ուսումնասիրվող հայագիտական հյուղերի ոլորտը: Ամսագրի էշերում, բացի նախապես գոյություն ունեցող հայագիտական հյուղերից, ի հայտ են գալիս նաև հոդվածներ՝ նվիրված հայերեն ձեռագրերի կազմերին, հայ դպրոցի, հայ տպագրության և հայ մամովի պատմությանը, լայն կերպով ուսումնասիրության է ենթարկվում Աստվածաշնչի հայերեն բնագիրը և տպագրությունները, դարձյալ առաջին անգամ լինելով, ամսագրում տեղ է տրվում այլակազու հայագիտական հին գրականությունից կատարված թարգմանություններին, լույս են տեսանում մատենագիտական բնույթի հոդվածներ և այլն, և այլն: Հիշատակության արժանի է այն փաստը, որ «Արարատ»-ի աշխատակից մեր մեծ երախտագործերի սերնդից մետու, որոնք «Էջմիածին» ամսագրի առաջին տասնամյակին հիմնականում իրենց ձեռքում էին պահում հայագիտության դրոշը, հաջորդ շրջանում ամսագիրը ունեցավ իր ավագ, միջին և նոր սերունդները, որոնք զանացին բարձր պահել իրենց մեծ նախորդներից ստացած դրոշը: Այս առթիվ չպետք է մոռանալ նաև հատկապես Մաշտոցյան Մատենադարանի, Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի, Զարենցի անկան գրականության և արվեստի թանգարանի և այլ ուսումնական, հայագիտական հաստատությունների, այդ թվում պատմաբանների, բանասերների և արվեստաբանների ցուցաբերած աշակցությունը «Էջմիածին» ամսագրի հայագիտական հյուղերի հրատացման գործում:

Վերջին քառա տարիներին և ամսագրում շարունակվեցին լայն տեղ հատկացվել հայ ձեռագրագիտությանը, մեր անտիպ մնացած արժեքների ուսումնասիրմանը և հրատարակմանը: Շարունակարար լույս է տեսանում ։ Միքայելամի կողմից կազմված Մայր Աթոռ և Էջմիածին նոր ստուգած ձեռագրերի ցուցակը: Ամսագրում վերջին տարիներին հրատարակել են նաև դոկտ. Գևորգ Արգարյանի կողմից Զրառատ գյուղում իր տեսած հինգ ձեռագրերի ցուցակը, Նորայր արքեակ. Պողարյանը լույս է ընծայում մի հոդված Երևանի և Հակոբյան վանքի ձեռագրատանը պահվող ներսես Շնորհալու ձեռագրի աշխատությունների

մասին և այլն: Այժմ Մաշտոցյան Մատենադարանի անընդհանուր մասը կազմող, սակայն անցյալում տարբեր անձանց և տարբեր հաստատությունների սեփականությունը եղող ձեռագրերի բացահայտմանն է նըւիրված Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրատան ավանդապահ ՕԾՆիկ Եղանիանի կողմից 1970 թ. սկսած ամսագրի Եղբուս հրատարակած մեջ թվով ցուցակները, որո



## Ալյադ, Ստեփանոս Մալխաչյան

Քերվում են համեմատական տախտակներ գրչագրերի հին և ներկա համարների մասին։ Նա կարողացել է բացահայտել երբեմն Գևորգյան ձևմարանում, Երնջակի և Կարպետ վանքում, Գանձասարում, Թարգմանչաց վանքում, Լենինգրադի պետական Էրմիտաժում, ինչպես նաև Գր. Խալթյանի, Մ. Բրունի, Կարպետ արքեպ. Բագրատունու, Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի և այլ վայրերում ու անձանց մոտ պահված գրչագրերի հավաքածուները և ցոյց տվել, թե դրանցից որքանն է այժմ պահվում Մաշտոցյան Մատենադարանում, և ինչ համար են կրում։ Դարձաւ հայերեն ձեռագրերի պատմության ու վիճակված ճակատագրին է վերաբերում «Հայկական կոտորածները» հոդվածաշարը (Սուրեն Քո-)

լանջանի, 1965—1967 թթ. տպագրված և  
անհարու մնացած), որը ոստինափրկվել  
է Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիա-  
ի հայաբնակ նախաճաներում, գավառնե-  
րում և քաղաքներում պահված գրչագրերի  
ոշնչացման և փորկույան պատմությունը:

Իր մի շաբք հոդվածներում Հայկ Տեր-Ղեցինոյանը ուսումնասիրում է Մաշտոցյան Մատենադարանում պահպող մի քանի ձեռագրերի արծաթյա կազմերը: Ուսումնասիրության կողմ են դատևում հան հայ գրչության տարրեր կենտրոններից Լիմ Անապատը, Սահահինն ու Հաղպատը (Բեղինակ՝ Արտ. Մատթեովան), Մոկաց աշխարհի և Կարապետ վանքը և Փութելու և Գևորգը (Ա. Շահինյան) և այլն: Իոցեան Հակոբ Միհթարյանն ուսումնասիրում է հայերեն ձեռագրերի կետադրությունն և հայ քերականների վաստակը:

Սկսում են ավելի հաճախակի ուսումնական սիրվել հայերեն ձեռագրերի մանրանկարչական արժեքները: Հայաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, պրոֆ. Միքայել Տեր-Ներսեսյանը հրատարակում է Երգևկայի 1269 թ. Ասովածածանչի վերաբերյալ իր ուսումնասիրությունը: Բանասեր Արամ Երեմյանը առանձին հոդվածներով անդրադառնում է գրիչ, ծաղկող և ուկող Օքտենտ արեղային և այլ մանրանկարիչներին, ուսումնասիրվում է Էջմիածնի միաբան, Ծաղկարար Սահակ եպս. Տեր-Գրիգորյանի կյանքը (Վահան եպս. Տերյան) և հրատարակվում է Արա անտիպ մնացած «Բազմավեպ» հիշատակարանը (հրատ.՝ Սեղա Ավդարելյան): Ամսագրում լույս է տեսնում Ան Մայր Աթոռի մի այլ միաբան՝ Մեսրոպ Վրդ. Մարտունյանի «Կենդանագրի ծագումն ու զարգացումը հայ մանրանկարչության մեջ» անտիպ ուսումնասիրությունը (հրտ.՝ Ս. Ավդարելյան): Մաշտոցյան Մատենադարանի գիտական աշխատող Հրավարդ Հակոբյանն առանձին հոդվածներով ուսումնասիրում է Վասպորականի հայ մանրանկարիչների ժառանգությունը և այլն:

«Էշմիածին» ամսագրի այս շրջանի համարներում մեծ թիվ են կազմում մեր միջնադարյան մտսենագիրների անտիպ մնացած գործերի ուսումնափրումն ու հրատարակումը: Այստեղ ուշագրավ են Հայք: ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ պրոֆ. Լևոն Մելիքսեռ-Բենիկի կողմից Հովհաննես Վանական Տափուկեցու, Մխիթար Գոշի անտիպ երկերի հրապարակումը, ինչպես նաև Պողոս Տարոնեցու և Մայթ հայերի, «Գիրք թղթոց»-ի և այլ հյութերի շորջ գրած հոդվածները: Այս բնագավառում պատկանելի վաստակ ունի հա-

յագես՝ Հակոբ Անապյանը, որ ամսագրում հրատարակության հանձնեց Գրիգոր Շրջայակի անտիպ տաղերը և զբաղվեց նրանց վերծանությամբ, հայտնաբերեց Թովմա Սգովեցի մատենագրին և հրապարակեց նրա անտիպ գործերը, հայտնաբերեց Վարդան Այգեկցու «Արմատ հայատոյ» դավանաբանական ժողովածուն ու նրա մասին երկու հոդված հրատարակեց և այլն: Հ. Անապյանի հայագիտական վաստակին և մասնավան «Էջմիածին» ամսագրում նրա աշխատակցությանը անդրադարձել ենք առանձի՞ն: Կիրակոս Վոր. Եղբակացու անտիպ տաղերի ոստոմահիրմամբ և հրատարակմամբ է զբաղվել ամերիկահայ բանասեր Հարություն Քյուրիտյանը: Մատենադարանի գիտական աշխատակից Արմինե Քյոշկարյանը հրատարակել է Սովորել Բաղիշեցու անտիպ Գանձարանի նյութերը: Ամսագրի էջերում լույս են տեսել նաև մեր միջնադարյան հայ մատենագիրների անտիպ մնացած մի շարք գործերը. դրանցից են Գրիգոր Մարտիքու (Քրտ. Հ. Մելքոնյան), Արիստակես Լասիվերտյու (Գ. Մ. Մանուկյան), Հովհանն Որոտնեցու (Ը. Մ. Բաղդասարյան), Մատթեոս Չուղակցու և այլոց անտիպ մնացած գործերը: Համեմատական բնագրով լույս է տեսել Վրթանես Քերթողի «Յաղաս պատկերամարտից»-ը (Երվ. Մելքոնյան), Մայր Աթոռի երիտասարդ միաբան Եղիշիկ արեւադասությանը հրատարակել է Մովսես Եղբակացու «Ընդդիմությին սակա շրյան խառնման ի սուրբ խորհրդին ի թոփին հայոց .2Ծ.» դավանաբանական դուռը և այլն:

Հայ մատենագիրների կանքին ու ժառանգության ուսումնասիրությանը նվիրված քածնում առաջնակարգ տեղ է գրավում Հրաչյանի «Մեսրոպ Մաշտոց» գործը, որը լույս է տեսել «Էջմիածին»-ում հեղինակի մահից հետո, 1954—1961 թթ., որոց ընդհատումներով: Այն մինչև օրս հայության մեծագոյն հաճամարդին նվիրված ամենանդարձակ ու հանգամանալից ուսումնասիրությունն է: Ամսագրում լույս են տեսել նաև Մեծն Ներսես Հայրապետի (հեղինակ՝ Հրանի Ք. Արմեն), Միսիթար Գոշի (պրոֆ. Սովորել Սովորելյան), Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Տղայի (դոկտ. Գ. Հակոբյան), Գր. Տաթևիացու (Գևորգ ծ. Վոր. Կարպիսյան), Ղազար Փարպեցու (Զ. Հարությունյան) մասին հոդվածներ, Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի» վերծանությունը (դոկտ. Գ. Արգարյան), Շնորհալին որպես մատենագիր (Արթոն Հատիսյան) հոդվածը և այլն:

Հանդեսում թարգմանարար ընդգրկվում են նաև այլ լեզուներով գրված, սակայն հայ մատենագրության հետ սերտորեն կապված գործեր: Լույս են տեսնում Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ մի իմրեագրությունը (Հր. Բարյիկյան և Ար. Տեր-Ղևոնյան), Ագաթանգեղոսի նորահայտ արարերեն համառոտումը (Արամ Տեր-Ղևոնյան), ասորերենից թարգմանարար ներկայացվում է «Հայ Թովմասի վարքը» (Հայկ Մելքոնյան) և այլն: Մեր դասական թարգմանությունների վերաբերյալ հրատարակվում են՝ Հերմեն փիլիսոփայի աշխատության հին հայերեն թարգմանությունը (դոկտ.-պրոֆ. Ա. Արքահամյան), ուսումնավիրվում է Բարսեղ Կեսարացու կյանքը ու ճառերը (Կ. Մ. Մուրադյան) և այլն:

Հանդեսում լայն տեղ է տրվում նաև հայ ժողովրդի պատմության տարրեր ժամանակաշրջաններին վերաբերող հարցերի լուսաբանմանը: Շարունակարար լույս է տեսնում ակադ. Հակոբ Մանանյանի «Համառու տեսություն Հին Հայաստանի պատմության» գործը: Արտաշես Տիրացյանն ուսումնասիրում է Կիլիկյան Հայկական պետության սեփական հավատորմ ունենալու հարցը, Պարգև եպս. Գևորգյանը՝ Վարդանանց պատերազմը և այլն: Ամսագրում ուշագրավ նյութեր կան նաև Մեծ եղենին և հայերի հերոսական պաշտպանություններին նվիրված: Կարսոր են Արշակ Սահմանականի հրապարակած Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրությանը ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները, որոնք մեծ լույս են սփռում մինչև եղենը Արևմտան Հայաստանում և Թուրքիայում գոյություն ունեցող հայկական հուշարձանների վրա: Փատական հարուստ նյութեր կան դարձալ ն. Միքայելյանի կողմից հրատարակված «Արմիվային նոր նյութեր Արևմտան Հայաստանի հայ ժողովրդի կիծակի մասին 1912—13 թթ.» վավերագրերի ժողովածում: Ուրվագծված են նաև հայկական հերոսամարտերի պատմությունը, Վամի (դոց. Հ. Հարությունյան), Այնթապի (Արթ. Հատիսյան), Շատախի (Հայրիկ Մուրադյան), Սարդարապատի (Հ. Թորշյան) և այլն:

Հարուստ էջեր կան նվիրված նաև հայ եկեղեցու և տարրեր դավանության պատկանող հայերի ու հայ նշանավոր հոգևոր գործիչների կյանքին: Արսեն եպս. Բերբերյանը հրատարակել է «Հայ անգիկաններ Ժմ դարի երկրորդ կեսին» իր ավարտաճանից մի հատված, Հ. Թորշյանը՝ հայ-հարե-

<sup>3</sup> «Էջմիածին», 1974, սեպտեմբեր, էջ 53—64:

շական եկեղեցիների առնչությունների մասին և այլն:

Մայր Աթոռի պատմության վերաբերյալ ուշագրավ են «Համառոտ ակնարկ Մայր Աթոռ և Եջմիածնի պատմության» (1920—1967 թթ., հեղինակ՝ Արթ. Հատիսյան) և Ամենայն Հայոց կաթողիկոսների շիրմները (Վահան Տապան Տերյան) Բողվաճաշարերը: Ծարտարական Սահինյանը հանդես է գալիս Մայր տաճարում իր ղեկավարությամբ կատարված պեղումների մասին և այլն:



Ավետիք Խանջյան

Հայ մեծ եկեղեցական և հասարակական գործիչների կյանքի ուսումնասիրությանն են նվիրված քազմավաստակ հայագետ պրոֆ. Հ. Շ. Միրունի՝ Օրմանյանին, Եղիշե արքեպ. Դուրյանին, Գարեգին պատրիարք Խաչատրյանին և մանավանդ Կոմիտաս վարդապետին՝ «Կոմիտասին հետո» գործերը, որոնցից Վերջինը լույս տեսավ որոշ ընթատումներով, 1965—1969 թթ., և որը փաստորեն ընդգրկում է նաև հայ երաժշտության մեծ հանճարի ապրած ժամանակաշրջանի պատմությունը: Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը հրատարակում է «Օրմանյան որպես պատմաբան» հոդվածը: Լույս են տեսնում նաև Օրմանյանի նամակները՝ ողարկված Երևանու Տեր-Մինասյանին, ինչպես նաև Խորհմյան Հայրիկի և Գարեգին արքեպ.

Հովհաննեսցի նամակները (հրտ.՝ Գոհար Ազնավուրյան), Գ. արքեպ. Հովհաննեսցի օրագիրը (Ավետիք Արամյան), Ս. Բեկրուտյանը հոդվածներ է նվիրում Վահան վրդ. Բատումյանցին, Սահմակ վրդ. Անատոլուն և այլն: Դանիել Վարուժանի մասին հուշերով հանդես է եկեղ բազմավաստակ հայագետ Հ. Մ. Պոտորյանը:

«Եջմիածն»-ում ուշագրավ հյութեր են հրատարակվել նաև հայ դպրոցի պատմության վերաբերյալ: Վահան Տապան Տերյանը մի շարք հոդվածներով որվագծել է Եջմիածնի դպրոցի պատմությունը, Գևորգյան ձեմարանի վերաբերյալ հուշեր են գրել Գ. Շիրմազակյանը և Խ. Կանայանը: Հարուստ է եղել նաև հայ միջնադարյան հուշարձանների ուսումնասիրությամբ ու հրանց արձանագրությունների հրատարակումը: Հովհաննեսցի Եղիազարյանը հոդվածներ է նվիրել Հաղպատիկին, Ամբերդի, Կեչառիսի, Մարմաշենի, Հառինի, Սահմանին, Նոր Գետիկի, Սաղմոսանքի, Քշնիի, Հավուց թափի և այլ վանքերին: Դարձյալ հայ վանքերի և արձանագրությունների ուսումնասիրությամբ հանդես են եկեղ դրկութ.-պրոֆ. Կ. Ղափադարյանը, Ս. Բարխտուրյանը, Ս. Ավագյանը, Ն. Տոկարսկին, պրոֆ. Երվ. Տեր-Մինասյանը, Յու. Թամանյանը, Բ. Ովորյանը և որիշները: Հայ ճարտարապետական կոթողների մասին ուսումնասիրություններ են գրել ճարտարապետներ Հ. Խալիխաչյանը, Արշավիր Թորամանյանը (Քիշն): Հայկական խաչքարերի արվեստին են նվիրված Ս. Ն. Շամինյանի և Առաքել Պատրիկի հոդվածները: Ակնույթ 1293 թ. մասնատուի պատվիրատու Կոստանդին Եպիսկոպոսի հեթոնության մասին է գրել դրկութ.-պրոֆ. Ասատոր Մնացականյանը: Հ. Ասմարյանը ուսումնասիրության է ենթարկում Գագկաշեն տաճարից գտնված բորվարը և այլն:

Ամսագրում հրարուստ հյութեր կան նաև հայ գաղթավայրերի պատմության վերաբերյալ: Պրոֆ. Հ. Շ. Միրունին այսուել է, որ սկսեց հրատարակել «Պոյխու և իր դերը» բազմահատոր աշխատության առաջին և մասամբ երկրորդ հատորները (1962—1964 թթ.), որոնցից առաջինը հետագալում լույս տեսավ առանձին գրքով, Բեյրութում, 1965 թ.: Լույս են տեսնում նաև Հնդկաստանի (Դ. Եպս. Փողադյան), Խոտակիայի (դոց. Ա. Տիրացյան), Պորտուգալիայի և Բրուսայի (Ա. Ալպոյանյան), Բուլղարիայի (Ա. Փաշանյան, Արա Մարկոս), Եգիպտոսի (Հ. Թոփուզյան), Հողանդիայի (Մ. Շիհանյան, Մ. Հովհաննես), Թրակիայի (Մ. Հ. Բարթիկյան), Վրաստանի (Ս. Ավշյան) և Տրանսիլվանիայի հայ գաղթավայրերի (Սուրեն

Քոլանցյան) մասին հոդվածներ: Կան նաև օտար հայագետներ S. Մանկովսկու լեհա-հայերի արվեստին վերաբերող և Ֆր. Մակ-լերի Հայաստանը և Խաղաղիան հոդվածները: Նշենք նաև, որ հետագայում հայ սփյուռքի պատմության ուսումնասիրության համար արժեքավոր են նաև ամսագրում տարբեր թեմերի մասին հրատարակված տեղեկություններն ու մանավանդ Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի կողմից Արտասահմանում կատարած ողջուրությունները:

Հայ ազգագրության վերաբերյալ լույս են տեսնում հոդվածներ նվիրված Գ. Եպս. Սըրվանեալությանցին և Սոտ. Լիսիցյանին (Բեղինակ՝ Վ. Բեղյան), ուսումնասիրվում է Նոր Չուղայի ժողովրդական բանահյուսությունը (Արամ Երեմյան) և այլն:

Տոմարագիտական հոդվածներով աշխատակցել են մասնագետ գիտնականներ Բ. Թումանյանն ու Հ. Ս. Բադալյանը: Լույս են տեսել նաև հայկական դրամների և մերակների մասին հոդվածներ (Բեղինակներ՝ Խ. Մոշելյան, Հ. Սարգսյան) և այլն:

Հիշատակության արժանի են հայ նորահյուս հնատիպ գրքերի և հայկական տպարանների պատմության վերաբերյալ տիկ. Ծովանիկ Ծահնազարյանի, Նինել Ուկանյանի, Քնարիկ Կորլուտյանի, Ռաֆայել Եշիանյանի, Հայկ Դավթյանի և Խաչիկ Սամվելյանի կողմից գրված հոդվածները: Այս արժիվ անոր է հիշել նաև Էջմիածնի տպարանի հիմնադրման 200-ամյակի առթիվ հրատարակված բացառիկ համարը և ցարդ անտիպ մնացած Արտակ եւս. Սմբատյանցի «Ա. Էջմիածնի միաբանության գրակակրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը» մենագրության պարբերաբար լույսընծայումը: Պետք է նշել նաև, որ հայ պարբերական մամուլի պատմությունը ևս չի անտեսվել «Էջմիածն»-ում: Ա. Գրիգորյանը հրատարակեց «Ակնարկ հայ կրոնական մամուլի պատմության վրա» հոդվածը: 1968 թ. վերջին լույս տեսավ «Արարատ»-ի հարյուրամյակին նվիրված «Էջմիածն» ամսագրի բացառիկ համարը՝ ճոխ բովանդակությամբ: Եվ վերջապես, դարձալ ամսագրի էշերում, 1968—1970 թթ. և 1973—1974 թթ. լույս տեսան «Արարատ» ամսագրի 50 տարվա և «Էջմիածն» ամսագրի 30 տարվա հյութերի մանրակրկիտ մատենագիտությունները (կազմով՝ Ա. Կոծինյան), որոնք կարևոր նշանակություն կունենան ոչ միայն հայ մամուլի պատմությամբ, այլև հայագիտության տարբեր հարցերով գրադրության համար:

Ամսագրում լույս տեսան նաև հայ և օտար հայագետների կյանքին ու գիտական ժա-

ռանգությանը նվիրված հոդվածներ և նըրանց հայագիտական գործերի մատենագիտությունները: Այդ շարքից են. պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկի (Բեղինակ՝ Պ. Մուրադյան), Նորայր Բյուզանդացու (Գ. Արգարյան), Գարեգին Ա. կաթողիկոս Հովսեփյանցի, հ. Հ. Ռուկանի, պրոֆ. Հ. Շ. Սիրունու, Արտակ Եպս. Սմբատյանցի, դոկտ.-պրոֆ. Վաղարշ Բընըցեանուի, Գեորգի Բեգվիկոնիի մասին գրվածները և այլն: Դարձալ մատենագիտական բնույթի էին՝ «Հայ պատմության սկզբանադրյունների հրատարակումը Սովորական Հայաստանում», «Հայ պատմագիրների հրատարակումը և Էջմիածնի տպարանը» և այլ հոդվածները:

«Էջմիածն» ամսագրում հայագիտության զարգացման համար կարևորագույն ազդակ հանդիսացավ հիշարժան հորելյանների առիթով Վեհափառ Վազգեն Ա. Հայրապետի սրբաւագ կոնդակների միշոցով նախաձեռնված բացառիկ ու ճոխ համարների հրատարակումը: Այդպես է, որ Մայր Աթոռու կոչով ոգեշնչված հայրենիքի և սիյուռի բազմաթիվ հայագետներ իրենց սիրահուժար աշխատակցույթունը բերեցին ամսագրին: Անապիսի ճոխ ու ստվար բացառիկ համարներ, ինչպիսիք էին Եղենը 50-ամյակին, Սւտվածաշնչի հայերեն տպագրության 300-ամյակին, «Արարատ» ամսագրի 100-ամյակին, Մայր Աթոռի տպարանի հիմնադրության 200-ամյակին, Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին և այլ հորելյաններին նվիրվածները եկան իրենց արժանի տեղը գրավելու ոչ միայն «Էջմիածն» ամսագրի, այլև Ռենհանրապես մեր հայագիտական ամսագրերի պատմության մեջ:

«Էջմիածն» ամսագրի լույսընծայումը, նոր կոչումն ու տարեկությունը, ինչպես նաև նորանում ընդգրկված հայագիտական նյութերը հաճախ է, որ գնահատանքի են արժանացել նաև սիյուռքահայ մամուլում և մտավորականության առանձին համակենրություն: Իրանում լույս տեսնող «Վերածնունդ» թերթը, գնահատելով «Էջմիածն» ամսագրի լույսընծայումը, նշում էր, որ այնուն կան մի շարք խիստ շահեկան ու կարևոր հոդվածները, որոնք վերաբերում էին պատմաբանասիրական նյութերին<sup>4</sup>: Նյու-Յորքի «Հայաստանյաց եկեղեցի» ամսագրը գրում էր «Էջմիածն»-ում լույս տեսած պատմագիտական ուսումնասիրությունների մեծարժեք լինելու մասին<sup>5</sup>: Բուխարեստում անցյալում լույս տեսնող «Հայաստանյան ճակատ» թերթը, ավետելով «Էջմիածն» ամսագրի հրատարակման մասին, նշում էր,

<sup>4</sup> «Վերածնունդ», Թեհրան, 1944, 93—593:

<sup>5</sup> «Հայաստանյաց եկեղեցի», 1944, 9:

որ նա մի մեծ պակաս է լրացնում, որը գոյացել էր «Արարատ»-ի դադարումից հետո, և բարձր էր գնահատում լուս տեսած հայագիտական հողվածների արժեքը<sup>6</sup>: Ուստինաշահայ ազգային Ստեփան Եսայանը «Էջմիածին»



Պրոֆ. Հակոբ Ռ. Սիրումի

ծին» ամսագրի բովանդակությունը նմանեցնում էր «ուսիի հանքի մը, որ մոլոր ծոցն ուուրս լուսի միջոցով մեզ կորկվի իր բանկագին արտադրությունը՝ մեր ազգային թե կրոնական մասամբ պակաս սեռուղը ավելի ճնշացնելու և հարստացնելու համար»<sup>7</sup>:

Նման վկայությունները շատ-շատ են, սակայն մենք բավարարվում ենք միայն այս քանուկ: Ինչ վերաբերում է վերջին տարիներին հրատարակված բացառիկ համարներին, նրանք մեծ չափով նպաստեցին Ե՛լ ավելի բարձրացնելու «Էջմիածին» ամսագրին դերը, արժեքն ու հեղինակությունը և մեծ խանդավառություն ստեղծեցին ամենուրեք: Շատ նյութեր արժանի համարվեցին գրախոսվելու և կամ արտատպվելու սիյուրահայ մամուլում և կամ իրեն ատաղձ օգ-

<sup>6</sup> «Նպաստամյան ճակատ», Բուխարևստ, 1947, առևմբերի 30:

<sup>7</sup> «Էջմիածին», 1950, Բուխս-օգոստոս, էջ 80:

տագործվեցին գիտական աշխատությունների համար: Նշենք միայն «Էջմիածին» ամսագրի Աստվածաշնչի հայերեն տպագրության 300-ամյակին նվիրված բացառիկ մասին, որը բաղկացած էր 250 էջերից, ուներ գիտական հարուստ բովանդակություն և զարդարված էր գունավոր և միազույն բազմաթիվ ներդիր և նկարներով: Այն բարձր գնահատական արժանացավ հայ մամուլի կողմից: Հիշենք միայն հեյրություն լուս տեսնող «Զարթոնք» օրաթերթը, որն առանձին երեք համարներում դրվագատական նվիրեց նրան:

Հայագիտության համար ոչ պակաս նշանակալից էր նաև ամսագրում լուս տեսած մի շարք նորվանաշարերի իրեն առանձնատիպ հրատարակությունը: Այդպիսի հերթին պետք է նիշել «Արարատ»-ի 50-ամյա հյութերի մատենագիտության հրատարակումը (կազմող՝ Ս. Կոծինյան, Խմբագիրներ՝ Ս. Քոլանչյան և Ա. Հատիսյան), որը դարձավ հայ պարբերական մամուլի պատմության մեջ առաջին լիակատար և օրինակելի մատենագիտությունը և միաժամանակ հայրենիքի և սիյուռքի հայագիտական գրադարանների ամենաօգտագործելի մատյաններից մեկը, որն արժանացավ դրվագատական գրախոսականների: Նույն ձևով հրատարակության արժանացավ նաև Արտակ եւս: Սմբատյանցի Էջմիածնի տպարանին նվիրած մենագրությունը, որը շուրջ կես դար անտիպ էր ննացել: Երբեն առանձնատիպ լուս տեսավ նաև Հ. Անայանի «Հայ համարարրատային գրականությունը և հայ մատենամգրության համարարրատը» արժեքավոր երկը:

Շուտով իրեն առանձնատիպ լուս կտեսնի նաև ամսագրում պարբերաբար հրատարակված «Էջմիածին» ամսագրի 30 տարիների հյութերի ընդարձակ մատենագիտությունը, իր հարակից ցանկերով հանդերձ (կազմող՝ Ս. Կոծինյան, Խմբագիրներ՝ Ս. Հատիսյան, Ս. Քոլանչյան), որը լրիվ պատկերացում կտա ամսագրի բովանդակության և արժեքի մասին: Հետագայում, իրեն առանձնատիպ, կարելի է լուս ընծայել նաև դարձյալ ամսագրում պարբերաբար հրատարակված ընդարձակ ու արժեքավոր երկեր, որոնցից են ակադ. Հր. Անայանի «Մեսրոպ Մաշտոց»-ը, պրոֆ. Հ. Ռ. Սիրումուն «Կոմիտասին հետ» երկը, դարձյալ նրա գրած հայ նշանակություն ունեցողականներ Օրմանյանի, Եղիշե Դուրյանի և Գարեգին Խաչատրյանի մասին հուշերը, և այլն:

Հայագիտության զարգացման համար նշանակալից երեսով հանդիսացավ նաև «Էջմիածին» ամսագրին առընթեր ստեղծ-

ված հրատարակչականը, որը լուս ընծայեց պրոֆ. Հ. Շ. Սիրունիի «Հայ եկեղեցին ոումն հոդի վրա» և «Նիկողա Յորգա» միհատորյակը, Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետի ոուկորությունների հատորները, որոնք կարեն ավանդ են հանդիսանալու պատմագիտության համար հայրենիք-ափոյոր կապեր, հայ և այլ ժողովորդների բարեկամության և հայ սփյուռքի պատմությունն որվագծելու գործում։ Լուս տեսան հան «Հայկական եկեղեցիներ» և «Հայկական խաչքարեր» խմանված պրոմները, դարձյալ Վեհափառ Հայրապետի հախածեռնությամբ և հսկողությամբ և որոնք հարուս հյութ են ընձեռում հայ արվեստի պատմությամբ հետաքրքրվող հայ, և ոչ միայն հայ, մասնագետների համար։


Կրոնական իր կարևոր հշանակությունից բացի, մշակութային, հայագիտական մեծ երեխոյթ էր հան Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության 300-ամյակին (1666 թ., Ամստերդամ) նվիրված չորս Ավետարանների և Գործք առաքելոց-ի գրաքարից, անգլերեն և ֆրանսերեն գիտական հրատարակությունների համեմատությամբ, արևելահայերեն նոր թարգմանությունն ու հրատարակությունը 1970 թվականին Մայր Աթոռի տպարանից, թարգմանությունն, որ կատարել են, Վեհափառ Հայրապետի հրամանով, հոգևոր ճեմարանի դասախոսներ Արքուն Հատիութանը, Պարգև Շահրազյանն ու Սամվել Սեբուլյանը։


Այժմ մամուլի տակ է լույն թարգմանիշների աշխատակցությամբ ամբողջ Նոր Կոտակարանի 27 գործերի թարգմանությունը, այդ թվում չորս Ավետարանները և Գործք առաքելոց-ը (Երկրորդ տպագրություն), Առաքելական և Ընդհանրական թղթերը և Հայունության գիրքը։

Անա շատ համատու ամփոփումը՝ «Էջմիածին» ամսագիր հայագիտական 30-ամյա գործունեության։ Մենք տեղի սղության նետևանքով հնարավորություն չունեցանք նշելու անգամ հրան աշխատակցող բոլոր

հայագետների անունները և կամ գեյթ ամենադուզը չափով անդրադառնալու հիշատակված նորվածների գիտական արժեքին և հանակությանը։ Սակայն կարծում ենք, որ Երեկա հպատական ակնարկն իսկ որոշ չափով կնպաստի հաստատելու համար այն իրողույթընը, որ Մայր Աթոռի ամսագիրը, ի շարք իր բազմաթիվ հապատակադրումների, հայագիտության ասպարեզում ևս պատվով է կատարել իր պարտավորությունները։

Եթե տարիներ առաջ Մայր Աթոռի երթեմնի պաշտոնաթերթ «Արարատ» ամսագրի լույսընայման 100-ամյակի առթիվ, խոսելով հրա կողմից հայագիտությանը մատուցված մեծ ծառայությունների մասին, հզում էինք, որ հայ բովանդակ Արևելյան Հայրատանում միակ երկարակյաց և լուրջ հայագիտական հանդեսն է եղել, ապա այժմ, երբ գրում ենք «Էջմիածին» ամսագրի 30-ամյակի առթիվ, հրա հայագիտական հյութերի մասին, պետք է սրտի մեծ գործուակությամբ հշենք, որ հայ այլու «Արարատ»-ի հման միակը չէ այդ ասպարեզում, որ մեր հայրենիքի վերածնության հետ միասին ծնունդ առած մի շարք հայագիտական հաստատություններ, ինչպիսիք են Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիան, Մատուցված Սատենադարանը, պետական համալսարանն ու պետական արխիվը, մեր թանգարանները և այլն, ստեղծել են իրենց հայագիտական պարբերականները։ Այժմ փաստ է, որ Հայաստանն է դարձել հայագիտության կենտրոնը ամբողջ աշխարհում, և այսօր շատ ավելի մեծ պարտավորություններ են դրվագ մեր երկրի հայագետների վրա, քան առաջ։ Եվ անա ուրախությամբ պետք է նշել, որ հայագիտական մի շարք պարբերականների հետ միասին «Էջմիածին» ամսագիրը ևս, պահպանելով «Արարատ»-ի ավանդները, իր կարևոր լուման է շարունակում մուծել հայագիտության Ել ավելի ծաղկման գործում ի փառ հայ մշակույթի։





## Ս. ԱՆԹՈՍՅԱՆ

(Բանասիր. գիտ. թեկնածու, դրցենու)

### ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԷՇՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԷՇԵՐՈՒՄ

Հայագիտությունը և մասնավորապես հայերենագիտությունը միշտ է պատշաճ տեղ է գրավել մեր եկեղեցական պատունաքերթերուն: Այսօր, երբ մենք հասարակագիտական-հայագիտական մի քանի հանդեսներ ունենք, «Էշմիածին» ամսագրում ևս լուս են տեսնում ճանաչված հեղինակությունների հայագիտական հոդվածները: Լեզուն լոկ հաղորդակցման միջոց չէ, մայրենի լեզվի մեջ խտացած են տվյալ ժողովրդի հավաքական հոգեբանությունը, ըմբռնումները, մշակութային նվաճումները և այլն: Իր մայրենի լեզուն օգտագործելը որևէ ժողովրդի գոյատևման մեծագույն և հավիտենական առհավատչան է: «Էշմիածին» ամսագիրը միշտ է դեմ է եղել այնպիսի ոչ ճիշտ դատողությունների, ըստ որոնց իրը թե այլակազ միշավայրում հայ մարդուն կարելի է հայ պահել միայն եկեղեցով: Դեռևս 1949 թ. մարտ-ապրիլ համարելում «Էշմիածին» ամսագիրը, ի պատասխան ամերիկահայերի «Հայաստանյաց եկեղեցի» հանդեսում 1948 թ. հունիսին տպագրված մի հոդվածի<sup>1</sup>, խմբագրականում գրում էր.

<sup>1</sup> «Հայաստանյաց եկեղեցի» հանդեսի 1948 թ. հունիսի համարում տպագրված «Հայերենը Ամերիկայի մեջ» հոդվածում կարդում ենք. «Ը վերջոյ լեզու ըստուածը, որ կերպընկալ հրականութիւն մըն է, ունի

«Միանգամայն վտանգավոր ու վնասակար են հայ լեզուն ու հայ դավանանքը միմյանցից անջան դիտելու, միմյանց հակադրելու.... նմանօրինակ փորձերը» (Էջ 7): Այս առջիվ հշենք, որ նորին Սրբություն Վազգեն Ա կաթողիկոսը, դեռևս ոռոմինահայ թեմի առաջնորդ, 1950 թ. «Էշմիածին» ամսագրում տպագրել է մի բովանդակալից հոդված՝ «Մեր հարազատ լեզուն» վերևագրով, որի մեջ բացահայտում է վերոհիշյալ դատողությունների վնասակար լինելը. «Լեռու մեզմն այն մոլորությունը, թե առանց հայ լեզվի կրնանք հայությունը կենդանի պահել միայն կրոնով ու եկեղեցական պաշտամունքով», կարդում ենք Վեհափառի այդ հոդվածում: Միանգամայն իրավացիորեն «Էշմիածին» ամսագիրը Վեհափառի սովոր հոդվածը ընթերցողների ուշադրությանն է հանձնել նաև մեկ տասնամյակ հետո՝ վերատպելով 1950 թ. փետրվարի համարում: Նման զգաստացուցիչ հոդվածներ միշտ էլ պետք են՝ որպես դիմադրելու զենք ուժացման դեմ:

Իր կեանքը, լեղափոխութիւնը և մահը: Լեզուն յափունական ճշմարտութիւն մը չէ...: Այս ճշմարտութեանց բուն և միակ աղքիրը կրօնքն է, ու մեր պարագային.... միայն հայ եկեղեցին է, որ կրմամք գայն ստանալ»:


Հայագիտությունը միշտ էլ իր հատուկ բաժինն է ունեցել «Էջմիածին» ամսագրի էջերում: Դեռևս 1944 թ. առաջին համարներում տպագրված են հոդվածներ հայ գրերի ստեղծող Մեծն Մեսրոպ Մաշտոցի և հայ գրերի գույնի մասին, ապա և միջնադարյան հայ գրիների, մեր մին պատմիչների ստեղծագործությունների մասին և այլն: Ծուռով երևան են գալիս նաև զոտ լեզվաբանական-հայերենագիտական հոդվածները, որն որում ամսագրի էջերում հայտնի հեղինակլույսներ հոդվածներ են տպագրում հայոց լեզվի տարրեր դրակորումների ու բաղկացուցիչ մասերի վերաբերյալ՝ հայոց լեզվի պատմությունից մինչև բարբառագիտությունը և այլն: Սույն հոդվածում սեղմ էների սահմաններում մենք կաշխատենք առավելապես Ակարագրական եղանակով ներկայացնել անցած 30 տարիների ընթացքում «Էջմիածին» ամսագրում հրատարակված լեզվաբանականայերենագիտական հոդվածները:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ-ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

«Էջմիածին» ամսագրի գարդն են կազմում հայ մեծանուն լեզվաբան Հ. Աճառյանի ընդհանուր լեզվաբանական հոդվածները: Այս շարքում նիշենի է հատկապես դեռևս 1946 թ. տպագրված «Երեք հարց մեսրոպյան այբուբենի շորջը» հոդվածը, որի մեջ, հայերենի այբուբենը հանդիպադրելով 5-րդ դարում մեզ հարևան մի շարք ժողովուրդների այբուբեններին, մեծանուն գիտնականը ճշտորեն եզրակացնում է, որ «հունարենը բայլ առ բայլ համաձայն է մեր այբուբենին, որ հետանում է հրանից միմիայն իր գերազանց ճնշության պատճառով» (թիվ Ա, էջ 48): Հիմք ընդունելով հունարեն այբուբենի դասավորությունը, սուրբ Մեսրոպ Մաշտոցը խոչը լեզվաբանի հմտությամբ համարելույթուն, անթերի և վերջնական կատարելությամբ կարողացավ տեղադրել հայերենի հարուստ հնչյունական համակարգի մնացած հնչյունները՝ արամանեակու կատարելույթյամբ, այն աստիճան, որ 15 դար հետո աշխարհի խոշորագույն լեզվաբաններից մեկը՝ ֆրանսիացի հայագետ Անտուան Մելին, Մեսրոպ Մաշտոցի ստեղծած այբուբենը պիտի գնահատեր հետևյալ խոսքերով. «Հայունի է, որ հայ այբուբենը գլուխ-գործոց մըն է: Հայ հնչաբանության հնչյուններն են յորաքանչյուրը հասուն հնչանով մը նորագրված է, և սիստեմը այնքան լավ հաստատված է, որ Հայ Ազգին հայթալուած

է հնչաբանության վերջնական արտահայտություն մը»<sup>2</sup>:

Արժեքավոր է նաև Հ. Աճառյանի՝ 1953 թ. ամսագրում տպագրած «Հայերենից փոխառյալ բառեր պարսկենում» (Ե, էջ 23—29) հոդվածը, որի մեջ իրեն հատուկ բացառիկ խորաթափականցությամբ ցույց է տալիս, թե հայերենի աղիս, բարեկենդան, գուան, խաչ, շերպեղ, քարուկիր բառերը ե՞ր և ի՞նչ ճանապարհներով են անցել պարսկերենին:



Ամսագրի առանձին համարներում տպագրված են նաև Հ. Աճառյանի՝ հայոց անձնանունների վերաբերյալ հոդվածներ, ինչպես նաև ընդհանուր լեզվաբանական այլ հոդվածներ: Մինչև իր վերաբան մահը Հ. Աճառյանը շորջ 10 տարի եղել է «Էջմիածին» ամսագրի բեղմնավոր հոդվածագիր-աշխատակցող՝ շարունակելով այն գեղեցիկ ավանդույթը, որին սկիզբ էր դրել դեռևս «Արարատ»-ի հրատարակության օրերին:

Ընդհանուր լեզվաբանական-հայերենագիտական հոդվածներ է տպագրել նաև պրոֆ. Ա. Առաքելյանը, որն, ի դեպ, մեծ

<sup>2</sup> Տե՛ս Անտուան Մելինի «Հայ այբուբենը գլուխ-գործոց մըն է» խոսքը, «Էջմիածին», 1962, Ե, էջ 34:

նպաստ ունի «Էշմիածին» ամսագրի հրատարակումը կազմակերպելու գործում: Հայունի է, որ նաև ամսագրի «Ենթի նոր ուսումնական տիրապետության շրջանում գրաքարը դիտվելով որպես ազնվական դասին հասուն լեզու, այդ դասի հետ էլ վերացած, մեռած էր համարվում: 1956 թ. Դ-Շ միացյալ համարելում տպագրած «Մի զուգահեռ գրաքարի և աշխարհաբարի միջև» հոդվածում պրոֆ. Սուաքելյանը ճշգրտել է՝ որ գրաքարը աշխարհաբարի մայրն ու դասին է, մյուս կողմից՝ նեղ գործառնությամբ գրաքարը կենդանի լեզու էր ընթառակ մինչև 19-րդ դարի վերջերը: Նա ճշտորեն նկատում է, որ «չի կարելի սահման դնել, թե այս կամ այն ժամկետում մի լեզու շքանում է, մեռնում է և հրան հաշորդում է մի ուրիշը: Ենթի, այս դեպքում գրաքարի, փոփոխությունը և զարգացումը տեղի է ունենում անդադար, մինչև որ նոր ձևերը և արտահայտությունները իշխում են լեզվի մեջ և փոխում հրան նախկին կերպարանքը» (անդ, էջ 62): Եթե նկատի ունենակը հոդվածի գրությամբ ժամանակները, ապա պետք է խստովանել, որ հոդվածագիրը գրաքարի զարգացման և աշխարհաբարի կազմակորման գործում հրան ունեցած դերի մասին ճիշտ և ուսանելի դիտողություններ է անում: Պրոֆ. Սուաքելյանը «Էշմիածին» ամսագրում տարբեր ժամանակներում տպագրել է հայագիտության, մասնակիորակեան հայության նկալուր մշակույթի առանձին հարցերին նվիրված խիստ շահեւկան հոդվածներ, որոնք զարդարում են ամսագիրը: Ուշադրության արժանի է նաև «Հայկական տպաշախություն» (1952, Բ) հոդվածը, որի մեջ տալիս է տպաշախություն հասկացության պատմականը մեր իրականության մեջ՝ Դիդիշիսիոս Թրակացու քերականության թարգմանության օրերից պահած մինչև նորագույն ժամանակները: «Էշմիածին» ամսագրում տպագրված լեզվաբանական հոդվածների մեջ լորատեսակ է դոկտ. Նշան Մարտիրոսյանի «Էլամացիք և իրենց լեզուն» (1964, ԺԲ) հանրագիտական բնույթի հոդվածը, որը, նեղինակի խոստովանությամբ, համառոտումն է 1928 թ. «Շեմական համայնագիտարանի» համար իր ուսուցիչ դոկտուրի Հորոցնիի թելադրությամբ խթագրած հոդվածի: Հոդվածագիրը սեղմ գծերով ներկայացնում է էլամացիների քիչ հայտնի լեզուն՝ տեղ-տեղ վերջինիս լեզվական իրողությունները հանդիպադելով հայերենի մեջ: Նշենք սակայն, որ այդ փորձերը գիտական բնուադասության դիմանալ չեն կարող:

Իր տեսակի մեջ հետաքրքրական է դուքսն Ա. Պողոսյանի «Լեզվագիտական» մի

չուսումնասիրված հարցի շուրջը» (1950, Գ-Դ) հոդվածը, որտեղ առավելագույն իր մայրենի՝ Հադրութի բարբառի լեզվականութի հիման վրա քննում է նի մասնիկի և նի մասնիկավոր բառերի դրսուրումները հայերենում:

## 2. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐԵՐ

Լեզվաբանական հոդվածների մեջ առավելագույն շատ են հայոց լեզվի պատմության զանազան հարցերի բնույթյանը նըւիրված հոդվածները: Այս շարքում պետք է հիշել դոցենտ Հ. Միհիթարյանի «Հայերենի կետադրությունը» հոդվածը (1957, Զ), որը նեղինակի իսկ բնորոշմամբ փաստորեն հայերենի կետադրության պատմության մի համառոտ ակնարկ է: «Պետք է խոստովանել, որ հայ կետադրության պատմությունը լավ ուսումնասիրված չէ, անա ինչու, ինչպես ծիշտ կերպով նկատում է նաև հոդվածագիրը, գրաքարի շրջանի կետադրության մասին հաճախ արտահայտվել է այս թյուր կարծիքը, թե իրը արդի հասկացությամբ գրաքարում կետադրություն չի եղել, թե «ինն գրչագրերում իրը թե իշխել է անասելի շփոթ և տարերայնություն»: Մեր հին ձեռագրերի կետադրության ուսումնասիրության հիման վրա հայության նշունակը ճշտորեն եզրակացնում է, որ «գրաքարի շրջանում ունեցել ենք մշակված, կատունավոր խոսք և այդ խոսքը տրոհող ու բացահայտող հասուած, երեւնի հնքնատիպ ու մուածված նըշաններ» (անդ, էջ 56): Գրաքարում կետադրությունը հասկացությունը ամփոփել է վերջակետը («կէտ աւարտեալ»), միշակետը («միշակ») և ստորակետը: Իր սույն հոդվածում հեղինակը հայ հին մատենագրությունից վերցված օրինակներով խոսում է այս հշանեների գործածության մասին:

Փաստորեն սույն հոդվածի օրգանական շարունակությունն են նեղինակի «Սոոզանություն» վերտառությամբ տպագրած հոդվածները (1958, Թ, 1960, Ը), որոնցից առաջինում խոսում է մեր հին լեզվում գևահատված առողանության 10 հշանեների՝ շեշտի, բութի, պարուկի, սուլի, թափի, սոսկի, ենթամենայի, ապարացի և ստորատի կիրառության մասին առանձին-առանձին և հանգամանություն: Խեկ երկրորդ հոդվածում խոսում է գրավոր խոսքում հանդիպող, սակայն մեկնիշների և քերականների կողմից հիշատակության չարժանացած լերի, մակակետ, չակերտ և գծիկ առողանության հշանեների մասին՝ ցուց տալով, որ սրանց մեջ առավել վաղ գործածություն և լայն տարածում է ունեցել չակերտը: Մանրազը-

Ան բննությունը հեղինակին հնարավորություն է տվել ճշշտ կերպով եզրակացնելու, որ «առողանությունը, եթե ոչ բոլորովին հումանիզմի հասկացողությամբ և ծագմանը, այնուամենայնիվ հայ գրավոր լեզվի մեջ ունեցել է իր ուրուն դերն ու նշանակությունը» (անդ, էջ 54):

1964 թ. է համարից սկսած «Եշմիածին» ամսագրի էջերում մի քանի հոդվածներ են տպագրված պոռֆ. Վ. Սուպերելյանի «Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը» ուսումնասիրությունից: Տպագրված հոդվածներում առավելապես բացահայտված են «Մատեան ողբերգութեան» համար ստեղծագործության լեզվի մակդիրներին և ոճաբանական մի քանի այլ շրջաբանություններին վերաբերող հարցերը: Հայտնի է, որ Նարեկացին մեր վաղ վերածննդի հախօրեին և հայ բանաստեղծական խորի ակունքներին ոչ միայն հանձնարեղորեն օգտագործեց հայոց լեզվի ընձեռած համակ հարուստ դրսնորումները, այլև կարողացավ իր աշխարհապարփակ մտածումներին ու տվյալանքներին նոր ձևու արտահայտություն տալ: Լայն մտահորիզոնը, բանաստեղծական բացառիկ լեզվամտածությունը և հայոց լեզվի բազ իմացությունը հնարավոր դարձրին, որ Նարեկացին հասնի հայոց լեզվի գեղեցկությունների բացահայտման աննախադեպ և ցայսօր անմատչելի մնացած բարձունքների... Ահա այս հարցերն են, որ Նարեկացու լեզվական հոյութի հիման վրա բացահայտել է պոռֆ. Վ. Սուպերելյանը: Նկատենք նաև, որ Գ. Նարեկացու լեզուն հիմնականում իր մեջ խուցնում է հայերենի 10-րդ դարի վիճակը, այն չափով, որ դարակամմիկ երեւույթ հանդիսացող այս բանաստեղծը մեծապես ազդեց իր դարաշրջանի վրա՝ միաժամանակ մեծ ակու բացելով հայոց լեզվի անդամատանում:

Գրաքարի շարահիւսության մի կարևոր հարցի՝ ձևի պարագայի դրսնորումներին է նվիրված Լ. Խաչերյանի «Զնի պարագա երկրորդական համադասություններ» հոդվածը (1959, Ը—Թ), որը հանգամանորեն խոսվում է գրաքարում ձևի պարագայի դրսնությամանը նպաստող հարուստ լեզվամիջոցների մասին: Քննադատաքար պետք է նկատեն, որ թեև գրաքարի ձևաբանությունը հանգամանորեն և գրեթե կատարելապես ուսումնասիրված է, սակայն նույն չի կարելի ասել շարահիւսության մասին: Ահա այդ իմաստով այդ ողղությամբ կատարված ամեն մի աշխատանք արժանի է ամենայն խրախուսանքի: Գրաքարի շարահիւսության հանգամանալից և ամբողջական ուսումնասիրումը հայ լեզվաբանության պարտք է:

Իր բնույթով հետաքրքրական է Ռ. Ղա-

զարյանի «Նոր Հայկազյան բառարանի սղբությունը» (1970, Զ—Ե) հոդվածը: Քաջ ծանոթ լինելով մեր բառարանագրության թագ ու պահանջացող այդ բառարանին, հեղինակը ընթերցողին նախ ծանոթացնում է այդ հերոսական գործի կատարման մերքին ծալքերին: Միսիթարյան երեք



Ակադ. Հրաչյա Անապյան

մեծահմուտ վարդապետներ՝ Բ. Գ. Ավետիքյանը, Բ. Խ. Սյուրմելյանը և Բ. Մ. Անդրեյանը այդ բառարանի վրա աշխատել են շոր 50 տարի (1784—1834), և Հ. Անապյանի խոսքերով «քուն ձեռագիրը վեց անգամ ընդարձակ է եղել և ծախսի մեծության պատճենով միայն համառոտել և վերածել են երկու հատորի»: Այդ ընթացքում հրանք կարդացել են Վենետիկի իրենց ձեռագրատանը գտնվող շոր 1000 ձեռագրեր, որոնք և հիմք են հանդիսացել բառարանը կազմելու համար: Այսպիսով, Հայկազյան բառարանի առաջին աղբյուրը 5—17-րդ դարերի մեր մատենագրությունն է, որ կան գրվածքներ մեր հոգևոր մշակույթի բոլոր դրսնությունների վերաբերյալ: Հայկազյան բառարանի 2-րդ աղբյուրը առավելապես միջնադարյան ձեռագիր բառարաններն են:

Ո. Ղազարյանը մի հետաքրքրական հոդված է տպագրել նաև մեր ժողովրդին ու

լեզվաբաններին քիչ հայտնի բառարանագրական մեկ որիշ կոթողային աշխատանքի մասին, այն է՝ Ն. Բյուզանդացու միջին հայերենի բառարանը: «Նորայր Բյուզանդացու «Բառագիրը ստորին հայերենի»» հոդվածում (1966, Ե) Ռ. Ղազարյանը մեծապես գնահատում է Ն. Բյուզանդացու այդ հայեալի բառարանը, որի ողիսականը հար



Պրոֆ. Սիրաբի Տեր-Ներսեսյան

և նման է նրա հեղինակի ողիսականին: Ն. Բյուզանդացին Դ. Հովհաննեանի և օտար հայագետն Յ. Կարասի հետ միասին այն բացառիկներից էր, որ սիրով հնիրվեց միջին հայերենի ուսումնասիրությանը: Խճառես հզում է հոդվածագիրը, միջին հայերենի բառարան կազմելը Ն. Բյուզանդացու համար դատնում է մտասներ գաղափար: Նա այդ գործի վրա աշխատել է շորշ 30 տարի: Դեռևս 1873 թ. Ն. Բյուզանդացին այն կարծքն է հայտնել, որ «երկիրառող Հայկագեան բառարանի ստուարութեամբ ստորին հայերենի (իմա՞) միջին հայերենի—Ս. Ա.) ալ բառարան մը կրնայ կազմուիլ, այնչափ ճոխ է այս լեզուն բառերու, ոճերու, ձևերու և ասացուածոց մասամբ» (անդ, էջ 41): Հայտնի է, որ Ն. Բյուզանդացու կինը շվեյդուի էր, և 1882 թ. սկսած նա ապրում էր Ստոկհոլմում: Ն. Բյուզանդացու միջին հայերենի սույն բառարանը Ծվեդիայում նրա արխիվում պատահաբար գտնվելով մեր լեզվաբանությանը հայտնի դարձնելու հարցում:

1945 թ., հեղինակի մահվանից 30 տարի հետո: Բարեկախտաբար նախանձախնդիր մարդիկ Ծվեդիայից Հայաստան ողարկեցին այդ աշխատության մասնապետամիջնարերը՝ միկրոֆիլմերը: Ուղարկված 5 կոճերը ամփոփում են աշխատության Ա—Պ տառերը, շորշ 6000 էշ: Խոկ մնացածն առ այսօր անհայտ է: Հոդվածագիրը մի երկու բառարողականի մշակվածության ցուցադրումով հշտորեն եզրակացնում է, որ Ն. Բյուզանդացու սույն աշխատությունը մեծապես արժեքավոր է, սակայն նոյնքան զարմանալի է այն անհայտանձանությությունը, որ մեզանում կա այդ մեծ լեզվաբանի գիտական աստանական ծառանգությունը մեր ժողովրդի և մեր լեզվաբանության սեփականությունը դարձնելու հարցում:

Տողերիս գրողը ևս ամսագրում տպագրել է հոդվածներ հայոց լեզվի պատմության վերաբերյալ: Մեր «Հայոց լեզվի բնույթը ու զարգացումը» հոդվածում (1968, Դ) ցույց ենք տվել հայերենի անառարկելիորեն հնդեվրոպական ընտանիքին պատկանելը, ապա և համառոտակի նրա պատմական զարգացումը՝ իր հիմնական շրջանարածանումներով: Խոկ «Հայոց լեզվի պատմության և համեմատական քերականության ուսումնասիրությունը» հոդվածում (1970, Ժ.Ա) համառոտակի ներկայացրել ենք այդ ուղղությամբ կատարված աշխատանքները վերջին հիմնային հայություն ստուգ դրանց գնահատականը հայերենագիտության ընդհանուր ֆոնի վրա:

1952—53 թթ. ամսագրի էջերում տպագրվել է նաև Դ. Մարտիրյանի «Ձերել-Սուսայի բարրառը» աշխատության առավելապես հնչյունաբանությունը: Թեև հոդվածագիրը լավ տեղյակ է իր մարդենի բարրառին, սակայն մասնագիտական պատրաստականություն չունենալը մեծապես խանգարել է, որ երևոյթները ճիշտ նկարագրի ու գնահատի:

Մերուակ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը (1961 թ.), ապա և Աստվածաշնչի հայերեն տպագրության 300-ամյակը (1966 թ.) լայնորեն արձագանք գտան «Հշմիածն» ամսագրի էջերում ծնունդ տալով գիտական իմաստով մեծ արժեք ներկայացնող «Բացառիկների»: Այս առողիվ գրվեցին նաև լեզվաբանական հոդվածներ: Այս շարքում մեզ համար բացառիկ արժեք են ներկայացնում հայ գրի և նրա գյուտարարի մասին օտար հեղինակությունների կարծիքները: Անտուան Մելենի կարծիքը մենք արդեն մեջքերել ենք: Այստեղ կուգենայինք մեջքերել մեկ ուրիշ ֆրանսիացի հեղինակության՝ Ժան Բալարի կարծիքը. «Լեզուն ենթարկելով գրության օրենքներուն, քերականու-

բյան, համաձայնության, շարադասության կանոններուն, հայության ամեննեն պահճակի այս երկու զավակները՝ և Մեսրոպ և ս. Սահակ, ապահովեցին հավերժությունը հայ հանճարին, ճառագայթումը հայկական մշակույթին մինչև այսօր.... իրենց ժողովությին տված են գիրը, իր հավերժությունը դարբնող զենքը»<sup>3</sup>: Մաշտոցյան հյուերի շարքում հետաքրքրական է հատկապես Մ. Գասպարյանի «Մեսրոպյան այրենարանները ԺԹ և Ի դարերում» հոդվածը (1961, Ժ), որ փաստուն օգաճական շարունակությունն է հեղինակի նույն ամսագրում տպագրված «Մեսրոպ Մաշտոցը որպես գրուալյոց» հոդվածի (1959, ԺԱ): Իր վերիշյալ հոդվածում Մ. Գասպարյանը Մեսրոպ Մաշտոցին գնահատում է որպես մեր առաջին գրուալյոց ուսուցիչը, առաջին հայ այրենարանի, հայերենի գրուալյում հեղական մեթոդի հիմնադիրը, այն է՝ հայոց լեզվի առաջին մեթոդաբանը: Այնուհետև 19 և 20-րդ դարերի (մինչև 1920 թ.) 35 այրենարանների ուսուցման սկզբունքների բնարկման հիման վրա հեղինակը հանգում է այն նիշու եզրակացության, որ «հայ ժողովուրդը կարողացել է մշակել ինքնուրույն և ինքնատիպ մանկավարժություն, որն աշխատել է գտնել նաև գրուալյում դյուրին եղանակներ՝ օգտվելով թե՛ դարերի ընթացքում իր կուտակած փորձից և թե՛ առաջավոր մանկավարժական նվաճումներից» (անդ, էջ 61): Սատվածաշնչի հայերեն տպագրության 300-ամյակի առթիվ լուս ընծայված գեղեցիկ և արժեքավոր համարում ուշագրավ է Հ. Միհթարյանի «Ուկան Երևանցին իրու քերականագետու» հոդվածը (1966, ԺԱ—ԺԲ), որտեղ հեղինակը խոսում է մեր դպրության այդ մեծ գործի քերականական մի աշխատության մասին, որ համառոտ կարելի է կոչել «Քերականութեան գիրը»: Սույն գիրըը արժեքավոր է նաև պատմականորեն, քանի որ փաստորեն մի հայ քերականի տպագրած քերականության առաջին գիրըն է: Տպագրվել է նույն 1666 թ.: Սույն աշխատությունը թեև լատիներենի քերականությունից մի փոխադրություն է, սակայն հեղինակը հաճախ լատիներենի քերականական իրողությունները հանդիպարում է հայերենի հետ՝ արժեքավոր դիտողություններ անելով գրաբարի քերականության վերաբերյալ:

Հ. Աճառյանի «Մեսրոպ Մաշտոց» աշխատությունը, որ ամսագրի էջերում տպագրվ-

վում էր դեռևս 1954 թ., այս օրերին ևս մատուցվեց մեր հասարակայնությանը:

«Էշմիածին» ամսագրի տպագրության անցած 30 տարիների ընթացքում եղել են նաև մի շարք այլ հորելյաններ, որոնք լայնորեն արձագանք են գտել ամսագրի էջերում: Հայ լեզվաբանությանը վերաբերող շափով հիշատակելի են տողերին գրողի «Հայ լեզվաբանության նվաճումները սովորական և առաջավագ է» ամսագրում:



Դրոֆ. Անոարել Սուպելյան

տպական շրջանում» հոդվածը (1967, Ժ—ԺԱ), ապա և «Հայ լեզվաբանությունը «Արարատ»-ի էջերում» հոդվածը (1968, ԺԱ—ԺԲ): Տպագրված «Էշմիածին» ամսագրի ավագ եղբոր՝ «Արարատ»-ի տպագրության 100-ամյակին նվիրված բացառիկ համարում: Այս բոլորից դուրս «Էշմիածին» ամսագրում գրախոսաված են լեզվաբանական մի շարք աշխատություններ, հատկապես Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն»-ի 2-րդ մասը, «Հայոց անձնանունների բառարան»-ը, «Լիակատար քերականություն»-ը և այլն: Հ. Աճառյանի մահվան առթիվ գըրված հմբագրական հոդվածում մեծապես հերկայացված և գնահատված է մեծանուն հեղինակի հայագիտական վաստակը (1958, Ե): Արժեքավոր է նաև նոյն համարում

<sup>3</sup> Տե՛ս Ժան Բալար, «Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին առթիվ» խոսքը, «Էշմիածին», 1962, Ե, էջ 85:


տպագրված «Բիբլիոգրաֆիա Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի խմբական անդամ պրոֆ. Հրաչյա Աճառյանի տրամագրված և անտիպ աշխատությունների» տեղեկատուն, որը խնամքով, ժամանակագրական կարգով տրված է հեղինակի 191 անուն տպագրի և 23 անուն անտիպ աշխատությունների ցուցակը:

Անսագրի էջերում արձագանք են գտել նաև այլ լեզվաբանների հորելյաններ, այդ թվուն նաև օտար հայագետների: Այս շարքում ոչագրավ է Ս. Քոլանջյանի «Պրոֆդրամ»: Վաղ Բընըցեանուն և հրա հայագիտական աշխատությունները» հոդվածը (1964, 2), գրված ոռմինացի մեծ հայագետի մահվան առթիվ, որ տեղի էր ունեցել 1963 թ. նոյեմբերին: Վ. Բընըցեանուն մեր օրերի խոշորագույն լեզվաբաններից և հայագետներից մեկն էր: Պոլիգլոտ համարվելու շափ հրա հմացած դասական և ելությական նոր լեզուները մեծապես նախատեցին Բընըցեանունին խորամուխ լինելու լեզվաբանական գիտության խորությունները: Որոշ գաղափար տպու համար ասենք, որ Բընըցեանուն շորջ 100 հայագիտական գործերի հեղինակ է, որոնց մեջ մեծ մաս են կազմուն նաև շատ լեզվաբանական աշխատություններ՝ հայերեն-ուրարտերեն լեզվական աղերսակցությունների ուսումնամիտություններից սկսած մինչև «Հայերեն դրամ-

կան լեզվի քերականության» անտիպ երկանորը կեն: Ոռմինացի արև մեծ գիտնականը մեր ժողովրդին և նրա ստեղծած մշակույթը դեռևս 1937 թ. նետելավ խորելով էր գնահատել: «Վատահ եղեք, որ տասներկու տարի հայերն ու նայ լեզուն ուսումնասիրեկն ենտո, հաղորդակից դարձա հայոց պատմության վեհությանը, ուստի, լինելով հանդերձ ազգով ուսումնացի, պիտի կարենամ այսօք ձեզ խոսի այս միևնույն սիրով, որ նայ մը կկարողանա տածել իր հայենիքի ու նայ ժողովրդի անցյալի հանդեպ» (անդ, էջ 53): Հեղինակի կյանքին և հայագիտական գործունեությանը քաջածանութ հոդվածագրի Ս. Քոլանջյանը ճշտորեն նըկատում է, որ այս խորելը Բընըցեանուն հավատամբըն են: Անսագրի էջերում տարբեր աղիթներով հոդվածներ են տպագրված նաև Ստ. Մայնացյանցի, Ն. Մատի, Ա. Ղարիբյանի և հայ լեզվաբանության այլ խոչոր դեսերերի վերաբերյալ:

Այսայսուկ, առավել համառոտ կերպով մենք աշխատեցինք ներկայացնել հայ լեզվաբանության վերաբերյալ եղած հյութերը «Էջմիածին» ամսագրի 30 տարիների էջերում: Հայ լեզվաբանությունը հայագիտության մի եական մասն է, որն այսուհետև և առավել արժեքավոր հյութերով պետք է ներկայացվի համագային հշանակություն ունեցող «Էջմիածին» ամսագրի էջերում:





## Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

### «ԷՇՄԻԱԾԻՆ»-Ը ԵՎ ՀԱՅ ԵՐԱԺԾՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հայրապետական Արոռողի պաշտոնական ամսագիր «Էշմիածին»-ը, որ ազգային-կրթական մյուս հանդեսների նման մեծ ու լուրջ մասնակցություն է բերում հայութի երաժշտարվեստի շատ հարցերի մշակմանը, փաստորեն «Արարատ»-ի առաքելությունն է շարունակում իրագործել՝ նոր պահմաներում:

Հայ երաժշտության ապագան պատմաբանը, ի թիվս այլ հանդեսների, «Էշմիածին»-ը ևս ուշի-ուշով պիտի թերթի՝ այնուեղից քաղելու համար մեր երեկով ու այսօրին վերաբերող անհամար փաստեր:

Եվ նախ՝ երաժշտական ընթացիկ կյանքին վերաբերող փաստերը, որոնք խնամքով մեկտեղելուց և քանիմաց կերպով խմբավորելուց հետո է, որ դառնում են առավել պերճախոս ու հիմք տալիս արժեքավոր, երբեմն անգամ անակնկալ հետևողությունների:

Նկատենք, որ պատեղ իրենց արժեքն ունեն Մայր Արոռողի և հոգևոր ճեմարանի երաժշտական եերքին կյանքին վերաբերող տեղեկությունները: Օրինակ Կոմիտաս Վարդապետի ստեղծագործություններին նվիրված երեկովից մասին հաղորդումը, որտեղից իմանում ենք, որ ճեմարանի եղուցիկ խումբը Դանիել Ղազարյանի ղեկավարությամբ կատարել է «Սարերի Վրով գնաց», «Կուժն առա», «Սիփանա քաշեր», «Կալի երգը» և այլ գործեր, իսկ արևելյան գործիքների վրա նվազող մի եղյակ հնչեցրել է «Ծուշիկի», «Վաղարշապատի», «Ռանգի» պարեղանակները<sup>1</sup>: Եվ կամ ներսես Շնոր-

հայու մահվան 800-ամյակի առթիվ կազմակերպված եղորյա հանդիսությունների համառոտ նկարագրությունը, որը թվարկված են կարևորագույն կետերը. հսկումի հանդիսավոր ժամերգություն և Հոդիսիստ տաճարում, երեկոյան հանդիսավոր ժամերգություն Մայր տաճարում, պատարագ Մայր տաճարում և երեկոն Վեհարանի հանդիսությունների դաჩիխում Հայաստանի պետական կամերային նվագախմբի, Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբի, երևելի մեներգչութինների և այլոց մասնակցությամբ<sup>2</sup>:

Բավական լայն շրջանակների մեջ տեղեկություններ են տրված նաև Հայաստանի և մասնավորապես Երևանի ընդհանուր երաժշտական կյանքի վերաբերյալ: Դրանք շնչափում են՝ ժողովրդական ստեղծագործության տունը և Հայաստանի կոմպոզիտորների միությունը, Կոմիտասի անվան կոնսերվատորիան և երաժշտական դպրոցները, Հայֆիլհարմոնիան և Սպենդիարյանի անվան օպերայի և քալետի պետական թատրոնը, Կոմիտասի անվան քայլակը (կվարտետը) և ջազ-նվագախումբը, Հայաստանի պետական երգչախումբը և Ղարաբաղի ժողովրդական երգի-ապրի խոմբը, ուշագրավ համերգներ, նոր բևմադրություններ, երաժշտական հրատարակություններ և ժողովրդական երգերի գրառումներ, հիշարժան տարեթվեր, ակնառու դեմքեր:

Անսագիրը ուշադիր է եղել նաև սիյուրահայ երաժշտական կյանքի նկատմամբ, որով վերջին երեսուն տարիների համարայի

<sup>1</sup> «Էշմիածին», 1948, Ե—Զ, էջ 28:

<sup>2</sup> «Էշմիածին», 1978, Ժ, էջ 22—37:

կական երաժշտական կյանքի ժամանակագրության տվյալների կոտումանը զգալի նպաստ է բերել անկական:

Իրոք, անսագիրը թերթելով, արդեն իսկ այսօր շամեկան է իմանալ՝ որտեղ և ինչպես է Եջվա Տիգրան Չոխաջյանի մահվան 50-ամյակը<sup>3</sup>, և Ալեքսանդր Սպենդիարյանի ծրբնյան 75-ամյակը<sup>4</sup>, երբ է ավարտել Հ. Ստեփանյանը «Նունե» օպերան և Կ. Զաքարյանը «Աղասի»-ն<sup>5</sup>, ինչպես են ընդունվել Օճճիկ Պերպերյանի համերգները Նյու-Յորքում<sup>6</sup>, և Գորգեն Ալմաշանի սիմֆոնիկ և վագահանդեսը՝ Թաուն Հոլի մեջ<sup>7</sup>, Պողոս Լիսիցյանի եղույթները՝ Բուդապեշտում<sup>8</sup>, և Զարուհի Ռոլոխյանանի մենակատարումները՝ Փարիզում<sup>9</sup> և այլն:


Մեզ հետաքրքրող մյուս հյութերն ընդհանուր առմամբ շշափում են նայ երաժշտության անցյալն ու մերկան, նրա պատմության, գեղագիտության ու տեսության վերաբերող խնդիրները, նրա դարավոր զարգացմանն իրենց մասնակցությունը բերած համաստ մշակների և կարկառուն գործիքների դիմանեկանի ու ժառանգության լուսաբանության հարցերը:

Ամսագրի էջերում երաժշտական կամ նաև երաժշտական խնդիրներ արձարծող հյութերով հանդես են եկել ոչ միայն մասնագետն երաժշտներ, այլև հայագետներ, արվեստաբաններ, բանասերներ և գրողներ:

Մասնավոր հիշատակության արժանի են Ռուբեն Վոդու, Դրամբյանի գրվածքը՝ հայոց աշխարհիկ ու հոգևոր արվեստների վաղըն-ջական կապերի վերաբերյալ<sup>10</sup>, Արամ Երեմյանի ու Երվանդ Չահազիզի հոդվածները՝ նայ ժողովրդական բանահյուսության<sup>11</sup> ու աշխարհիկ նորագույն երգասանեղ ծովության<sup>12</sup> առանձին երևույթների մասին, այլև մի քանի հեղինակների՝ ճիշտ ժամանակին լույս տեսած գրավոր եղույթներն ու հետա-

զուտական նորերը՝ նայ եկեղեցու շարականների և մանրուաման երգերի շորջ:

Շարականների ուսումնասիրմանը կապված հարցերը, Լուսիկ Սարգսյանի մի համաստ հաղորդումից հետո<sup>13</sup>, բարձրացնում



Դրոֆ. Աշոտ Գ. Արրանիամյան

են նայ հոգևոր մշակույթի ընդհանուր պատմությանը լավատեղյակ դեմքեր՝ Գարեգին Լևոնյանն ու Երվ. Չահազիզը: Վերջինս խոսում է հոյնիսկ բացառապես շարականների ու նրանց հեղինակների մասին<sup>14</sup>: Մինչ Լեվոնյանը, անդրադառնալով սահմուներին, հնագույն կցուրդներին ու շարականներին<sup>15</sup>, անցնում է նաև «մանրուաման» ձեռագրերին ու երգերին<sup>16</sup>:

<sup>13</sup> Լուսիկ Սարգսյան, Հայ եկեղեցու շարականների մասին, «Էշմիածին», 1945, Ա-Բ, էջ 40-41:

<sup>14</sup> Երվ. Չահազիզ, Համառոտ տեղեկություններ նայոց շարականների մասին, «Էշմիածին», 1948, Ա-Բ, էջ 67-ից, և Գ-Դ, էջ 27-ից:

<sup>15</sup> Գարեգին Լևոնյան, Էջեր նայ եկեղեցական երաժշտության պատմությունից, «Էշմիածին», 1945, Ե, էջ 48-50:

<sup>16</sup> Գարեգին Լևոնյան, Դարձյալ մի քանի էջ նայ եկեղեցական երաժշտության պատմությունից, «Էշմիածին», 1945, Ը-Թ-Ծ, էջ 82-89:

Այսուուժ կարելի էր հիշատակել նաև Ա. Երեմյանի

<sup>3</sup> «Էշմիածին», 1948, Գ-Դ, էջ 83:

<sup>4</sup> «Էշմիածին», 1946, ԺԱ-ԺԲ, էջ 78:

<sup>5</sup> Անը, էջ 86:

<sup>6</sup> «Էշմիածին», 1954, Բ, էջ 56:

<sup>7</sup> «Էշմիածին», 1948, Ա-Բ, էջ 90:

<sup>8</sup> Անը:

<sup>9</sup> «Էշմիածին», 1954, Բ, էջ 57:

<sup>10</sup> Ռուբեն Վոդու, Հարամու Հայաստանի աշխարհիկ երգերի տաղաշափությունը նկեղեցական երգերում, «Էշմիածին», 1944, Զ-Է-Ը, էջ 27-32:

<sup>11</sup> Ա. Երեմյան, Էջեր նոր Զողայի ժողովրդական բանահյուսությունից, «Էշմիածին», 1948, Ա-Բ, էջ 68-65:

<sup>12</sup> Երվ. Չահազիզ, Գևորգ Դողյանար և նրա «Միջնակը», «Էշմիածին», 1947, Ա-Բ, էջ 59-64, Գ-Դ, էջ 45-60:

Երածտարվեստի հարցերին մասնագիտական առնչություն չունեցող հեղինակների գրվածքների մեջ առանձնահատուկ տեղ ունեն հուշերն ու գեղագիտական ընդհանուր գևագալականները, որուց մեծագույն ու լավագույն մասը վերաբերում է Կոմիտասին: Ամսագրում հրատարակված կամ վերարտարակված են ոչ միայն Գալուստ Տեր-Մշկրտչյանի<sup>17</sup> և Հրաչյա Աճառյանի<sup>18</sup> հուշերը, Ավետիք Խաճակյանի<sup>19</sup> և Մարտիրոս Սարյանի<sup>20</sup> անդրադառները, Սիլվա Կապուտիկյանի մտքումները<sup>21</sup> ու Արթոն Հատիտյանի խոհերը<sup>22</sup>, այլև որիշ մտավորականների հետաքրքրական արձագանքները<sup>23</sup>: Այդ բոլորի մեջ իր հատուկ տեղն ու կշիռն ունի Հակոբ Սիրունու փաստակից մեսագրությունը, որ տպագրվեց ամսագրի չորս տարբան տարբեր համարներում<sup>24</sup> և որը վերակենդանացնում է Կոմիտաս Վարդապետի կյանքի ժողովրդա-ազգային և հասարակական իմաստով լեցուն շատ էջեր:

Պետք է ասել, որ ամսագիրն իր էջերում հսկայական տեղ է հսկուածքի Կոմիտասին

Բոդվածները միջնադարյան հայ երգահանների մասին, որոնք հրատարակելով իմշալու որիշ ամսագրություն, ապնաւ և «Էջմիածին»-ի 1948, 1954 և 1958 թվականների տարբեր համարներում, ավելի ուշ ամփոփել է առանձին գրքույին մեջ: Բայց, ըստ համարապես ասած, այս մոդմուակի գործերից մեզ՝ լրաժշտմերին համար ավելի շահեկան են ժողովրդական բանայինությունը և աշուղական արվեստին վերաբերողները:

<sup>17</sup> Գալուստ Տեր-Մշկրտչյան, Հիշողություններ Կոմիտաս Վարդապետի մասին, «Էջմիածին», 1958, Ը, էջ 47—49:

<sup>18</sup> Հրաչյա Աճառյան, Հուշեր Կոմիտասի մասին, «Էջմիածին», 1969, ԺԲ, էջ 28—26:

<sup>19</sup> Ավետիք Խաճակյան, Կոմիտասի ամման հիշատակին, անդ, էջ 27—28:

<sup>20</sup> Մարտիրոս Սարյան, Կոմիտասի մետ, անդ, էջ 32—33:

<sup>21</sup> Սիլվա Կապուտիկյան, Հայ երածտության Զվարդոնցը, անդ, էջ 38:

<sup>22</sup> Արթոն Հատիտյան, Ս. Էջմիածին և հայ ժողովրդի զավակը, անդ, էջ 3:

<sup>23</sup> Այդ թվում՝ Արսեն Մանուկյանի ու Նելմար Գողահանի գրվածքները, Հ. Գրիգորյանի հուշերը և Ֆիգան Կամսարականի, Արշակ Չուանյանի, Գարեգին Ալոմյանի ու Դերեմիկ Դեմիրճյանի վկացությունները Կոմիտաս Վարդապետի ամձի և գործի մասին:

<sup>24</sup> Հակոբ Սիրունի, Կոմիտասի մետ, «Էջմիածին», 1965 թվականի Ս-ից (էջ 35), տարբեր պարերականությամբ, մինչև 1969 թվականի Ե-ն (էջ 16—28):

ոչ միայն հուշագրության բնագավառում: Ու եթե մի կողմ դնենք գիտա-մատչելի տիպի մի երկու գրվածք<sup>25</sup>, մնացածը կարող ենք դասել տեղեկատու, գիտական ու երաժշտագիտական գրականության շարքը: Տեղեկատու գրությունները շահեկան հաղորդումներ են, ասենք՝ Կոմիտասի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ կազմակերպված ցերեկույթի մասին Սորբոնում<sup>26</sup>, և կամ մահվան 20-ամյակի առթիվ տրված համերգի վերաբերյալ Բույարեստում<sup>27</sup>: Արվեստագետնի Հայաստանան դիվանը հարըստացնող արտասահմանից ստացված նոր նյութերի մասին<sup>28</sup>, և կամ նրա երկերի ակադեմիական հրատարակության ընթացքի վերաբերյալ (Երևանու): Դրանց հարուստ են մի շարք թեև ավելի ծավալուն, բայց երաժշտական կոմիտասագիտության առումով օճանդակ նյութեր, որոնք վերաբերում են Կոմիտասի կերպարին՝ կերպարվեստում և գեղարվեստական գրականության մեջ, կամ ներկայացնում են Կոմիտասի խոհերը և նմուշներ նրա գրական-գեղարվեստական ժամանակության էջերից:

Կոմիտասագիտության համար այստեղ հրապարակումներ են կոմպոզիտորի ինքնակենացրությունը<sup>29</sup> և Կոմիտասի կենսագրությանը վերաբերող, կաթողիկոսական դիվանից քաղված այլ նյութեր, որոնք լույս են ընծայված անհրաժեշտ ծանոթագրումներով հանդերձ<sup>30</sup>:

Բուն երածտագիտական հոդվածները և տարբեր կարգի են: Մի քանիսն ունեն հաղորդման նկարագիր,<sup>31</sup> որիշներ տարբեր-

<sup>25</sup> Այդամիսն են, օրինակ, Սոլավի Մեսրոպյանի հոդվածները՝ «Կոմիտասի ստեղծագործության աղբյուրը և ամոր հայրենասիրությունը», «Էջմիածին», 1952, Ը, էջ 36, և՝ «Կոմիտաս Վարդապետի դրսը խազագրության և հայ եկեղեցական երաժշտության ասպարեզին մեջ», «Էջմիածին», 1958, Ժ, էջ 36:

<sup>26</sup> «Էջմիածին», 1950, Գ—Դ, էջ 88:

<sup>27</sup> «Էջմիածին», 1955, Ը, էջ 80:

<sup>28</sup> «Էջմիածին», 1947, Ե—Զ, էջ 78, 1948, Գ—Դ, էջ 81 և այլն:

<sup>29</sup> «Էջմիածին», 1969, ԺԲ, էջ 87:

<sup>30</sup> Կոմիտաս Վարդապետի ինքնակենացրությունը, «Էջմիածին», 1969, ԺԲ, էջ 6—8:

<sup>31</sup> Գր. Հարությունյան, Կոմիտասի երկու նամակները, «Էջմիածին», 1947, Ե—Զ, էջ 59—68: Եվ նոյնի՝ Կոմիտասի կենսագրությանը վերաբերող նյութեր, «Էջմիածին», 1948, Ս—Բ, էջ 51—62:

<sup>32</sup> Գ. Ղազարովյան, Կոմիտասի ամհայտ երգերը, «Էջմիածին», 1946, Դ—Ե, էջ 42:—Մ. Խեցյան, Կոմիտաս Վարդապետ և իր «Գեղջուկ երգերը», անդ, էջ 45:

վուս են հորելլանական գրվածքի ոճով<sup>33</sup> և այլի<sup>34</sup>: Դատկառելի տեղ են գրավում երաժշտա-բնագրափուական թառյօթի գրվածք-ները, որոնցում վերականգնվում են կոմիտայան ձայնագրությունները, վերծանվում բավկական ձայնանիշներով երա կատարած գրառումները, առանապարակ հրապարակ-վուս երա անսիրա մնացած գործերը և կան պարզաբանվում վաղուց հրապարակածների առաջին տպագրության հանգամանքները: Դրանք ստորագրած են ինքնանձնական են՝ Արտեն Վարդապետ Բերբերյանը<sup>35</sup> և Վ. Սարգսյանը<sup>36</sup>, Ոռքերս Արայանը<sup>37</sup> և Նիկողոս Թամամիջյանը<sup>38</sup>: Տեսական առանձին հոդվածով ներկայացված է նաև Կոմիտասի աշխատակցությունը «Արարատ»-ին, վերլուծված է երանում տպագրված կոմիտայան հոդվածների բովանդակությունը<sup>39</sup>: Այս բոլորը, միասին վեցցրած, Կոմիտասի մասին

<sup>33</sup> Մ. Քրուտյան, Երգական Կոմիտաս Վարդապետը (ծննդյան 90-ամյակի առթիվ), «Էջմիածին», 1959, Զ, էջ 18—28: — Մ. Թումանյան, Կոմիտաս Վարդապետի հավիտնական կերպարը (ծննդյան 100-ամյակի առթիվ), «Էջմիածին», 1969, ԺԲ, էջ 49:

<sup>34</sup> Տեղի է միջանուակեր նաև՝ Կոմիտաս Վարդապետը համաշխարհային երաժշտագունդի գնահատմանը ներկայացնող հոյութ («Էջմիածին», 1969, ԺԲ, էջ 20—22):

<sup>35</sup> Այն ժամանակ դևուն սարկավագ, այժմ՝ հայկական: Հմանութեան Բերբերյան Պատրոս սրբ, Կոմիտաս Վարդապետի և կելեկացաման երաժշտության նվիրված ուսումնամիջությունները և անսիր էջերը, «Էջմիածին», 1962, Բ, էջ 48—56: Նույնի՝ «Կոմիտաս Վարդապետի և կելեկացաման երաժշտության անսիր էջերը», «Էջմիածին», 1962, Զ, էջ 61—63: Բերբերյան Արքա, պահանջանակ, Կոմիտաս Վարդապետի և կելեկացաման երաժշտության անսիր էջերից, «Էջմիածին», 1968, Ա, էջ 47—51:

<sup>36</sup> Կոմիտաս, Այսօր կանգնեցաւ (շարական ընթացքաց աւագ նիմացարթի), ձայնագրությունը Վ. Սարգսյանի:

<sup>37</sup> Ոռքերս Արայան, Կոմիտաս Վարդապետի անտիկ էջերից մնչը («Անձինք նորիկաց», գրի առավ և դաշնակեց նորաձայն խմբի համար Կոմիտաս Վարդապետ), «Էջմիածին», 1961, Բ, էջ 24—28: Տես նաև նույնի՝ Կոմիտասի առաջին տպագրված ստեղծագրությունը (ազգային օրնենք, խոր Արքաշնակի), «Էջմիածին», 1978, Զ, էջ 34—40:

<sup>38</sup> Տես նիկողոս Թամամիջյան, Նշանաբներ հայոց նովուր եղանակների կոմիտայան գրառումներից, «Էջմիածին», 1969, ԺԲ, էջ 56—57: Նույնի՝ նովուր եղանակների կոմիտայան կանխագույն գրառումների վերծանությունը, «Էջմիածին», 1970, Բ, էջ 34—37, Գ, էջ 38—40, Զ—Է, էջ 72—80:

<sup>39</sup> Ն. Թամամիջյան, «Արարատ»-ն ու Կոմիտաս Վարդապետը, «Էջմիածին», 1969, ԺԲ, էջ 60—69: :

գիտելիքների հարուստ միակցություն են պահում անսագրի էջերուն:

XIX—XX դդ. մեր մյուս երաժշտներից կամ իրենց գործունեությամբ երաժշտության հետ ևս ողղակի առնչված դեմքերից ոչ



# Է Յ Մ Ի Ա Ճ Յ Ն Ա Լ Ե Բ Ո Մ

# ETCHMIADZIN ALBUM

1 9 7 1

«Էջմիածին» պայման տիտղոսաթերթը  
(գործ Ակադեմի Գրիգոր Խաչյանի)

մեծ դիմանկարներ են նվիրված Դ. Ղազարյանին, Գ. Ալեմշահին (հոգ չէ, թէ արտադրպության միջոցով), ինչպես և Սահմանագրապետ Ամաստուցուն, որի կյանքն ոգործ լուսաբանող հոդվածում իրավացիութեան շեշտվում է հայ հոգևոր երաժշտության կանոնավորման գործին երա բերած կարևոր նպաստը<sup>40</sup>: Ավելի ընդարձակ գրություն է

<sup>40</sup> Սահմանագրության բնական պահանջանակ, Սահմանագրապետ Ամաստուցուն, «Էջմիածին», 1970, № Դ, էջ 31:

Ամերամեծառ է Ակադեմի, որ Սահմանագրապետ Ամաստուցուն զուտ բանահրական աշխատություններ ևս ոչ միայն ընդմանելու առմամբ շահենական են, այլև այժմանական նշանակությամբ լացում՝ նայում նիմ

Մակար Եկմալյանի կյանքի ուղին,, ստեղծագործական դիմանելար ու ժառանգությունը վեր հանող հոդվածաշարը<sup>41</sup>: Փաստորեն մի մենագրություն, որը տակալին 50-ական թվականներին առարկայորեն գնահատում էր Եկմալյանի տեղն ու դերը հայ երաժշտության մեջ, և որից օգտվել են մեզ մոտ և դրսում<sup>42</sup>:

Երաժշտության հարցերով մասնագիտորեն գրադրությունների համար: Օրինակ՝ «Հին և նոր պարականություն»-ը (Վաղարշապատ, 1911): Մի ամիսով մեմբ նշել էինք, թե մեր առօրյա աշխատաքիմերի ընթացքում պարզեց, որ Հովհաննես Սարկավագ Վարդապետի գրչի վաստակն է ոչ միայն Անոնյամց «Պայծառացան այսօր» երգը, ինչպես կարծվում էր առ այսօր: Ինըն է Բենինակը նաև Անոնյամց «Անձանելի Բանի Աստուած» ու Հոփիսիմյանց «Անձանիզըն Բանն Աստուած» հշանալիր շարականների, ինչպես և Վարդանանց «Անթառամ սիրոյ ծնունդը» ծավալուն կտրոյի, որ պարականուն է մեացել» («Էջմիածին», 1972, ԺԲ, էջ 93—94): Ավելացնենք նաև, որ Հովհաննես Իմաստական յողած ժառանգության մասին ամրոշական պատկերացում կազմելուն առհասարակ խանգարել է մի հանգամանք՝ Հովհաննեսի անվանը միշտարում, տարրեր առիթներով, կցվել են ևս վեց-յոթ տարրեր մականուններ. Սարկավագ, Վարդապետ, Հովետոր, Իմաստաք, Սովիսատու (ինձ հունական ամենադրական իմաստով), Վերշապեն՝ Պուստիկոս, ու նաև Քահանա: Ինչպես պարզվեց հ. Մ. Քեշիշյանի հրատարակած Զմանի ձեռագրերի ցուցակից, հ. Հ. Ուլյանի կատարած ուսումնասիրություններից և Ա. Արքահամբանի աշխատասիրած մենագրությունից, Հովհաննես Իմաստական մի շարք աշխատություններ, այդ թվում և «Բան իմաստութեամ» մեծ քերթված միշտարյան գրչագրերի մեջ իրենց խորագրերում ունեն «Յոհաննու քահանայի» ցուցումներ: Արդ՝ շարականների նողինակների մեջ հայտնի առաջին ցուցակագիրը՝ Սարգսի երեցը, տեղեկացնում է. «ԶՊԱնդեանց Անձանելի Բանի Աստուածն [Ա] Վարդանանց Անթառամ սիրոյ ծնունդըն Յոհաննու քահանայի և ասացեալ»: Վերջինս, որ մի հոյակերտ կատուց է (բաղկացած 144 տողից), ամրոշությամբ հրապարակել է Ամատունի Վերոնիշչալ աշխատության մեջ (թեև առկան բողմելով նողինակային պատկանելության խնդիրները): Եվ այդ հրապարակումն է, որ հնարապորտություն տվեց մեզ մանրակըրկին համեմատելու շարականը «Բան իմաստութեամ» քերթվածի հետ ու հնամովելու, որ բառապաշտությունը, լեզվա-մտածողությամբ ու տաղաչափական արվեստով դրամը իրոք սերտ առնչությունների մեջ են իրար հետ:

<sup>41</sup> Կոմպոզիտոր Մակար Եկմալյան (Արամեր, դիմանելար, ժառանգություն), «Էջմիածին», 1958, Բ—Գ, էջ 52—58, Դ, էջ 59—68, Ե, էջ 50—56:

<sup>42</sup> Մինչև ինկ հոդվածաշարի հրատարակությունից տարիներ վերջ: Տես, օրինակ՝ «Բանքեր Երևանի

Ամսագրում հոդվածներ են նվիրված նաև հին ու միջնադարյան բանաստեղծ-երաժշտների մասին: Դրանցում պարզաբանված են՝ Սահմակ Պարթևի մասնակցությունը հայոց ավանդական ձայնեղանակների կարգավորության գործին ու նրա դերը այդ ձայնեղանակների ուսուցման մեջ, ստեղծած հոգևոր կցուրդ-երգերն ու վերջիններին տեղը հայ Շարակնոցում<sup>43</sup>: Գրիգոր Նարեկացուն ամսագիրն անդրադարձել է «Սայլն աղն իշանէր» տաղի կոմիտասյան գրառման դիտարկման կապակցությամբ<sup>44</sup>: Եվ ներսև Ծնորհալուն՝ մեծ երգչի մահվան 800-ամյակի առնչությամբ: Նշանավոր հորելյանը առիթ հանդիսացավ, որ Ծնորհալու կյանքն ու գործը ենթարկվի համակողմանի քննության, ինչ նրա երաժշտական վաստակը ցուց տրվի համաքրիստնեական, մասնավորապես արևելյան քրիստոնեական արվեստի հետնախորքի վրա<sup>45</sup>: Դարձալ այս առթիվ է, որ ամսագրի խըմբագրությունը որոշեց երաժշտագիտական մի հոդված էլ արտասուրության կարգով տալ<sup>46</sup>, ինչպես և Ծնորհալու «Նորաստեղծեակ»-ը լույս ընծայել երկու մեմերգիչների ու քառածայն խառն խմբի համար մշակումով<sup>47</sup>:

Քանի որ արդեն շշափեցինք կոմիտասյան և շնորհալիական բացաղիկ համարները, նկատենք, որ ամսագիրն ունեցել է հորելյանական ուրիշ թվեր էլ, միշարժան՝ իրենց երաժշտագիտական հյութերով ևս: Այդ հյութերն են՝ «Մայր Աթոռի տպարանը և հայ երգարվեստը» (որում բնութագրված են Վաղարշապատում լույս տեսած երաժշտական աշխատության մեջ իրար հետ:

Համապարամին», 1982, № 2, էջ 221: Եվ կամ՝ Եկմալյանի ծննդյան 110-ամյակի կապակցությամբ Ֆիլադելֆիայում տրված համերգ-օրուցի ծանուցագիրը, որ կոմպոզիտորի կամքի ու ստեղծագործության մասին համարյա բառացի մեջքերումներ կան «Էջմիածին»-ի միշալ համարներից: Sacred Music Concert Knar Armenian Choral Group, presents .The Egmontian mass“ (April 9, 1967, Philadelphia, St. Clement's episcopal Church).

<sup>43</sup> Ն. Թաթմիզյան, Սահմակ Պարթևը և նայ եկեղեցական երգարվեստը, 1978, Ը, էջ 9—19:

<sup>44</sup> Ռ. Աթարան, Գրիգոր Նարեկացու «Սայլն աղն իշանէր» տաղի կոմիտասյան ձայնագրության մասին, «Էջմիածին», 1966, Դ, էջ 85—89:

<sup>45</sup> Ն. Թաթմիզյան, Ներսև Ծնորհալին և արևելյան քրիստոնեական երգարվեստը, «Էջմիածին», 1978, ԺԲ, էջ 110—119:

<sup>46</sup> Ռ. Աթարան, Ներսև Ծնորհալու «Վարդանանց նորահրաշը» Եկմալյանի և կոմիտասի մշակմամբ, ան, էջ 100—109:

<sup>47</sup> Ներսև Ծնորհալի, Նորաստեղծեակ, մշակումը՝ Ն. Թաթմիզյանի, ամդ, էջ 120—124:

կան ու նաև երածտական խնդիրներ շոշափող հրատարակությունները<sup>48</sup>: «Համառոտ ժամանակագիր սովորական երածտական կյանքի» (որ տրված է 1920-ից մինչև 1960-ական թվականների վերջերն ընկած ժամանակահատվածի ժողովրդա-ազգային երածտական մշակույթի հագեցված պատկերը Հայութանում)<sup>49</sup>, «Արարատ»-ն ու երգ-երածտության հարցերը» (որտեղ, որքան մեզ հայտնի է, հայ երածտագիտության մեջ առաջին անգամ պատմա-տեսական քննության լույս տակ վերլուծվում և գնահատվում են մի հանդես՝ «Արարատ»-ի էջերում նրա գոյության ողջ ընթացքում տպագրված ու երգ-երածտությանը վերաբերող հաղորդումները, հոդվածներն ու ուսումնակիրությունները)<sup>50</sup>, վերջապես՝ «Հուշամատյանների Բնորերով» (որ Մեծ եղեռնի 50-ամյակի առիջի փորձ է արված պրադուել, գտնել, ի մի բերել և շափել ու կշեն մեր երածտա-ազգագրական ու երածտա-մշակութային վիթխարի կորուանները)<sup>51</sup>, և «Ուկան վարդապետն ու խազագրության արվեստը»<sup>52</sup>: Սրանում հայ պաշտոներգության ուշ միջնադարյան վիճակի ընդհանուր հետևախորքի վրա պատկերվում է նաև խազագր առաջին տպագիր Շարակենցի ու Ժամգրքի հրատարակի Ուկան վարդապետը, տեսականորեն իմաստավորվում են նրա կատարած խազագիտական միանգամայն ուսանելի աշխատանքները<sup>53</sup>:

<sup>48</sup> «Էջմիածին», 1972, ԺԲ, էջ 89—97:

<sup>49</sup> «Էջմիածին», 1967, Ժ—ԺԱ, էջ 108—110:

<sup>50</sup> «Էջմիածին», 1968, ԺԱ—ԺԲ, էջ 84—90, 1969, Գ, էջ 37—40, Ե, էջ 44—48: Արև շարումակությունն է փաստորմ «Արարատ»-ն ու «Կոմիտաս Վարդապետը» հոդվածը ևս (1969, ԺԲ, էջ 60—69):

<sup>51</sup> «Էջմիածին», 1965, Բ—Դ, Ե—Լ, 1966, Ը, Թ—Ժ, 1968, Ա: Հորվածաշարքը պահտված չէ: Քննված են Ուրբա, Տիգրանակերտ, Հայմի, Տարոն (Բոլյամի, Խնուս, Մուշ, Բաղեց), Վաս-Վասպուրական (Արենեց, Արծնե, Խլաթ, Վաս, Գավաշ, Մուկս, Շատախ), Բարձր Հայք (Բաքերո, Սպեր, Կիսկիմ, Թորոյում, Խոստոքոյ, Եղովնա, Կարիմ), Համեն, Տրապիզոն, Ասմոն, Մարզվան, Ամասիա, Եղրոկիա, Սերասիա, Շարիթ-Գարսիանար, Խարքեր (Չմշշկագ, Զերուշ, Մալաթիա, Արարկիր, Բալու, Ակն և բուն Խարքերդ): Հարմար առիթով շարումակելու ներք հոդվածաշարը:

<sup>52</sup> Ե. Թահմիթյան, «Էջմիածին», 1966, ԺԱ—ԺԲ, էջ 159—167:

<sup>53</sup> Ավելացնեմք, որ ուշ միջնադարն, ընդհանրապես առած, առանձին որից կովաններ են է պամի արդի խազագիտության համար իսկ ուսանելի ու աշըմեական նշանակությամբ: XV դարի սկզբներին Հովհաննես գրիչն իր ընթօրինակած Հայութավորքի հիշատակարամում մի քանի խազագրերի մասին

ի վերջո՞ւ պատմական, տեսական թե երածտա-բանակիրական բնույթի մի այլ խումբ գրվածքներ եւ իրենց բազմազան բովանդակությամբ գալիս են ամբողջացնելու երածտագիտական հոդվածների ընդհա-



Մատենագետ Հակոբ Անապան

մտցեր է հայտնում, որոնցից ուշագրավ է «խուն»-ի մերաբերյալ ավածը: «Եսկ արդ, ով նոգի իմ և քաղցրիկ եղբայր, —քացատրում է գրիշը, —իմացիր և զայս: զի զիսունց որ եղի ի ամայ, զիսունարի և զրացր բանն ցուցանե» (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 4884, էջ 580թ): Սրանց դժվար չէ հնուսցնել, որ տվյալ խազագրի նշանակության եղեւ վշային կողմը կապված է մեղմ, վարդմթաց շարժման: Ծրելերը, որ ութ-ձայնի սկսվածքների և խազերի մասին գրել են օգտվելով XVII դարում Ամստերդամում ապրած և գործած հայ վարդապետների ցուցմունքներից, «խուն»-ը թարգմանում է «tristum» (J. Schröder, Thesaurus Linguae Armenicae, Amstelodami, 1711, էջ 244): Սա, նախորդ ասութիւնում համաձայնվելով, նշում է միշյալ վարդմթաց շարժման համապատասխան կառուցվածքը: Վիլյուն, Բայկական խազագրերի կլնէշային նշանակությունը ստացելով ըստ Կամիրեի նայկական նկեղեցու դպրավետի կատարմաների, «խուն»-ի մասին ասում է, թե օրինակը, որ երգով ցուցադրվեց իրեն այլ խազի կապակցությամբ՝ եր երեք ձայնից բաղկացած համգիտ իջնող, բնույթի տիպի մի պատուս. (M. Villoteau, Description de l'Egypte, t. 14-եղեց, Paris, 1826,

նոր պատկերը: Անա՝ «Ութ-ձայնի սկզբածքները»<sup>54</sup>, որն իր մի ճայրով մոռնում է համեմատական երաժշտագիտության հար-

## Հ Յ Ս Խ Ր Ո Ւ Ե Բ Ի Ն

# ՀԱՅ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն Ո Ր Ի Մ Ե Ն Հ Ո Ղ Ի Վ Ր Ա

- -

## Ն Ի Կ Ո Լ Ա Յ Ո Ր Գ Ա



Ա Ս Ա Յ Ր Ա Յ Ո Ր Ո Ր Ո Ր Ե Զ Մ Ի Ա Ծ Ի Ն  
1966

ր 330); Աքայանը նույնպես «խունճի» ելմէշային գորովայումը փնտրելի կանգ է առնում «դեպի վար տերցիալին ներացք» վրա: Նա չի անդրադառնում խապիս շափական արժեքի իներին: Եվ նրա թերած 50-ից ավելի օրինակներում բացարձակ գերակշռություն ունեն շափական մեկից ավելի, երկու և երկու սիրտի միջև ամենամեծ արժեքը օրինակները (տես նրա «Հայկական խազային նաուարությունը», Երևան, 1959, էջ 248): Ե. Տեսնեպանը «խունճ» դասում է շափական մեկ միավորի արժեքով նշանների կարգը (տես նրա «Նկարագիր երգոց Հայաստանացու նկուղություն», Կ. Պոլիս, 1874, էջ 23—24): Մեր որոնումները բերում են այն համոզման, որ «խունճ»-ի ստաշնային գորովայունն է՝ ելմէշային վերը նշված բովանդակությունը, շափական մեկ միավորի սահմաններում, որում կշուրացին գծագրի որոշումը բովանդակած է կատարողի հայեցողությանը:

<sup>54</sup> «Էջմիածին», 1972, Բ, էջ 28—34, Գ, էջ 23—26, Դ, էջ 40—43, Ե, էջ 48—47:

երի ոլորտը, հայ հոգևոր եղանակների էջմիածնական մի քանի տարբերակների վրա ուշադրություն հրավիրող հոդվածը<sup>55</sup>, որ շահեկան է իր շոշափած խնդրով, հասարակ և հանդիսավոր օրերի կանոնագլուխների բաղդատական վերուծությանը նվիրված ուսումնասիրովունը<sup>56</sup>, հայկական միջնադարյան «նոտագրության» (ավելի ճիշտ կլիներ ասել՝ երաժշտական նշանագրության) տարբեր համակարգերը (կամ հատվածները) ցուց տվող հոդվածը<sup>57</sup>, Հարության ավագ օրինություններն ու դրանց հենիսակային պատկանելության հարցը քննող մենագրական հետազոտությունը<sup>58</sup>, հայ միջնադարյան երաժշտական գեղագիտության խնդիրները բարձրացնող հոդվածը<sup>59</sup>, որում հատկանշական փաստերի հիման վրա հաստատագրվում է այն հետևողությունը, որ «միջնադարում հայկական գեղագիտությունը ոչ միայն հետ չէր մնում միջնադարյան քաղաքակրթված մյուս երկրներում զարգացող նույն գիտությունից, այլև աչքի էր ընկնում հույժ ինքնատիպ մի շարք գծերով, իր մեջ օրգանապես զուգորդելով մոքերի՝ և Արևոտքին հատուկ կարգապահությունը, և Արևելքին հատուկ հարստությունն ու խորությունը»:

Եզրափակելով, հարկ է ընդգծել նաև, որ, ի տարբերություն ուրիշ շատ հանդեսների, «Էջմիածին»-ը հետատեսորեն իր էջերը տրամադրում է երաժշտական բնագրերի հրատարակությանը ևս: Դրանք բաժանվում են երեք կարգի: Եկեղեցական միաձայն երգեր՝ գրառված Եվրոպական ձայնանիշերով, որպիսիք բերված են երաժշտա-տեսական շատ հոդվածներում<sup>60</sup>, հոգևոր ստեղծագոր-

<sup>55</sup> Բերբերյան Արսեն ծ. Վրու, Ակնարկ ս. Էջմիածին հատուկ մի քանի հոգևոր եղանակների մասին, «Էջմիածին», 1978, Դ, էջ 25—30:

<sup>56</sup> Ն. Թամիմզյան, Հասարակ օրերի կանոնագլուխները, «Էջմիածին», 1971, Դ, էջ 37—50: Նոյնի՝ «Հանդիսավոր օրերի կանոնագլուխները», «Էջմիածին», 1971, Թ, էջ 11—47, ԺԱ, էջ 38—40:

<sup>57</sup> Ռ. Աքայան, Հայկական նոտագրության միստերի մասին, «Էջմիածին», 1959, Ե, էջ 41—45:

<sup>58</sup> Ն. Թամիմզյան, Սյունեցի համանուն երկու երաժշտանք և Հարության ավագ օրինությունները, «Էջմիածին», 1973, Բ, էջ 29—48:

<sup>59</sup> Նոյնի՝ «Էջեր հայկական միջնադարյան երաժշտական գեղագիտությունը» (X—XV դդ.), «Էջմիածին», 1968, ԺԱ, էջ 47—57:

<sup>60</sup> Հատկապես ընդգծելի հրապարակումներ են՝ ութ-ձայնի սկզբածքները վերօնիշայլ նույնանուն ուսումնասիրության վերջում, ութ-ձայն կանոնագլուխները (երկու շարքով՝ սովորական և հանդիսավոր օրերի համար), և Հարության ավագ օրինությունները՝ դարձյալ ութ-ձայնում:

ծությունների մերդաշնակումներ, որոնք կատարել են Խ. Մելիսանեջյանը, Ռ. Աթայացը, Օ. Դուրյանը, Ն. Թահմիջյանը, Ալ. Հարությունյանը<sup>61</sup>, և ինքնուրույն առեղծագործությունները<sup>62</sup>, ինչպես օրինակ՝ կոմպոզի-

տոր Ալ. Հարությունյանի հորինած «Զոն»-ը՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 60-ամյակի առթիվ<sup>63</sup>:

Այս ամբողջ հարստությունը դեռևս անհրաժեշտ է ոստիմասիրել շատ ավելի մանրամասնորեն ու գնահատել՝ անպայման տարբերացված մոտեցումով:

<sup>61</sup> Տե՛ս «Եշմիածին», 1968, Գ, էջ 20—22, 1969, Դ, էջ 23—25, 1965, Ե—Զ—Է, էջ 114—117, 1974, Է—Ը, էջ 98—102:

<sup>62</sup> «Եշմիածին», 1968, Բ, էջ 45—48, 1965, Բ—Գ—Դ, էջ 188—195:

<sup>63</sup> «Եշմիածին», 1968, Ժ, էջ 5—7:





## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Փետրվարի 2-ին, կիրակի.—Գ կիրակի  
զենի ծննդեան.**

Սյաօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Վազգեն վրդ. Թաղոյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

Նոյն օրը ս. Հոփիսիմե տաճարում քահանայական իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում տ. Հովսեփ քին. Հակոբյանը և «Հայր մեր»-ից առաջ խոսում իր ուխտի քարոզը՝ «Ես եմ հովին քաջ, հովի քաջ զանձն իր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովի. Ժ 11) բնաբանով:

\* \* \*

Նոյն օրը Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում քահանայական իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում տ. Թաղեռս քին. Ալվագյանը:

\* \* \*

**Փետրվարի 3-ին, երկուշաբթի.—Սյաօր Մայր տաճարում արեղայական իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում տ. Թորգոն արեղա Մուշեղյանը:**

**Փետրվարի 6-ին, հինգշաբթի.—Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին.**

Սյաօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քին. Մարտիրանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մամ ոչ իմացեալ մամ է, մամ իմացեալ՝ անմահութիւն» (Եղիշե) բնաբանով:

Քարոզիչ տեր Բայրը հավատացյալ ժողովրդին է ներկայացնում Վարդանանց հերոսամարտի համառու պատմությունը, ապա շեշտում հայ ժողովրդի այն քարձը գիտակցությունը, որով հանուն հավատի և հայրենյաց համատակությամբ կարելի է հասնել անմահության:

Ս. պատարագի ավարտին Խշման ս. սեղանի առաջ հանդիսավորապես կատարվում է հայրապետական մալթանը՝ նվիրված Նորին Վեհափառություն Տ. Տ. Վազգեն Ս. Ամենայն Հայոց Սրբազնագույն կաթողիկոսի անվանակոչության տոնին:

\* \* \*

Նոյն օրը, օրվա սոնի առիթով, Երևանի ս. Զորավոր եկեղեցում պատարագում է Մայր Ալոռի միաբան տ. Վազգեն վրդ. Թաղոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում

«Փրկութիւն արդարոց ի Տեառնէ է, վերակացու է նոցա ի ժամանակս նեղութեան» (Սաղմ. ԼԶ 39) բնաբանվ:

Քարոզում հայր սուրբը շեշտում է այն միտքը, որ Աստված օգնում է այն մարդկանց, որոնք հոգևոր, բարդական ու մարդասիրական բարձր իդեալներ ունեն: Հայ ժողովուրդը եղել է միշտ իր հավատքի և հայրենիքի գաղափարապաշտը, նույնիսկ ամենածանր օրհնաւական օրերին, միշտ գիտակցելով, որ առանց հավատքի և հայրենիքի որևէ ազգ չի կարող գոյատել: Այդպիսի հերոսական պալքարի մի փայլուն օրինակ է Վարդանանց հերոսամարտը: Եվ այսօր ս. Վարդանը իր հետևողաբերում հրցվում է արքայության լուսավոր կամարների ներքո՝ տեսնելով հայ ժողովորի այսօրվա փառավոր հերկան և ե՛լ ավելի փայլուն ապագան:

\* \* \*

Նույն օրը, ժամը 13-ին, ս. Վարդանանց տոնի կապակցությամբ, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահիճում տեղի է ունենում տոնակատարության հանդես՝ հայագահությամբ Մայր Աթոռի լուսարարացես տ. Հովհաննես Առաքելյան: Սահմուրյանի:

Նախագահության սեղանի շորջ տեղ էին գրավել նաև տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Գեւորգ, տ. Արիս Կայսիկոպոսները:

Հանդեսը սկսվում է Հայաստանի պետական հիմնի նվազով, որին հաջորդում է «Տեմարանի քայլեր» խմբերը:

Բացման խոր է ասում հոգևոր ճեմարանի տեսուց տ. Հովհաննես ալիք քին. Մարտիրյանը՝ ոգեկոչելով Վարդանանց և Ղետինյան հիշատակը:

Օրվա հիմնական խորհրդին նվիրված գրավոր զեկուցումով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի քարտուղար-դասախոս Բարսեղ Թաշճյանը:

Հարգելի բանախոսը նախ շեշտում է, որ «Եթե մինչև այսօր մեր ժողովուրդը ոգելորությամբ և հպարտությամբ է տոնել, և այսուհետև էլ տոնելով է Ավարայրի դաշտում զոհված նահատակների հիշատակը, այդ նոր համար է, որ Վարդանանց պատրիազմը խորհրդանշան է ազգային արժեքները և սրբությունները, հայրենիքը և խորհմանքը ազատությունը՝ պաշտպանելով համար հայ ժողովորի մղած հերոսական անհավասար մարտնչումների»:

Սահմուրեսն բանախոսը հանգամանորեն վերլուծում է Վարդանանց ապատամբության նախադրյալները և դրապատճառներն ու անում հետևյալ եզրակացությունը:

«Ավարայրում պարտվեցին հայերը. զոհ-

վեցին Վարդանն ու իր ընկերները, 1036 հոգի՝ գիտակցելով, որ իրենց նահատակությամբ հաղթելու է գաղափարը, ոգին:

Եվ այդ հիմաստով նրանք հաղթանակեցին:

Այդ ոգով է ոգեշնչվել հետագա դարերին հայ ժողովուրդը, երբ ամեն անգամ գալարվել է իրար հաշորդող անօրենների կրունկների տակ ու զրահավորվել, երբ հարկ է եղել մարտնչել իր ազգությանը և գոյությանը սպառնացող աղետների դեմ:

Այդ ոգին ներշնչել ու թևավորել է հայ ժողովուրդի զալակներին, մեր արվեստագետներին ու երաժշտներին, մեր վիպասաններին ու բնաւողեղներին:

Հայ ժողովուրդի զավակների համար Վարդանանք և Ղետինյանք մարմնավորումն են մեր ազգի գաղափարականի, որի մեջ պատկերվել է առաքինությունը, հավատքը, հովոր: Վարդանանք և Ղետինյանք խտացումն են արիության այն բոլոր դրվագների, որոնցով այնքան հարուստ է մեր պատմությունը:

Սուանց այդ գաղափարականի և ոգու չի լինի հայ ժողովուրդը:

Վերջում օրվա բանախոսն ավելացնում է.

«Վարդանանց և Ղետինյանց այս սունի առթիվ պարտք ենք համարում հիշել, որ այսօր տոնն է անվանակություն ազգին Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Տ. Վազգեն Ա կայողիկոսի, մարմնացումը Ղետինյան հոգևորականության:

Ծնորհավորում ենք ու սրտագին մաղթում, իր գահակալության 20-րդ տարեդարձի առթիվ, որ Աստված երկար կյանք տա Նորին Սուրբ Օծությանը, որպեսզի այսուհետև ևս, Ղետինյան նույն ոգով, շարունակի առաջնորդել Հայաստաճայց առաքելական սուրբ եկեղեցին ու հայ ժողովուրդին՝ դեպի ավելի պայծառ ապագա:

Թող անսասան մնա Մայր Աթոռ և Էջմիածինը, որով շնչում և ապրում է հայ ժողովուրդը, որ ի Հայաստան և որ ի ավյուն աշխարհի:

Թող Աստված անփորձ պահի մեր սիրեցյալ Հայրապետին»:

Բանախոսություններ հետո գործադրվում է գեղարվեստական կոկիկ մի հայտագիր՝ հոգեվոր ճեմարանի ուսանողության կատարմամբ:

Հանդեսի վերջում օրինության խոր է ասուց տ. Հովհաննես Առաքելյանը:

Հանդեսն ապարտվում է միաբերան երգված Տերունական աղոթքով և «Պահպանչ»-ով:

\* \* \*

Փետրվարի 9-ին, Կիրակի. — Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, և պատարագ է մատուցում տ. Հովհաննիք քիչ քիչ։ Հակոբյանը։

«Հայր մեր»-ից առաջ իր անդրանիկ քարոզն է խոսում տ. Թորգոն արեղա Մուշեղյանը՝ «Ծանաչել զիմաստութիւն և զիրատ, իմանալ զրան հանձարոյ» (Առակաց Ա. 1) քննարանով։

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը։

\* \* \*

**Փետրվարի 11-ին, երեքշաբթի։—Այսօր,** երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի ներթական հիմունք՝ հայագահությամբ Վեհափառ Հայրապետի։

\* \* \*

**Փետրվարի 12-ին, չորեքշաբթի։—Այսօր,** երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում տեղի է ունենում միարանական ներթական հավաքույթ, որի ընթացքում քննարկվում են տ. Թորգոն արեղա Մուշեղյանի, տ. Հովհաննիք քիչ։ Հակոբյանի և տ. Թադեոս քիչ։ Ավագյանի անդրանիկ քարոզները։

\* \* \*

**Նոյն օրը, առավոտյան, Մայր տաճարում** հանդիսավորապես սկսվում է պաշտվել Արեկազարի ժամերգության կարգը, որին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը։

\* \* \*

**Փետրվարի 18-ին, հինգշաբթի։—Նախատունակ Տեառնընդառաջի։**

Այսօր երեկոյան Մայր տաճարում հանդիսավորությամբ պաշտվում է երեկոյան ժամերգության և հայատունակի կարգը, որոնց ներկա է լինում Վեհափառ Հայրապետը։

Ժամը 19.30-ին մարզադաշտում տեղի է ունենում Տյառնընդառաջի ավանդական հրավառության հանդեսը։ Խարույկը վառում է Վեհափառ Հայրապետը՝ ներկաների ծափերի և ողջունների ներքո։

Ժամը 20.30-ին միարանական սեղանատանը տրվում է ընթրիք, որին մասնակցում են Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միարանությունը, հոգևոր մեմարանի դասախոսությունը ու ուսանողությունը։

\* \* \*

**Փետրվարի 14-ին, որբաք։—Տեառնընդառաջ։ Տօն քառանօրենակ Գալստեան Քրիստոսի ի տաճարն։**

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Եղիշիկ արեղա Պետրովյանը։

\* \* \*

**Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում** հանդիսավորապես կատարվում է հոկտեմբերի արարողությունը, որին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը։

\* \* \*

**Փետրվարի 16-ին, կիրակի։—Բ. Կիրակի Քառանօրդական Պահոց (Արտաքսման)։**

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Թորգոն արեղա Մուշեղյանը։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ քրիստոնեական քարոյակրթական անհրաժեշտության մասին։

\* \* \*

**Փետրվարի 19-ին, չորեքշաբթի։—Այսօր,** երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում տեղի է ունենում միարանական ներթական հավաքույթ, որի ընթացքում Հնդկաստան աշխարհի և Արա ծղողվորդների մասին հանգամանայից գեկուցում է կարդում տ. Վազգեն վոր. Թադեոս անը։

Հավաքույթին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը։

\* \* \*

**Փետրվարի 28-ին, կիրակի։—Գ. Կիրակի Քառանօրդական Պահոց (Անառակին)։**

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Հակոբ քիչ։ Հակոբյանը։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Արիս եպս. Ծիրվանյանը՝ «Հայր մեղայ յերկինս և առաջի քո» (Ղոկ. ԺԵ 21) քննարանով։

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը։

\* \* \*

**Փետրվարի 27-ին, հինգշաբթի։—Այսօր** Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում ՍՍՀՄ առողջապահության մինիստրության մանկարարձության գծով մինիստրությունը տեղակալ Ելենա Նովիկովան։

Վեհափառ Հայրապետի և հարգարժան հյուրի միջև տեղի է ունենում գրուց՝ միմյանց նետաքրքրող մի քանի հարցերի շորջ։